

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ
ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

ВАРАГ АРАКЕЛЯН

ФОНЕТИКА СОВРЕМЕННОГО
АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ
ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

**Տպագրվում է Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:**

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը ձեռնամուխ է եղել ժամանակակից հայերենի քերականության և ընդհանրապես նրա կառուցվածքի ուսումնասիրմանը: Լեզվի կառուցվածքին վերաբերող զանազան հարցերը ներկայացվում են առանձին մենագրական ուսումնասիրությունների ձևով: Արդեն հրապարակվել է այդ շարքից Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» ուսումնասիրությունը: Վ. Առաքելյանի ներկա ուսումնասիրությունը նվիրված է ժամանակակից հայերենի հնչյունաբանությանը, որին հետևելու են քերականական կառուցվածքին վերաբերող այլ ուսումնասիրություններ:

Լեզվի ինստիտուտ

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Հայոց լեզվի հնչյունները ուսումնասիրված են համեմատական լեզվաբանության ընձեռած տվյալների հիման վրա. այդ ուսումնասիրությունն ունի ընդհանուր բնույթ. որովհետեւ փաստորեն կատարված է հնդեվրոպական լեզուների հնչյունների համեմատությամբ: Մեր կենդանի լեզվի հնչյուններն իրենց արտասանական բազմազան կոմբինացիաներով ու մանրամասներով դեռեւս մնում են առանց հետազոտության: Այսպիսի մանրամասն և էքսպերիմենտալ քննությունը կարեւոր դեր կարող է խաղալ հայերենի հնչյունափոխական՝ դեռեւս չմեկնարանված մի շարք օրինաչափությունների, կամ մասնակի հնչյունափոխական երեւոյթների պարզարանման համար: Լեզվաբանների կողմից նկատվել է, որ Կ և Վ բաղաձայնները ու, ի ձայնավորներից առաջ միատեսակ չեն հնչվում. ի-ից առաջ առն Վիափկանում», այսինքն՝ քմայնանում է: Նշվում է նաեւ, որ հայերենի Բ-ն -ությունն ածանցով կազմված բառերի մեջ փափկանում և մոտենում է ց-ին: Այսպիսի «փափկացում» վաղուց նկատված է մեր գ, կ, ք ետհալեզվային բաղաձայնների նկատմամբ, երբ սրանք նախորդում են ի, ե, յա, յո հնչյուններին ու հնչյունախաղաղություններին: Վերոհիշյալ ետհալեզվային պայթականների միջնալեզվայնացումը այնքան է ուժեղացել, որ այդ հնչյունները մեր մի շարք խոսվածքներում նոր որակ են տվել. օրինակ՝ գուղ-ջուղ, ջեղ, քեռի-չեռի (Աշտարակ): Իսկ այս փոփոխությունը համաբանությունում կարող է տարածվել հիշյալ պայթականների վրա, նույնիսկ այնպիսի դեպքերում, որտեղ գրանք պիտի մնային անփոփոխ:

Մեր ազգային լեզվում ներկայումս կատարվող նման փոփոխությունները դեռևս մնում են չուսումնասիրված, ուստի հանգամանալից դիտողություններն ու հնչյունների ու մասնակի չափումները կարող են բացահայտել նոր առաջացող և մեռնող մի շարք երևույթներ. օրինակ՝ պետք է նկատել, որ հայոց լեզվի զարգացման որոշ էտապում խուլ-շնչեղացած բ, գ, դ, ձ, ձայնեղներն այժմ աստիճանաբար վերաձայնեղանում են. ումանք կործնում են, որ սա գրքի ազդեցություն է, բայց դա քիչ է հավանական. նույնիսկ քաղմաթիվ դեպքերում այդ հնչյունների խուլ-շնչեղ արտաբերությունը կեղծ ու արհեստական է թվում, և աստիճանաբար վերանում է նման արտասանությունը:

Մեր լեզվի հնչյունների այդպիսի մանրամասն ուսումնասիրությունը պահանջում է տեական ժամանակ, ոտը լսողություն, հնչյունական նրբությունները տարբերելու ունակություն, որին կարող է օգնել մագնիտոֆոնի օգործիքը: Միայն այսպիսի նախնական աշխատանքներից հետո հնարավորություն կստեղծվի ոչ միայն հնչույթների մանրակրկիտ ու ճշգրիտ նկարագրություն կատարելու, այլև դրանց մասնակի արտահայտությունների՝ հնչյունների խորաբերական առանձնահատկությունները ի հայտ բերելու:

ՀԱՉՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՉՅՈՒՆ ԵՎ ՀՆՉՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանություն մեջ հնչյունի և հնչույթի հասկացությունները որոշակի կերպով տարբերվում են: Այս տարբերությունները պայմանավորվում են հասարակական և ֆիզիոլոգիական գործոններով:

Յուրաքանչյուր ազգային լեզու ունի իր որոշակի հընչյունական համակարգը՝ հաստատված ու օրինականացված գրություն հատուկ նշաններով: Գրության նշանների քանակը մեզ ծանոթ չափ լեզուներում բավական սահմանափակ է և 40-ից չի անցնում: Ռուսերենում այդ նշանների թիվը հասնում է 32-ի, հայերենում՝ 39-ի, համարյա նույնքան են՝ մի քիչ ավելի կամ պակաս, ֆրանսերենում, անգլերենում և եվրոպական ուրիշ լեզուներում: Այս նշանները, որ կոչվում են տառեր, տվյալ լեզվով խոսող հանրության կողմից գիտակցված, հասարակականորեն օրժեքավորված ու ընդունված հնչույթների գրային պատկերներն են: Սակայն յուրաքանչյուր խոսող հանրության առանձին անդամներ այդ հնչույթները ստույգ միանման չեն արտաբերում: Միանման այդպիսի արտաբերություն, որ չունենա այս կամ այն մարդու մոտ որևէ չնչին տարբերություն, չի կարող գոյություն ունենալ: Յուրաքանչյուր անհատ, ըստ իր ֆիզիոլոգիական առանձնահատկությունների խոսողության պրոցեսի մեջ (նաև կապված խոսողի տրամադրություն, շրջապատի, նյութի և այլ հանգամանքների հետ) հնչյունները արտաբերում է նուրբ տարբերություններով, որոնք սակայն սովորական ականջով չեն ըզ-

գացվում, և մեզ համար դրանք մնում են իբրև միևնույն հնչյունն ի նույն արտաբերությունը: Սովորական ականջով տարբերում ենք միայն այն ժամանակ, երբ խոսողը ունի արտաբերական օրգանների պակասություն, կամ այն այլևայլ պատճառներով արհեստականություն է մտցնում իր արտասանվածքի մեջ, մի բան, որ կյանքում պատահում է: Սակայն հիշյալ մասնակի արտաբերությունները կամ չեն ընկալվում ականջով և կամ, եթե ընկալվում են, հանրության կողմից մերժվում են որպես ոչ-ընդունված և ոչ-պարտադիր արտասանական նորմա, այլ իբրև սխալ կամ թերի արտաբերության երևույթներ, որոնք մնում են իբրև ընդունված հնչույթների մասնակի դրսևորումներ՝ առանձին անհատների մոտ:

Անկախ խոսողների տրամագրությունից, միջավայրից, խոսելու նյութից և այլ արտաքին հանգամանքներից, հընչական մասնակի և բազմազան տարբերություններ են հանդես բերում տվյալ լեզվի հնչյունները հնչյունական այլևայլ շղթայակցումների ու բազմազան դիրքավորումների պայմաններում: Հնչյունը խոսքի մեջ հանդես չի գալիս միշտ միևնույն հնչյունների հարևանությամբ. նա մտնում է հազարավոր, իրարից միանգամայն տարբեր, շղթայավորումների մեջ, որոնք հենց միայն խոսողի մոտ տվյալ հնչյունի արտաբերության մեջ ստեղծում են այնքան արտասանական վարիանտներ, որքան շղթայավորումներ գոյություն ունեն: Սակայն հիշյալ բազմազան վարիանտները նույնպես սովորական լսելիքով չեն զգացվում, հասարակականորեն չեն ընդունվում և չեն արժեքավորվում: Այդ ամենը դիտվում են միայն տեսականորեն և առանձին գործնական նշանակություն չեզվի համար չեն ներկայացնում: Նույնիսկ այնպիսի ակնհայտ հնչյունափոխություն, ինչպիսին է գ, կ, ք հնչյունների քմայնացումը՝ ի, ե, յ հնչյուններից առաջ, հայ հասարակության կողմից չի գիտակցվում. ամեն հայի համար կաք և կնր բառերի մեջ գոյություն ունեցող տարբեր կ-երը միևնույն հնչույթ են

ներկայացնում և նույնիսկ հաճախ դժվարություններ է տարբերություններ ըմբռնվում: Տարբերությունը զգալի է դառնում, երբ կաթ բառը հնչում ենք կյաթ, իսկ կին բառի մեջ նույն կ-ն որպես այդպիսին չի ընկալվում: Հիշյալ բոլոր տարբերությունները մնում են որպես չգիտակցված, չարժեքավորված տարբերություններ, որոնք մի միջին ընդհանուրի բազմաառնակ դրսևորումներն են. իսկ հենց այդ միջին ընդհանուրն է, որ սահմանափակ է և բոլորի կողմից ընդունված ու ճանաչված: Ուրեմն հնչյունական այն միավորը, որ տվյալ լեզվով խոսող հանրության համար ընդհանուր է, հասարակականորեն գիտակցված ու պատմականորեն արժեքավորված, կոչվում է հնչույթ. իսկ հնչույթի արտաբերման մասնակի ու անհատական հազարավոր դրսևորումները կոչվում են հնչյուններ: Հնչույթներն ունեն որոշակի սահմանափակ քանակ և, ինչպես ասվեց, նրանց տառային նշանները օրինականայված ու հաստատված են գիր ու գրականություն ունեցող ամեն մի լեզվում, իսկ հնչյունների քանակը անսահմանափակ է և ոչ միայն պետք չկա դրանց համար տառային նշաններ ստեղծել, այլև անհնարին է:

Լեզուներում հնչույթները հանդես են գալիս նույնիսկ որպես բառերի ու քերականական ձևերի տարբերակող նշաններ, իսկ հնչյունները այդպիսի ֆունկցիաներ չունեն: Երբ հնչյունն իր հնչական բազմազանություն մեջ մի որևէ ուղղությամբ փոխվում է և զգալի կերպով հակադրվում է իր միջին ընդհանուր որակին, այսինքն՝ հնչույթին, և հասարակականորեն ընդունվում է ու գիտակցվում որպես նրանից անկախ ու առանձին միավոր, դառնում է հրնչույթ և դարձյալ ստանում է արտասանական մասնակի բազմաձևություն:

Հայերենում հնչույթները թվով 36 են, որոնցից 6 ձայնավորներ և 30 քաղաձայններ: Ձայնավորներն են՝ ա, է, ը, ի, ու, օ, իսկ քաղաձայնները՝ բ, գ, դ, զ, ք, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, դ, ֆ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ, ա, ր, ց, փ, ք, ֆ:

Բացի վերոհիշյալ նշաններից հայերենի այբուբենում կան նաև ե, ո տառերը, որոնք առանձին հնչույթների¹ նշաններ չեն, մի ղեպքում դրանք համապատասխանորեն հանդես են գալիս իրրե յ, է, և վ, օ հնչույթներից բաղադրված երկհնչյունների նշաններ, մի այլ ղեպքում չեն տարբերվում է, օ ձայնավորներից:

Մանրություն. Գրաբարում դրանցից ե-ն առանձին հնչյուն էր և որոշակի տարբերվում էր է-ից ոչ միայն հնչմամբ, այլև հանդես էր գալիս որպես բառեր և քերականական ձևեր տարբերակող նշան, օրինակ՝ մեզ-մէզ, սեր-սէր, պետ-պէտ(ք) և այլն: Այս երևույթը արարատյան շատ խոսվածքներում դեռևս շարունակվում է: Մեր խոսվածքում (Կոտայք, Եղորման) որոշակի տարբերվում է մեր (мѣр), մէր (մայր), սեր (կաթի) և սէր (любобь) ու նման բառերի արտասանությունը: Ինչ վերաբերում է ո-ին, ապա գրաբարում դա օ հնչույթի նշանն էր, հետագայում բառասկզբում փոխվում է վո երկհնչյունին՝ բացառությամբ այն բառերի, որոնց մեջ ո-ին հաջորդում է վ. օրինակ՝ ով, ովկիանոս, ովսաննա:

Դեռևս միջին դարերից մեր այբուբենն ուներ և նշանը, որը սակայն նույնպես առանձին հնչյունի նշան չէր, այլ ուղղակի ե, լ տառերի գրության բաղադրությունը, որ մերթնդմերթ գրվում էր նաև եւ ձևով:

Մանրություն. Լ հնչյունը սկզբնապես ու-ին մոտեցող մի կիսաձայն էր, որ աստիճանաբար դարձավ վ, ուստի նրա նշանը որպես առանձին տառ հանվեց այբուբենից: Հավանաբար ձայնավորներից հետո (երբ բաղաձայն չի հաջորդում) դա վ է հնչվել դեռևս շատ

¹ Չնայած մենք սահմանեցինք հնչույթի և հնչյունի տարբերությունը և այսուհետև միշտ խոսվելու է հնչույթի մասին, բայց տրադիցիոն կերպով և հարմարության համար հնչույթի փոխարեն գործածվելու է հնչյուն տերմինը:

վաղուց: Ժամանակակից հայերենում երկար ու կարճ ձայնավորներ, իրրե առանձին արժեքավորված հնչույթներ, գոյություն չունեն: Ձայնավորների երկարությունն ու կարճությունը կապված է արտասանական այս կամ այն ոճի ու առանձին խոսքի մասերի յուրահատուկ հնչման հետ: սակայն երկար կամ կարճ արտասանված այդ կարգի հընչյունները հնչույթի արժեք չունեն: Նույնպես և չկան առանձին փափուկ ու կոշտ հնչյուններ, հնչյունների փափկացում, ինչպես կոեսնենք, առաջանում է հնչյունների այս կամ այն դիրքի ու մասնավոր անընդունելի արտաբերությունների հետեանքով, որոնք սակայն վերաբերում են ուղղախոսությունը և կնիշատակվեն առանձին:

2. ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ


Հնչյունների արտաբերությունը մասնակցում են մեր օրգանիզմի մի շարք օրգաններ, որոնք միասին վերցված կոչվում են արտասանական ապարատ: Արտասանական ապարատը բաղկացած է 5 մասից: Առաջին մասը, որը օդ է մատակարարում հնչյունների համար և որով դուրս է մղվում այն, կոչվում է շնչառական օրգան: Կրծքի խոռոչում են գտնվում թոքերը և ստոմանին, որոնց բացվելով և կծկվելով օդը մտնում և դուրս է մղվում, դուրս մղվող օդը շնչափողի ցնցուղների միջոցով անցնում է շնչափողը, որով օդահոսանքը բարձրանում է դեպի վեր: Պետք է նշել նաև, որ կրծքի վանդակը կարգավորում է մեր արտասանական խոսողային:

Արտասանական ապարատի երկրորդ օրգանը կոկորդն է, որը տեղավորված է շնչափողի վերին ընդլայնված մասի մկանների վրա: Կոկորդով էլ վերջանում է մեր շնչափողը: Կոկորդի հիմքում ընկած է այսպես կոչված՝ մասնաձև կրճիկը, որն իր նեղ մասով դարձած է դեպի առաջ խիլ լայն մասով՝ դեպի ետ: Առջևից կոկորդը սահմանափակվում է վանանաձև կրճիկով, որը դուրս է պրծած և


կոչվում է կատիկ կամ ագամախնձոր: Մատնածե կրճիկի վրա գտնվում են ոչ մեծ բրդածե երկու կրճիկներ, որոնց յուրաքանչյուրի վրա իրենց հիմքով կպած են ձայնալարերը. սրանք կոկորդը ընդլայնքի կտրելով՝ իրենց ծայրերով մոտենում են իրար և հենվում վահանածե կրճիկի վրա՝ իրենց միջև կազմելով անկյուն, այսինքն՝ թողնելով օդահոսանքի համար հատուկ անցք, որը կոչվում է ձայնածերպ: Ձայնալարերը, սակայն, կարող են ընդունել տարբեր դրություններ՝ հեռանալով իրարից և նույնիսկ փակելով ծերպը:

Ձայնալարերը մեր արտասանական ապարատի ամենակարևոր մասն են. սրանք երաժշտական ձայնի միակ աղբյուրն են, առանց որոնց չեն կարող գոյանալ ձայնավորները, ձայնորդները և ձայնեղ բաղաձայնները: Թոքերից շնչափող մղված օդը անցնում է ձայնածերպով և ձայնավոր, ձայնորդ ու ձայնեղ բաղաձայն հնչյունների արտաբերության ընթացքում տատանում է ձայնալարերը, որի հետևանքով ստացվում է ձայնը: Խուլ հնչյունների արտաբերության ժամանակ ձայնալարերը մնում են անշարժ, բացված, իսկ օդը առանց սրանք տատանելու անցնում է բերանի խոռոչը:


Արտասանական ապարատի երրորդ մասը բերանի և քթի խոռոչներն են. բերանի և քթի խոռոչները միայն արձագանքարանի դեր են կատարում: Ձայնավորների արտաբերության համար հատկապես կարևոր է բերանի խոռոչը, որտեղ ձևավորվում են մեր վեց ձայնավորները, իսկ քթի խոռոչը ոնգային երանգ է հաղորդում միայն մ և ն ձայնորդներին, որոնց արտաբերության ժամանակ օդի հոսանքը փափուկ քիմքի ծածկոցը բանալով մտնում է քթի խոռոչը: Բերանի խոռոչի ետևի մասը կոչվում է երախ. այստեղից էլ սկսած տեղավորված են արտասանական բուն օրգանները, որոնք ապարատի չորրորդ մասն են կազմում. երախի ամենակտիվ մասում շնչափողը ունի մի մակալեզու, որ փակում է շնչափողը ուտելիս ու




Նկար 1. Արտասանական ավարտի տեսքը՝
երկայնակի-ընդկողյա կտրվածքով:



Նկար 2. Ձայնալարերի ղերքը՝
ձայնի առկայությունում:



Նկար 3. Ձայնալարերի ղերքը՝
ձայնի բացակայությունում:



Նկար 4. Գլխի երկայնակի-ընդկողնային
կտրվածքը՝ բարձրացած փափուկ քիմքով:

L—շրթունքներ, A—լեզվի առաջամաս,
M—լեզվի միջին մաս, P—լեզվի ետին
մաս, V—փափուկ քիմք, U—մակալեղու,
d—վերին կտրիչների եզր, e—վերին կրտ-
րիչների ետին մակերես, f—ալվեոլներ,
g—կռշտ քիմքի առաջամաս, h—քմա-
մեջ, i—փափուկ քիմքի առաջամաս,
j—փափուկ քիմքի ետնամաս:

խմելիս, ապա գալիս են փափուկ քիմքը, իր շարժական ծածկոցով, կոշտ քիմքը, ակվեղները, աստամները, շրթունքները, որոնք կազմում են բերանի խոռոչի վերջին մասերը:

Սակայն արտասանական բուն օրգանների մեջ ամենաակտիվ և կարևոր դերը խաղում է լեզուն. նախ աս շնորհիվ ձևափոխության, դժուրաթեքության ու շարժունության բերանի խոռոչին տալիս է արձագանքարանի պահպան ձևեր, որոնց շնորհիվ գոյանում են տարբեր ձայնավորները. ապա լեզուն իր երեք մասով, տարբեր աստիճանի բարձրացումներով, ցածրացումներով ու հպումներով մասնակցում է համարյա բոլոր հնչյունների արտաբերությանը:

Ինչպես նշվեց, արտասանական պրոցեսը մի բարդ գործողություն է, որին անպայման մասնակցում է նաև կենտրոնական նյարդային համակարգը, որը արտասանական ապարատի հինգերորդ և վերջին մասն է: Նորմալ արտաբերության համար արտասանական ապարատի բոլոր մասերը պետք է կանոնավոր աշխատեն. բավական է, որ մեր նկարագրած օրգաններից որևէ մեկը հրաժարվի իր ֆունկցիան կատարելուց — նայած նրա խաղացած դերի ծավալին ու նշանակությանը, մարդ կարող է մասնակի կամ լրիվ զրկվել հնչյուններ արտաբերելու ունակությունից, մի բան, որ երբեմն վիճակվում է մարդկանց, մանավանդ ծերերին և որոշ կարգի հիվանդների:

3. ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի ձայնավորների արտաբերման ժամանակ օգը գուրս է գալիս բերանի խոռոչով. դրանց արտաբերության ժամանակ գեպի քթի խոռոչը տանող անցքը մնում է փակված. օգը գուրս է հոսում բերանից, որի հետևանքով հայերենը չի ունենում ուղեգային ձայնավորներ:

Ձայնավորների արտաբերման ժամանակ թոքերից դուրս մղվող օդը անցնում է կոկորդով և շարժում այնտեղ գտնվող երկու ձայնալարերը, վերջիններին տատանումից գոյանում է ձայնը: Մարդու արտաբերած հնչյունների ձայնային ուղղությամբ միայն և միայն ձայնալարերն են, որոնք հատկապես ուժեղ թրթռում են ձայնավորների արտաբերման ժամանակ: Ձայնավորները արտաբերելիս ձայնալարերը աննշան տարբերությամբ թռչլ և ուժեղ են շարժվում, բայց սուսնաձին ձայնավորների ձևավորման մեջ դեր չեն խաղում: Դրանց թրթռումից առաջանում է միևնույն ձայնը ավել կամ պակաս ուժգնությամբ. սակայն ձայնավորներն իբրև ա, է, ու, օ, ի, ք, առանձնահատուկ հնչյուններ, մեր լեզվում ձևավորվում են բերանի խոռոչում՝ շնորհիվ լեզվի և շրթունքների տարբեր դիրքերի ու վիճակների: Այստեղ լեզվի նշանակությունը առաջնակարգ է, ուստի և առանձին ձայնավորների ուսումնասիրության բնթացքում այս կամ այն անվանումը կապվում է լեզվի դանադան մասերի հետ:

Ձայնավորների արտաբերման բնթացքում լեզուն դործում է իր երեք մասերով, որոնք ունենում են երեք տարբեր բարձրացումներ: Երբ լեզվի ետին մասը բարձրանում է գեպի փափուկ քիմքը, բայց չի կաշում քիմքին, օդը հոսում է առանց շփման, ստացվում են եռնալեզվային ձայնավորները: Սրանք կարող են արտաբերվել թե՛ տառնց շրթունքների մասնակցությամբ և թե՛ վերջիններիս կոորացումով: Հայերենում եռնալեզվային ոչ-շրթնայնացած հնչյուն է ա ձայնավորը:

Ա ձայնավորի արտաբերման ժամանակ բերանը բաժանառաջով լայն է բացվում (մյուս ձայնավորների արտաբերման համեմատությամբ ամենալայնը): Լեզուն ոչ լայն փովածքով՝ հիմքը մի քիչ ետ, պռակվում է բերանի ներքին մասում և ծայրով հենվում է ստորին առամհաշարին: Լեզվի ետին մասի բարձրացումը այնպես է, որ ամանք մեր առն համարում են ստորին բարձրացման, որը

ալելի հավանական է, իսկ ոմանք՝ միջին բարձրացման: Հնարավոր է, որ ա-ն այլևայլ գիրքավորումների մեջ ու-նենա այդ երկու աստիճանները, բայց այդպիսի տարբե-րությունը այնքան աննշան է, որ չի զգացվում: Զանա-դանություն չի նկատվում նաև շեշտավոր և անշեշտ ա-երի միջև: Մեր ա ձայնավորի որակական այս կայունու-թյունը երկար ժամանակ օգնել է նրան՝ զերծ մնալու հըն-չյունափոխական այն ուժգին պրոցեսից, որին ենթարկվել էին ի, ու ձայնավորներն ու երկբարբառները: Շեշտավոր և անշեշտ ա-երի տարբերությունը արտահայտվում է նրա-նով, որ շեշտավորի արտաբերման ժամանակ լեզուն շատ աննշան շափով բացվում է և ալելի ներքև է սեղմվում՝ չնորհիվ օդի ուժգին հոսանքի:

Հայերենի է ձայնավորը առաջնալեզվային միջին բարձ-րացման ձայնավոր է: Ա ձայնավորի համեմատությամբ է-ի արտաբերության ընթացքում բերանի բացվածքը մի քիչ նեղանում է, լեզուն ուժեղ շափով լայնանում և փրո-վում է բերանի խոռոչում: Լեզվի առաջին մասը սեղմ-վում է ներքին ատամնաշարի հիմքին, իսկ նրա ծայրը բարձրանում է դեպի կոշտ քիմքը՝ առաջացնելով նկատելի կտրություն. լեզվի ետին մասը ամբողջովին իջնում է: Մաքուր է հնչվում է բառասկզբում և բառավերջում. բա-ռամիջում մեր է-ն արտաբերվում է ալելի լայն, բերանի օրգանների գիրքը մոտենում է ի ձայնավորի արտաբեր-ման գիրքին. այս երևույթը շատ ալելի պարզ նկատվում է բարբառներում և կեր, բել, լեռ, և նման բառերի արտա-բերման ժամանակ, որտեղ է-ն (գրությամբ և) արտաբեր-վում է իե-ին մոտիկ: Նույն բանը ալելի պարզորոշ նկատ-վում է սահմանականի ապստնի 1-ին և 2-րդ գեմքերում՝ գրելու եմ, — գրելու ես, մոտամբ նաև ներկայում՝ գրում եմ, գրում ես: Իսկ՝ գրում է, ուտում էք և այլ ձևերի մեջ է-ն մաքուր նեղ ձայնավոր է: Փրահան լեզվով խոսողները գրանց տարբերությունը չեն զգում, բայց այդ գոյություն ունի. և բացարձակ զգալի է արարատյան խոսվածքներում:

Ը ձայնավորը միջնակեզվային միջին բարձրացման հնչյուն է. մեր ձայնավորների մեջ սա ասենթույն է։ Այդ պատճառով այլ ձայնավորների սուկայություն գեղարքում ընդհանուր է հետևում։ Ը-ի արտաբերության գեղարքում բերանը գրեթե նույնքան է բացվում, որքան է-ն արտաբերելիս։ Լեզուն ավելի կծկվում է, ծայրը դարձյալ հենվում է ներքին առամհաշարին, առաջին մասը իջնում է, իսկ միջին մասը քիչ բարձրանում է գեղի փափուկ և կոշտ քիմքերի սահմանագիծը։ Ը ձայնավորը ուժեղ է հրնչվում բնաձայնական բառերի, միջարկությանների մեջ և շեշտ է ստանում. ուժեղ է հնչվում նաև սրպես հոգ (առանց շեշտի), իսկ մյուս գեղարքում շատ թույլ է և այդ պատճառով հաճախ գրության մեջ չի նշվում։

Ի-ն առաջնակեզվային վերին բարձրացման ձայնավոր է. բերանի օրգանները գտնվում են նույն գերքում, ինչպես է-ի արտաբերության գեղարքում, միայն լեզվի առաջին մասը ավելի է բարձրանում գեղի կոշտ քիմքը։

Ու ձայնավորը արտաբերելիս շրթունքները կլորանում, ձգվում են առաջ և կազմում մի նեղ անցք։ Շեշտավոր ու-ն հնչելու ժամանակ շրթունքները ավելի են առաջ ձգվում։ Լեզուն ետ է քաշվում և առաջին մասով իջնում է գեղի բերանի հատակը, իսկ ետին մասով շատ վեր բարձրանում է գեղի փափուկ քիմքը՝ չափավոր բացվելով։ Հայերենի ու-ն ետնակեզվային շրթնայնացած վերին բարձրացման ձայնավոր է, որը իր այս կամ այն դիրքում այժմ արտաբերական զգալի զանազանություն չի ցուցաբերում։

Օ-ն արտաբերվում է շրթունքների կլոր բացվածքի ավելի լայն վիճակով և ավելի քիչ առաջ ձգված։ Լեզվի վիճակը բերանի խոռոչում գրեթե նույնն է, ինչպես ու-ի արտաբերության ընթացքում, միայն այս գեղարքում լեզվի ետին մասի բարձրացումը զգալիորեն քիչ է։ Մեր օ-ն ետնակեզվային չափավոր բացվածքի միջին բարձրացման ձայնավոր է։

փակում է դուրս եկող օգի սեղին, ուստի այդպիսի բազմա-
ձայնները կոչվում են նաև փակվածքի բաղաձայններ: Պայ-
թականներն իրենց արտաբերման հիմքում ունեն երկու
մոմենտ՝ հպման, պայթման, մի բան, որ նրանց արտաբեր-
ման ամանակը ոչ միայն կարճացնում է, այլև կրտսմ է
երկու մասի:

Շփական բաղաձայնները գոյանում են, հակառակ պայ-
թականների, արտաբերման օրգանների կազմած նեղված-
քով. օրգանները խիստ մոտենում են իրար և կազմում են
շատ նեղ ճեղք, որտեղից օդը դուրս է գալիս ուժեղ շփու-
մով. այս շփման արգյունքը շփական բաղաձայններն են,
որոնք անվանվում են նաև նեղվածքի բաղաձայններ: Սրանց
արտաբերման ամանակը պայթկականների հետ համեմատած
ավելի երկար է. օրինակ՝ շփականներ են խ, զ, ա, ծ և այլն:

Բաղաձայնները խմբավորվում են նաև ըստ ձայնային
երանգի ու կազմում են չորս խումբ՝ ձայնորդներ, որոնք
մշուկների համեմատությամբ ամենից շատ ձայն ունեն.
սրանցից հետո գալիս են ձայնեղ բաղաձայնները, որոնց
մեջ աղմուկը գերիշխում է ձայնին՝ հակառակ ձայնորդ-
ների, որտեղ ծայրահեղ դեպքում ձայնն ու աղմուկը կա-
րող են հավասարաչափ լինել, մինչդեռ լրաձայն հնչման
պայմաններում ձայնը գերակշռում է աղմուկին:

Այս երկու խմբին հակադրվում է երրորդ խումբը,
որի մեջ մտնող բաղաձայնները բացարձակորեն զուրկ են
ձայնից և կազմված են միայն աղմուկից. այս պատճառով
գրանք կոչվում են խուլ կամ աղմկավոր բաղաձայններ:
Չորրորդ խմբին պատկանում են նաև շնչեղ-խուլ բաղա-
ձայնները:

Բաղաձայնները խմբավորվում են նաև ըստ կազմու-
թյան և բաժանվում են երկու մասի՝ պարզ և բարդ: Պարզ
բաղաձայնները մի-մի հնչյուն են ներկայացնում, իսկ բար-
դերը բաղադրվում են երկու կամ ավելի հնչյուններից (հայե-
րենում երեք հնչյունից ավելի միմյանց հետ չեն միանում):

Եռնալեզվային պայթական բաղաձայններ

Սկսում ենք եռնալեզվային բաղաձայններից, որովհետեւ հայերենում կոկորդային բաղաձայն գրեթե գոյություն չունի. կոկորդային է համարվում Ռ խուլ շփականը, որը առաջանում է խոր շնչից և կոչվում է հագագ. սա իր արտաբերման եղանակով շփական է և հայերենում իր տարրեր զիրքերով տարրեր ածգնաթյամբ է հանդես գալիս: Մեր ազգային լեզվում ձայնեղ Ռ գոյություն չունի՝ հակառակ արարտայան բոլոր խոսվածքներում գրա առկայություն:

Եռնալեզվային պայթական բաղաձայններն են կ, գ, ք. ի-ն խուլ է և արտաբերվում է լեզվի հատի մասի ու կոշաքիմքի հպումով, պայթումով. ի-ն պարզ բաղաձայն է, որի արտաբերություն ժամանակ ձայնալարերը մնում են անշարժ: Մենք կոկորդային կ չունենք. սա բոլոր գեպքերում մաքուր եռնալեզվային բաղաձայնն է. բարբառներում, որքան մենք նկատել ենք, կոկորդային կ գործածվում է օտար բռների արտաբերման մեջ այն գեպքում, երբ օտար բռը սկսվում է ղ-ով, որը և արտաբերվում է իբրեւ կոկորդային կ (վրացերեն չ):

Նույն տեղով է արտաբերվում գ եռնալեզվային պայթականը: Սրանց որակական տարրերություն պատճառը ձայնալարերի աշխատանքն է. թոքերից արտամղվող օդը շարժում է ձայնալարերը, որոնց ձայնը խանգվում է կ գոյացնող աղմուկին և ստացվում է գ ձայնեղ պայթականը:

Կ և գ պայթականների շարքում գտնվող ք-ն բարդ հնչյուն է. դա կազմված է կ խուլ պայթականից և Ռ խուլ շնչից, որի պատճառով ք-ն կոչվում է խուլ-շնչեղ:

Հիշյալ եռնալեզվային պայթականները մեր ազգային լեզվում ի, ե, յ հնչյուններից, յա, յո, յու երկհնչյուններից առաջ փափկանում են՝ շնորհիվ լեզվի միջին մասի լրացուցիչ բարձրացման գեպի քմամեջը, ուստի այս գեպքում դրանք կոչվում են քմային բաղաձայններ, բայց ոչ ընդ-

հանրապետ տյալ մասնակի գեպքերի պայմաններում: օրինակ՝ գյուղ, զինի բառերի գ-ն զգալիորեն տարբերվում է գույն և գուրուն բառերի գ-ից: Նույնպես էլ Լ և ք հնչյունները:

Ետնալեզվային շփական բաղաձայններ

Ետնալեզվային շփական բաղաձայններն են խ, պ, Սրանց արտաբերություն ժամանակ լեզուն ետ է քաշվում և ծայրով թույլ հենվում է ներքին արվեղներին: Լեզվի ետին մասը բարձրանում է գեպի փափուկ քիմքը և թողնում է մի նեղ բացվածք, որտեղից շփվելով դուրս է հոսում օդը: Խ բաղաձայնի արտաբերությունը ձայնալարերը չեն մասնակցում, ուստի խ-ն մնում է որպես խուլ շփական, իսկ պ-ին ուղեկցվում են ձայնալարերի թրթռոցները, որով պ-ն ձայնեղանում և ստանում է խ-ից տարբեր որակ:

Միջնալեզվային ձայնորդ շփական է մեր յ հնչյունը, որը երբեմն հանդես է գալիս որպես կիսաձայն ի, երբեմն իսկապես որպես շփական բաղաձայն: Երկու ձայնավորներն միջև յ-ն բաղաձայն է և մտնենում է ուղեկերին ի-ին:

Առաջնալեզվային պայթական բաղաձայններ

Առաջնալեզվային պայթական բաղաձայններն են ա, դ, ք: Տ-ն պարզ խուլ է, դ-ն՝ պարզ ձայնեղ, իսկ ք-ն՝ շքն-չեղ-խուլ՝ առաջացած ա և հ հնչյունների բաղադրությունից:

Առաջնալեզվային պայթականների արտաբերման ժամանակ լեզուն իր առաջին մասով համարյա նստում է ստորին առամենաշարի վրա, ապա աննշան չափով ծայրը վեր է բարձրանում և հպվում վերին առամենաշարին ու արվեղներին՝ փակելով օդի հոսանքի ուղին: Դեպի աջ փակվածքը հոսող օդը պայթեցնում է հպմբը և առաջացնում ա հնչյունն աղմուկը: Զայնալարերը մնում են անշարժ, որով ա-ն բացարձակ աղմուկ է: Եթե այս աղմուկին ուղեկցվում է ձայնալարերի թրթռոցը, ստացվում է դ ձայն-

նեղ պայթականը, իսկ եթե աղմուկին միանում է խուլ և հազազը, գոյանում է մեր ք խուլ-շնչեղ պայթականը, որ համարվում է բարդ հնչյուն:

Առաջնակեզվային ֆականներ

Առաջնակեզվային շփական բաղաձայններ են ա, գ, ժ, շ հնչյունները: Առաջին գույգը արտաբերվում է լեզվի ծայրի՝ ներքին առամհաշարին ուժեղ սեղմումով՝ ըստ որում լեզվի առաջին մասը վեր է բարձրանում դեպի կոշտ քիմքը, իսկ եղբամասերը մոտենալով կողատամներին, սակավ չափով բարձրանում են: Ներքին կտրիչ առամհները բարձրանում մոտենում են վերին կտրիչներին՝ թողնելով մի շատ նեղ ճեղք, որով օդը սուլելով արտահոսում է՝ նախապես շփվելով լեզվի առաջին մասին և կոշտ քիմքին: Որքան լեզվի առաջին մասը և կոշտ քիմքը նեղացնեն ճեղքը, այնքան սուլոցը պարզ ու մեկին կլավի և մաքուր կստացվի:

Ս, գ շփականները կոչվում են սուլականներ, որովհետեւ սրանց հիմնական սրակը սուլական աղմուկն է: Ս-ն արտաբերվում է առանց ձայնալարերի մասնակցության, սւստի այն միայն սուլական աղմուկ է, իսկ գ-ն ուղեկցվում է ձայնալարերի թրթռոցով, որով գ-ի սուլական աղմուկին միանում է ձայնը:

Շ, ժ-ն արտաբերելիս լեզվի առաջին մասը բարձրանում է դեպի վերին արվեստները և կազմում գդալաձև կորություն՝ թողնելով մի նեղ անցք: Ըստ ուսու հնչյունաբան Շչերբայի այդպիսի մի նեղ անցք միաժամանակ գոյանում է լեզվի ետին մասի և կոշտ քիմքի միջև, ըստ որում օդը սկզբում շփվում է լեզվի ետին մասին և կոշտ քիմքին, ապա անցնում է լեզվի առաջին մասի և արվեստների կազմած անցքով: Այս պատճառով ստացվում է այն հատուկ շչական աղմուկը, որ դրանց տարբերում է սուլական ա և գ շփականներից: Ի տարբերություն այս վերջինների՝ շ և ժ-ն կոչվում են շչականներ, որոնցից շ-ն խուլ է, իսկ ժ-ն

ձայնեղ: Նույն հնչյունաբանը նկատում է, որ շ և ժ բաղա-
ձայնների արտաբերության ժամանակ շրթունքները թեթե-
առաջ են շարժվում: Հայերենում այս երևույթը մնում է
անզգալի:

Առաջնալեզվային հնչյուններ են նաև լ, ն, ր ձայնորդ-
ները, որոնց մասին կխոսվի առանձին:

Շրթնային պայթական բաղաձայններ

Շրթնային պայթական բաղաձայններն են պ, ր, փ:
Սրանք արտաբերվում են շրթունքների ուժեղ հպումով
ու պայթումով: Լեզուն ամբողջովին իջնում է բերանի հա-
տակը և մնում է անշարժ՝ բանալով օդահոսանքի ուղին:
Պ և փ արտաբերելիս ձայնալարերը չեն շարժվում, օդը հա-
սում է նրանց լայն բացվածքից, իսկ բ-ն արտաբերվում
է ձայնալարերի մասնակցությամբ, այսպիսով պ և փ-ն խուլ
են, իսկ բ-ն՝ ձայնեղ: Փ-ն կազմված է պ-ից և հ-ից, այ-
սինքն՝ բարդ շնչեղ-խուլ պայթական է: Շրթնային հնչյուն
է նաև մ ձայնորդը, որի մասին կխոսվի ներքևում:

Շրթնատամնային շփականներ

Շրթնատամնային շփականներն են վ, ֆ բաղաձայն-
ները. սրանց արտաբերության ժամանակ վերին առամանե-
րը և ներքին շրթունքները կպչում են միմյանց՝ թողնելով
առամաների արանքը նեղ ճեղքեր, որոնցով օդը արտահոսում
է՝ գոյացնելով հիշյալ երկու հնչյունները, ֆ-ն միայն կազմ-
ված է ալմուկից, այսինքն՝ խուլ է, իսկ վ-ն նույն ֆ աղ-
մուկն է, որին սակայն միանում է ձայնալարերի թրթռո-
ցը, և կազմվում է վ ձայնեղ շփականը:

5. ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆՈՐԴՆԵՐԸ

Հայերենում բաղաձայնների մեջ են մտնում այսպես
կոչված ձայնորդ (սոնանտ) հնչյունները. համեմատած
վերևում նկարագրված ձայնեղ բաղաձայնների հետ, ձայ-
նորդների մեջ ձայնային տարրը ավելի ուժեղ է: Սրանք

բառ ձայնի և աղմուկի հարաբերությունը դրավում են ձայնեղ բաղաձայնների և ձայնավորների միջին տեղը: Ձայնավորների մեջ ձայնը հիմնական որակն է կազմում, աղմուկը այնքան է աննշան, որ զգացվում է միայն շշուռնով խոսելիս: Իսկ ձայնեղ բաղաձայնների հիմնական որակը աղմուկն է: Կան լեզուներ, որտեղ ձայնորդները մոտենում են ձայնավորներին և նույնիսկ վանկ են կազմում, բայց մեր լեզվում ձայնորդները իրենց ձայնեղությամբ քիչ են տարբերվում բաղաձայններից, իսկ իրենց ֆունկցիայով միշտ բաղաձայն են:

Ամենալիաձայն ձայնորդները հայերենում ք, չ հնչյուններն են, որոնք կոչվում են նայ (թայ): Լ-ն հիմնականում արտաբերվում է լեզվի առաջին մասով: Լեզվի ծայրը բարձրանում է գեպի վերին առամնաշարը և սեղմվում է կոշտ քիմքի առաջին մասին ու առամներին: Լեզուն ամբողջովին փակվում է և իջեցնում կողքերը՝ առանց փակցնելու կողքառամներին. ստացվում է գգալի ձև, լեզվի կողքերից օդը արտահոսում է՝ թեթե շփվելով նրանց: Դրա համար որոշ լեզվաբաններ լ-ն կոչում են կողքային-առաջնայեղվային: Ըստ արտաբերման եղանակի լ-ն համարվում է շփական, սակայն իսկապես դա այնպիսի մաքուր շփական չէ, ինչպես ա, շ և մյուս շփականները: Հասակ չ արտաբերելիս լեզվի առաջին մասը միշտ էլ պոկվում է վերին առամնաշարից և կոշտ քիմքի սկզբի մասից ու լ-ին տալիս է որոշ չափով պայթական բնույթ: Մեր լ-ի արտաբերման ժամանակ լեզվի միջին մասը բավականաչափ հեռու է գտնվում փափուկ և կոշտ քիմքերից, եթե այսպես չլիներ, կստացվեր փափուկ լ, որ մեր գրական լեզուն չունի:

Ր-ն նույն արտաբերություներն ունի, ինչ որ լ-ն, միայն ր-ի արտաբերման դեպքում լեզվի ծայրը համեմատաբար ավելի վեր է բարձրանում և ավելի թույլ է սեղմվում քիմքին: Դուրս եկող օդը թրթռացնում է լեզվի ծայրը և գոյացնում է ր հնչյունը: Երբ այդ թրթռոցը զգալի ուժեղացնենք, կստանանք.

ը-ի ա տարբերակը, որ ը-ից տարբերվում է ոչ թե թրթռոցների քանակով, այլ նրանց ուժգնությամբ: Ըստ ուսու հնչյունաբան Շչերբայի՝ ը-ի արտաբերության ժամանակ տեղի է ունենում մեկից մինչև չորս թրթռոց՝ նայած ինչ հնչյունների շարքում և ինչ պայմանում է դրնվում: Ռ-ի և ը-ի տարբերությունը նաև այն է, որ ռ-ն որոշ չափով միջնալեզվայնացած կամ քմայնացած է, այսինքն՝ արտաբերելիս դորժում է նաև լեզվի միջին մասը:

Մ, և ձայնորդները հայերենում միակ հնչյուններն են, որոնց արտաբերության ժամանակ փափուկ քիմքն իջնում է՝ բաց անելով քթի խոռոչի անցքը: Մ-ն արտաբերվում է ճիշտ այնպես, ինչպես ձայնեղ ը-ն, այսինքն՝ ևրկշրթնային պայթական է, միայն պայթման մոմենտը թույլ է, և բնականորեն աղմուկը քիչ: Մ-ի արտաբերության ժամանակ օդը արտահոսում է քթի խոռոչով՝ տալով մ-ին ռնգային երանգ, որի պատճառով էլ մ-ն կոչվում է ռնգային ձայնորդ:

Ն-ն առաջնալեզվային պայթական է. արտաբերվում է այնպես, ինչպես դ առաջնալեզվայինը. սակայն ն-ի պայթման մոմենտը թույլ է. լեզվի ծայրը աննշան չափով է սեղմվում, և օդը արտահոսում է ունգերից. այդ պատճառով էլ սա ևս անվանվում է ռնգային ձայնորդ:

Հայերենի չ սոնանտը պրոֆ. Մ. Արեգյանը համարում է կիսաձայն, այսինքն՝ ի ձայնավորի անվանկային տեսակը: «Մեր վանկային ի ձայնավորը և անվանկային կամ բաղաձայնական (կիսաձայն) չ ձայնավորը իսկապես միևնույն հնչյուններն են. երկուսի արտաբերության տեղը միևնույնն է, և երկուսն էլ միևնույն ուղևոր ունեն, իրարից տարբերվում են միայն իրենց ուժով. չ հնչյունը թույլ, փակ ի ձայնավոր է: Բայց հենց որ մեր այս չ հնչյունի արտաբերության տեղը, լեզվի և առաջաքիմքի միջոցը մի փոքր ավելի ևս նեղանում է, մեր չ հնչյունն էլ հեշտությամբ դառնում է յոտ և մեր մի քանի, ավելի արեմբալան բարբառների մեջ, երբեմն նաև գրական լեզվի մեջ,

այդպես էլ իբրև բաղաձայն արտասանում են մեր կիսաձայն յ հնչյունը»¹:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ ինչքան էլ ի, յ հնչյունները իրար մոտ են և իսկապես հնչյունական այս կամ այն շղթայի մեջ ի-ն յ է, կամ ընդհակառակը, այնուամենայնիվ սրանք թե արտաբերության տեղով և թե որակով տարբերվում են միմյանցից: Մինչդեռ ի-ն առաջնալեզվային վերին բարձրացման ձայնավոր է, յ-ն միջնալեզվային շփական սոնանտ է, այսինքն՝ արտաբերվում է լեզվի միջին մասի և քիմքի մասնակցությամբ: Եվ մեր լեզվում այժմ այն գերազանցապես բաղաձայնական որակ ունի, քան ձայնավորի:

6. ԲԱՐԴ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Հայերենի բարդ բաղաձայններն են ք, փ, ք, ծ, և, ճ, չ, ց: Առաջին երեքի մասին նախապես խոսեցինք այն պատճառով, որ դրանցից յուրաքանչյուրն իրեն համապատասխան պարզ խուլի և ձայնեղի հետ մի եռաստիճան սխառեմ է կազմում: Եվ ասվեց, որ դրանք կազմված են մի պայթականից և մի խուլ ու շնչից: Հայերենի բարդ բաղաձայններից վերջին վեցը կազմված են առաջնալեզվային պայթականներից (պարզ և շնչեղ) և շփականներից: Հնդեվրոպական լեզուների մեջ ամենից շատ բարդ բաղաձայններ ունի հայերենը. օրինակ՝ ծ և և ոչ մի հնդեվրոպական լեզվում չեն գտնվում:

Ինչպես ասվել է վերևում, բարդ հնչյունները կազմված են լինում երկու և ավելի բաղաձայն հնչյուններից: Բարդացումը հնչյունի համար սոսկ ֆիզիկական գումարում չէ. դա այնպիսի մի բաղադրություն է, որտեղ առանձին հնչյունների որակը հիմնովին փոխվում է մի նոր այնպիսի որակի, որ բաղադրիչներից ոչ մեկը այլևս հեռավոր կամ մոտավոր կերպով չի ճանաչվում, այսինքն՝ բաղադրվածը նրա մեջ մտնող հնչյուններից ոչ մեկն է և ոչ

¹ Պրոֆ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 89—90:

էլ մյուսք, աչլ մի բոլորովին նոր հնչյուն է՝ ընդունված ու արժեքավորված տվյալ լեզվով խոսող հանրության կողմից. օրինակ՝ ծ-ն կազմված է ա և ս հնչյուններից, բայց այն ոչ ա է և ոչ էլ ս:

Այժմ առանձին-առանձին քննենք մեր բարդ բաղաձայնները:

Հայերենի բարդ բարդ բաղաձայնները, բացառությամբ Վի և ք շնչեղ պայթականների, ունեն առաջնալեզվային արտաբերություն, որովհետև կազմված են առաջնալեզվային պայթականներից ու շփականներից, իսկ արտաբերման եղանակով դրանք պայթման հետ ունեն նաև շփական մոմենտ: **Քնչալեռ** որ բարդ բաղաձայնները իրենց բաղադրիչների համեմատությամբ տարբեր որակ են ներկայացնում, այնպես էլ դրանց արտաբերությունը տարբերվում է բաղադրիչների արտաբերությունից: Այս գեղգուռ լեզվի ծայրը համեմատաբար թույլ է սեղմվում համապատասխան օրգաններին, որի պատճառով մնում է մի անհշան նեղ բացվածք՝ կարճ մոմենտի համար: Այդ նեղ բացվածքը թուլացնում է պայթման ուժը. բայց քանի որ բացվածքը շատ նեղ է, և նրա անոդությունը վաչրիկնական, ապա զգացվում է նաև պայթման մոմենտը, որը իր հերթին կարճում է շփականության տևականությունը:

Հայերենի բուն բարդ բաղաձայնները Յ-ն են՝ կազմված ա, զ, ք պայթականներից և ա, զ, շ, ծ շփականներից: Տ-ն կարող է բաղադրվել միայն ա և շ շփականներով, քանի որ բարդ հնչյունների կազմության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ խուլ պայթականը միայն միանում է խուլ շփականի հետ, իսկ ձայնեղ պայթականը՝ ձայնեղ շփականի հետ, բոտ աչքմ ա-ն չի բաղադրվում զ և ծ ձայնեղների հետ: Այս էլ նկատենք, որ առաջնալեզվային պայթականը միայն առաջնալեզվային շփականի հետ կարող է բաղադրվել:

Տ-ն ա-ի հետ կազմում է ծ բարդ բաղաձայնը, իսկ, շ-ի հետ միանալով առաջ է բերում ճ: Սրանք երկուսն էլ խուլ

7. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՀԱԶԱՅՆՆԵՐԻ

Արտասանության տեղը	Պ ա ր ղ						Բ ա ր ղ				
	Հ փ ա կ ա ն			պ ա յ թ ա կ ա ն			Հ ն Ն Ե Ղ		Կ ի ս ա շ փ ա կ ա ն		
	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ	Լ ա ղ	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ	Լ ա ղ	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ	Լ ա ղ	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ	Լ ա ղ	Կ ը ղ ղ ղ ղ ղ ղ
Կոկորդալին	—	—	Ն	—	—	—	—	—	—	—	—
Եանալեզվային	—	Գ	Խ	—	Գ	Կ	—	Ք	—	—	—
Միջնակեզվային	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Լեզվատամային	—	—	—	Ն	Գ	տ	—	Թ	ձԳ	ժ, Զ	ց, չ
Միջնատամային	ԼՐ	գ, ժ	ս, շ	—	—	—	—	—	—	—	—
Լեզվաքմային	ո	—	—	—	—	—	—	—	—	—	—
Երկշրթնային	—	—	—	մ	ր	պ	—	փ	—	—	—
Շրթնատամային	—	վ	ֆ	—	—	—	—	—	—	—	—

Ծանոթություն. Ըստ համայն հնչյունների ալյա և ձայնավորների համադրական տախտակները վերցված են պրոֆ. Էդ. Աղայանի «Լեզվաբանության ներածություն» (Երևան, 1932 թ.) գրքից. տես էջեր 126, 136. միայն և և մ ձայնորդների տեղը փոխել ենք ըստ մեր նկատահուսմաների:

են, ըստ որում առաջինը սուլական է, իսկ երկրորդը՝ շչական։
Դ-ն բաղադրվում է միայն զ և ժ ձայնեղ շփականներիով. առաջինի հետ կազմում է ձ, իսկ երկրորդի հետ՝ ջ ձայնեղ բարդ բաղաձայնները։ Ձ-ն սուլական ձայնեղ է, իսկ ջ-ն՝ շչական։

Թ-ն որպես խուլ-շնչեղ կարող է միանալ միայն ա և չ խուլ շփականների հետ, ըստ որում առաջինի հետ կազմում է ց սուլականը, իսկ երկրորդի հետ՝ չ շչականը։

Ըստ այսմ ստացվում են երկու ոչ-շնչեղ սուլական՝ ծ, ձ, որոնցից առաջինը կազմված է ա, ա, իսկ երկրորդը՝ դ, գ բաղաձայններից, — մեկ շնչեղ սուլական՝ ց (կազմված ք, ս բաղաձայններից), երկու ոչ-շնչեղ շչական՝ ճ, ջ (համապատասխանորեն կազմված ա, շ, և դ, ժ բաղաձայններից) և մեկ շնչեղ շչական՝ չ (կազմված ք, շ բաղաձայններից)։ Սրանցից ծ, ճ-ն խուլ են, ց, չ-ն խուլ-շնչեղ են, իսկ ձ, ջ-ն ձայնեղ են՝ առանց շնչեղացման. ձայնեղ-շնչեղ բարդ բաղաձայններ մեր գրական լեզուն չունի. դրանք կան միայն մեր մի շարք բարբառներում։

8. Ե Ր Կ Բ Ա Ր Բ Ա Ռ Ն Ե Ր

Երկբարբառ է կոչվում երկու տաբբեր ձայնավորների այնպիսի միասնությունը, որ մի վանկ է կազմում. երկբարբառների կազմության համար անհրաժեշտ է, որ դրա մեջ մտնող երկու ձայնավորները օժտված լինեն առանձին-առանձին վանկ կազմելու հատկությամբ և, որ այդ ձայնավորները թույլ և ուժեղ լինեն իրենց հնչեղությամբ։ Երկու ձայնավորների այդ միասնություն մեջ թույլ ձայնավորը կորցնում է իր վանկարար հատկությունը և հանդես է գալիս իրրե երկբարբառի ոչ-վանկարար տարր, իսկ ուժեղ ձայնավորը պահում է իր վանկարար հատկությունը և դառնում է երկբարբառի վանկարար բաղադրիչը։

Մեր լեզվում կան ուժեղ և թույլ ձայնավորներ. օրինակ՝ ի, ու ձայնավորների համեմատությամբ բաղականա-

չափ ուժեղ են ա, օ, է ձայնավորները, սակայն դրանց միասնությունը մեր լեզվում երկրարբաններ չի կազմում։ Սա պետք է բացատրել նշանով, որ մեր ու, ի ձայնավորներից առաջինը երկրարբանի արդյունք է և ներկայումս այն դեպքում, որտեղ ու-ն երկրարբան պետք է կազմեր, գրաբարում արդեն ոչ միայն երկրարբան չի կազմել ժամանակին, այլև այնքան է թուլացել, որ վերածվել է բաղաձայնի։ օրինակ՝ առու-առվաճիճ, մեղու-մեղվանոց, այսինքն՝ ու-ն, և ձայնավորից առաջ տվել է բաղաձայն վ։ Ուրեմն մեր լեզվում, որտեղ ու-ն ա ձայնավորից առաջ պետք է երկրարբան կազմեր, արդեն վերածվել է բաղաձայնի։ Այս երևույթն ու-ի հետ կատարվել է նույնիսկ ի-ից առաջ։ օրինակ՝ առու-առվի, մեղու-մեղվի, իսկ այնպիսի բառերի մեջ, որտեղ ու-ն պահպանվում է, ինչպես՝ ուրու-ուրուի, վերարկու-վերարկուի, այցելու-այցելուի, այս դեպքում էլ հնչում ենք վերարկույի, այցելույի։ Իսկ օտար բառերի մեջ ա-ին նախորդող ու-ն արտարբերում ենք կամ ա-ից ա-նջատ, կամ մեծ մասամբ այդտեղ էլ ու-ն վ-է հնչվում։ օրինակ՝ բուրժուա-բուրժվա։

Ի ձայնավորը այդպիսի դեպքերում կամ ա-ի հետ արդեն կազմել է երկրարբան և վերածվել է մի այլ ձայնավորի։ օրինակ՝ այգի + ա + գործ > այգեգործ, կամ լրիվ պահպանում է իր վանկարարությունը։ օրինակ՝ ձի-ձիավոր, դի-դիակ, շոգի-շոգիանալ, կամ ի-ն ընկնում է։ օրինակ՝ քեռի-քեռակին, քերի-քերանալ, կուտողի-կատաղալից։

Երկրարբանային երևույթ նկատվում է մի քանի կազմությունների մեջ։ օրինակ՝ քաղաքացի-քաղաքացիական (հնչում ենք քաղաքացյական), գյուղացի-գյուղացիական (հնչում ենք գյուղացյական) և այլն, որտեղ իսկ մի վանկ է կազմում։ Այդպես է նաև հեքիաթ բառի մեջ։ Օտար բառերի մեջ ի ձայնավորը կորցնում է իր վանկարարությունը։ օրինակ՝ Ֆրանսիա, Իտալիա և այլն։

Այժմ տանք այն բոլոր հնարավոր գրությունները, որտեղ կարող է երկրարբան առաջանալ։ Հայերեն բառերի

մեջ ա ձայնավորին ի ձայնավոր չի հաջորդում. երբ այդպիսի դրութիւնն է ստեղծվում, երկու ձայնավորի հորանջը փակվում է մի յոսի. օրինակ՝ սպա-սպայի. տղա-տղայի: Այդպէս է վիճակը նաև, երբ ի-ն հաջորդում է ո-ին. օրինակ՝ երկնո-երկնոյի. ի-ն մասամբ է-ից հետո է միայն թուլանում, բայց, այնուամենայնիվ, պահպանում է իր վանկարար հատկութիւնը. օրինակ՝ բազե-բազեի, ափսե-ափսեի և այլն: Իսկ երբ ի-ն է նախորդում է-ին, դարձյալ պահպանվում է, բայց նկատվում է թուլացում. օրինակ՝ տիեզերք:¹

Է-ն ա-ին նախորդում է բարդութեան մեջ և լիակատար կերպով պահում է իր վանկարար դերը. օրինակ՝ բազեակիր, թոպեակուն և այլն: Յ կիսաձայնը այլևս ա-ից, ո-ից հետո կամ առաջ երկրարբառ չի կազմում: Փաստորեն այդ հնչյունը վերածվում է բաղաձայնի. մի քանի խուլերի մոտ նրա կիսաձայնութիւնը աստիճանաբար վերանում է.

Ուրեմն՝ մեր լեզվի մեջ փաստորեն երկրարբառ է կազմում միայն իա կապակցութիւնը սրու լառերում:

9. Հ Ն Չ Յ Ո Ի Ն Ի Ա Մ Ա Ն Ա Կ Է

Հնչյունները լինում են կարճ և երկար, այսինքն՝ մի հնչյունի արտաբերութիւնը մի գեպքում պահանջում է ժամանակի մի միավոր, իսկ մյուս դեպքում՝ երկու միավոր: Հենց հնչյունի արտառանական տեղութիւնն էլ կոչվում է ամանակ, կամ հնչյունի քանակ:

Ամանակը երկու տեսակ է լինում: Մի գեպքում հնչյունը կարճ կամ երկար է լինում ըստ իր բնույթի, այսինքն՝ հնչյունը իր գոյացման պայմաններում ձևավորվելու որակավորվել է որպէս երկար կամ կարճ հնչյուն. մյուս դեպքում հնչյունի ամանակը կախված է հնչյունաշարքում այդ հնչյունի ունեցած դիրքից. օրինակ՝ գերմաներենի

¹ Նկատի ունենք այսօրվա արտաբերական դրութիւնը. այդ պատճառով ե-ն գիտում ենք իբրեւ է:

ձայնավորները երկու բաղաձայնից առաջ՝ համարյա միշտ կարճ են, իսկ մի բաղաձայնից առաջ՝ երկար:

Հայերենում իրենց բնույթով երկար և կարճ հնչյուններ գոյություն չունեն. մեր ձայնավորները միմյանցից կարող են ամանակով տարբեր լինել, բայց որ և կամ օ ձայնավորները մի դեպքում կարճ լինեն, մի այլ դեպքում՝ երկար, այդպիսի բան գոյություն չունի: Բայց արդյո՞ք մեր ձայնավորները այս կամ այն դեպքում ամանակի զգալի տարբերություն չեն դրսևորում. դժվար է ասել, որովհետև դա Կովորական ախանջով չի զգացվում. դրա համար անհրաժեշտ է այլ կարգի ուսումնասիրություն, որ կապվում է գործիքների ու չափումների հետ:

Տաղանդավոր հայագետ պրոֆ. Մ. Աբեղյանը մեր ձայնավորների ամանակի մասին գրում է հետևյալը. «Հին հայերենում և և է տառերը նույն ձայնավորի նշանագիր են եղել, հավանորեն է տառը երկար ու փակ ձայնավորի, իսկ և տառը կարճ ու բաց: Բայց այժմ մեր գրական լեզվի մեջ այս երկու տառերը նման և հավասար տեղություններ են արտասանվում: Մենք այժմ որակի և ամանակի ոչ մի տարբերություն չենք գտնում հին ուղղագրության այս գիրքերի ևս կհիշէր կապակցության երկու շեր, շեր վանկերի և և է ձայնավորների մեջ: Ապա պետք է ենթադրել, որ հին գրարարի և երկրարբանից ծագած օ ձայնավորը միջին դարերում ու ձայնավորից տարբեր ավելի երկար ու փակ է արտասանվել, որ այլ հնչյունը ընդհանրապես չեն գրել հին կարճ ու բաց ձայնավորի ու տառով, այլ դրա համար մի նոր օ նշանագիր են մտցրել մեր այբուբենի մեջ. Բայց այժմ գրական լեզվի մեջ այս երկու տառերն ևս՝ ո, օ նման և հավասար տեղություններ են արտասանվում».¹ Համարյա նույն կարծիքին է եղել նաև Այտընյանը:

¹ Պրոֆ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 33: Համեմատիր Ա. Այտընյան, «Քննական քերականություն», էջ 361:

Ձնայած այս խոշորագույն հայազեւոյնների կարծիքին, այնուամենայնիւ նկատուած է, որ կրկնակ բաղաձայններից առաջ ընկած ձայնավորը ավելի կարճ է, քան մի բաղաձայնից առաջ գտնուածը. օրինակ՝ մասսաւ, բերքի, տարբաւան, ուղղակի. Աննա, սեղաններ, անգորր և այլ բառերի մեջ կրկնակի բաղաձայններից առաջ գտնուած ա, ե, ո, ու ձայնավորները ավելի կարճ են, քան նույն ձայնավորները այլ դիրքերում:

Կարծիք կա, թե ա խոնարհման բայերի ան ածանցի մեջ ա-ի պահպանումը մեր ազգային լեզվում, ի հակադրութիւն ե խոնարհման բայերի նույն ածանցի ա-ի անկման, պետք է բացատրել նախորդ ա-ի երկարությամբ: Բայց այդ անհավանական է, քանի որ հենց արարատյան մի շարք խոսվածքներում այդ ա-ն նույնպես ընկած է: Մենք այս խնդրին մանրամասն կերպով կանդրադառնանք հետո: Առայժմ նշենք նաև հետևյալը:

Հայերենի ձայնավորների ամանակը բառական ու քերականական արժեք չունի: Միայն ի հավելումն վերևում ասվածի՝ նկատուած է նաև, որ շեշտուած ձայնավորները համեմատաբար ավելի երկար են և սրան հակառակ՝ շեշտին մոտիկ գտնվող ձայնավորները կարճ են ոչ միայն շեշտավոր ձայնավորների համեմատությամբ, այլև շեշտից հեռու գտնվող ձայնավորների համեմատությամբ: Սրանով են բացատրվում շեշտին մոտիկ որոշ ձայնավորների տարբեր սղումները. օրինակ՝ մատանիք-մըտանիք, մատանիք-մատնիք, գողանալ-գողնալ:

Հայերենի, հնչյունափոխության օրենքներից գիտենք որ ի, ու, ձայնավորները շեշտը կորցնելով սղվում կամ փոխվում են ը-ի: Բայց մենք հայերենում ունենք բազմաթիւ բառեր, որոնց մեջ ի և ու ձայնավորները շեշտ չունեն, սակայն դիմացել ու հասել են մինչև մեզ. օրինակ՝ ուրազ, ծուղակ, գիշեր, սիսեռ և այլն: Ենթադրվում է, որ շեշտազուրկ, բայց հնչյունափոխված այս ձայնավորները նույնպես ժամանակին երկար են եղել և այդ

պատճառով չեն ենթարկվել հնչյունավորության: Եթե միևնույն ձայնավորները իրար մոտ են գալիս, մենք առանձին-առանձին ենք արտաբերում. օրինակ՝ ամենամա-
պետք, իսկ օտար բառերի մեջ կարճ ենք արտաբերում՝ օրինակ՝ կոոպերատիվ:

Մեր ձայնավորներից ակնհայտ կարճ է ը ձայնավորը. չենց այդ է պատճառը, որ մեր այբուբենի ստեղծողները շատ դեպքերում գրության մեջ ը չեն գրել, չնայած հըն-
չել են, և այժմ էլ հնչվում է: Հնչյունական որոշ կապակ-
ցությունների մեջ այդ չգրվող ը-ն երբեմն գուրս է ընկ-
նում. օրինակ՝ քնկեր(ը)դ առում է նախադասությունը հըն-
չում ենք՝ քնկեր դասում է: Նույնիսկ բառասկզբում գրվող
ը-ն որոշ դեպքերում այդ վիճակին է հասնում:

Մեր ձայնավոր հնչյունները կարող են գործածության
մեջ տարբեր ամանակ ունենալ. այդ շատ պարզ դգացվում
է որոշ ձայնարկությունների մեջ. օրինակ՝ է՛յ, հսկեցեք,
իմչ եք քնում: Ո՛վ լուսեղեն, դռերդ բաց: Օ՛ֆ, հերիք է,
չարչի ախպեր: Ի՛, դու էլ մարդ ես: Ո՛ւ, նա գիտես, իմչ է.
Ի և ու ձայնավորները երկար են, իսկ մյուսները՝ երկար
են, և՛ կարճ, և՛ ընդհատվող ու շարունակվող. օրինակ՝ վա,
էսենց շուտ (Նարդ. 4-րդ, 39): Այստեղ ա-ն կարճ է և հա-
տու: Հն-ն, սպասիր մեկ, ձեռքս դնեմ կրծքիդ (Նույն տե-
ղում, 122):-Հը՛, խոսիր է, կսկսեց բարեկամս անհամբեր
(Նույն տեղում): Առաջին օրինակում ա-ն երկարում է, իջ-
նում, ապա կարճեք կտրվում է և երկրորդ մասում շեշտ-
վում: Երկրորդ օրինակում ը-ն շեշտվում է հատու՝ առանց
տեղականություն: Հնչական այդպիսի վիճակներ կարող են
ունենալ նաև հարցական, բացականչական, կոչական բա-
ռեր:

Բաղաձայն հնչյունները տեղականությամբ նույնպես
տարբերվում են: Ընդհանուր երևույթ է, որ շփական բա-
ղաձայնները ավելի տեղական են, քան պայթականները,
սակայն այդ տեղականությունը խոսքի մեջ մնում է ան-
նկատելի: Բաղաձայնների տեղականությունը ավելի որո-

շակի զգացվում է կրկնակ բաղաձայնների մեջ, որոնք հայերենում սակավ դեպքերում բառակազմական արժեք են ներկայացնում: Ռուսերենում կրկնակ բաղաձայնների արտասանության մեջ նկատված է երկու երևույթ. եթե կրկնակ բաղաձայնը հանդես է գալիս երկու տարբեր ձևությամբի կցման հետևանքով, ապա կրկնակ բաղաձայնը միշտ երկար է հնչվում. իսկ եթե վերջինս միևնույն արմատի մեջ է, ապա այս դեպքում կարող է լ' երկար, լ' կարճ արտասանվել:

Նկատենք, որ կրկնակ բաղաձայնը միևնույն բաղաձայնի տեսական արտաբերությունն է, որ հայերենում ունի իր որոշակի առանձնահատկությունը:

Եթե կրկնակ բաղաձայնները առաջանում են երկու տարբեր ձևությամբի կցման հետևանքով, ապա արտաբերվում են երկար. օրինակ՝ սեղան-սեղաններ, նշան-նշաններ և այլն: Բացառություններ նկատվում են այն դեպքերում, երբ նով վերջացող միավանկ բառը դառնում է բարդ բառի վերջին բաղադրիչը և-եր հոգնակիացնող մասնիկի վրա լարեն ընդունում է -ներ. օրինակ՝ բաղաձայներ բառը արտաբերվում է որպես բաղաձայներ: Այստեղ նկատի պետք է ունենալ իմաստային մոմենտը. օրինակ՝ մեծատուններ բառի մեջ կրկնակ բաղաձայնը արտաբերվում է տեսական, որպեսզի տարբերվի մեծ տուներ (մեծ տներ) ձևից: Բաղաձայն բառի ձայն բաղադրիչի և ձայն բառի մեջ իմաստային ուժեղ հակադրություն գոյություն չունի, իսկ տուններ բաղադրիչի և տներ (տուններ) բառի միջև տակա է այդ հակադրությունը. Այստեղից էլ երկրորդ կանոնը:

Եթե կրկնակ բաղաձայնը միևնույն արմատի մեջ է, հայերենն ունի երկու տեսակ արտաբերություն: Այն դեպքում, երբ կրկնակ բաղաձայն ունեցող բառը ձևով չի նույնանում մի այլ անկախ իմաստ ունեցող բառի հետ, ապա կրկնակ բաղաձայնը իր սովորական տեսականության համեմատու-

¹ Տե՛ս „Грамматика русского языка“, т. I, 1953, изд. АН СССР, стр. 71.

թյամբ բաղական կարճ է արտաբերվում, օրինակ՝ անդոր-
րություն բառի մեջ քր հնչյունը արտաբերվում է համար-
յա սովորական չափով: Նույնպես և երրորդ, չորրորդ բա-
ռերը գրեթե արտաբերվում են երադդ և չորրորդ: Իսկ
երր կրկնակ բաղաձայնի կարճ արտաբերման դեպքում
իմաստով տարբեր երկու բառեր վերածվում են ձևական
նույնություն, այս դեպքում կրկնակ բաղաձայնի երկար
արտաբերությունը անխախտ օրենք է. օրինակ՝ քննել-քնել,
աբբա-աբբա, տոննա-տոնա, մաաաա-մաաա և այլն:

Կրկնակ բաղաձայնով մի շարք բառեր երկու տեսակ
են արտաբերվում: Արտաբերություն այդ ձևերը բնավ կապ
չունեն վերևում մեր քննած երևույթների հետ: Դրանք
առնչվում են տարբեր խոսվածքների արտասանության
զանազանակերպության հետ. օրինակ՝ պատել, խատել, կըտ-
տել, զննել և նման մի շարք այլ բառեր երբեմն արտա-
բերվում են խըտըտել, պըտըտել, զընընել և այլն: Այդ տե-
սակ արտաբերությունը արդեն բարբառային սկետք է հա-
մարել. ճիշտ գրականը կրկնակների երկար արտասանու-
թյունն է:

10. Վ Ա Ն Կ

Կենդանի խոսքի ինտոնացիոն թուլացումները, ուժե-
ղացումները և դադարները իմաստային մի ամբողջություն
և բնական անհրաժեշտություն են ներկայացնում: Խոսքի
համար կենսական անհրաժեշտություն հանդիսացող վերո-
հիշյալ երեք մոմենտները ոչ միայն կապվում են խոսքի
իմաստային կողմի հետ, այլև պայմանավորվում են ար-
տաբերողի և արտաբերված հնչյունների ֆիզիկա-ֆիզիոլո-
գիական առանձնահատկություններով: Խոսողն առանց իր
շնչառությունը կարգավորելու չի կարող խոսել, իսկ շնչա-
ռության կարգավորումը կատարվում է անհրաժեշտ դա-
դարների միջոցով: Ինչպես տեսանք, լեզվի հնչյունները
արտաբերվում են արտասանական տարբեր օրգանների և
միևնույն օրգանի այլևայլ մասերի միջոցով ու զրանց

բազմազան կոմբինացիաներով, որոնք ոչ միայն ձևավորում են այս կամ այն առանձնահատուկ հնչյունը, այլև օժտում են տարրեր ուժգնությամբ, տեախանությամբ և այլն:

Արդ՝ բառերի մեջ իրարից բազմազանորեն տարբեր հնչյունների կապակցումը պահանջում է ուժեղացումների, թուլացումների ու դադարների բնականորեն անհրաժեշտ մոմենտներ, որոնցով և պայմանավորվում է վանկի գոյությունը: Վանկը մարդու կողմից արհեստականորեն հնարված հնչյունախումբ է, այլ խոսքի, արտասանվածքի բնական հնչյունական բաժանման այնպիսի մի միավոր է, որը հեշտությամբ կազմում է նույնիսկ նոր թոթովող մանուկը:

Վանկ կազմվում է թե մի հնչյունից և թե մի քանի հնչյունների միացումից: Լեզվի բոլոր հնչյունները չեն, որ կարող են վանկ կազմել: Հայերենում վանկ են կազմում միայն ձայնավորները, որոնք կոչվում են վանկարար հնչյուններ: Ձայնավորների կամ վանկարար հնչյունների շուրջ ավել կամ պակաս քանակով խմբավորվում են բաղաձայնները կամ ոչ-վանկարար հնչյունները և կազմում են տարբեր տեսակի վանկեր:

Հարց է առաջ գալիս. ինչո՞ւ վանկ են կազմում միայն ձայնավորները: Հնչյունները լինում են երկու տեսակ՝ լիահունչ և թերահունչ. վանկ կազմում են այն հնչյունները, որոնք բնորոշվում են իրենց լիահնչությամբ: Այժմ մեր լեզվի լիահունչ հնչյունները ձայնավորներն են: Շատ հնում վանկ են կազմել նաև ձայնորդները, բայց այժմ դրանք ոչ-վանկարար հնչյուններ են և հնչեղությամբ մոտենում են բաղաձայններին: Ուրեմն՝ վանկը հնչյունական այն միավորն է, որ իր հնչեղությամբ աչքի է ընկնում իրեն սահմանազատող մոմենտների նկատմամբ, որոնք արտահայտվում են զգալի թուլացումներով և կամ դադարներով:

Երբ մենք հնչում ենք ագահ բառը, սկսում ենք լրիվ դադարից. ուրեմն ա-ի սկիզբը ամենաթույլ մոմենտն է,

որ աստիճանաբար ուժեղանում է. հասնելով զ պայթակահին, շնորհիվ գ-ի հնչման համար անհրաժեշտ փակվածքին, օդի հոսանքը լրիվ դադարում է և ա-ի արտաբերությունը ընդհատվում է դարձյալ դադարով: Ուրեմն՝ ազաի բառի մեջ առաջին ա-ն աչքի է ընկնում իր հնչեղությամբ և սահմանադատվում է լրիվ դադարներով և կազմում է մի վանկ: Ավագ բառը արտասանելիս վ-ի մոտ, ճիշտ է, փակվածք չի գոյանում, բայց շնորհիվ վ-ի արտաբերության համար անհրաժեշտ նեղվածքի, առաջ է գալիս արտաբերական թուլացում, որտեղ էլ ընկնում է վանկի սահմանը: Ուրեմն՝ ավագ բառի մեջ առաջին ա-ն վանկ է կազմում՝ առնվելով սկզբնական դադարի և հաջորդ թուլացումի միջև: Վանկի հասկացողությունը ավելի պարզ կդառնա, եթե որևէ ձայնավոր երկար արտաբերենք և արագ-արագ ձեռքով փակենք բերաններս ու բանանք: Որքան անգամ փակենք և բանանք, այնքան վանկ կստացվի:

Վանկի սկիզբը ավելի ուժեղ է քան վերջը (պետք է նկատի առնել արդեն հնչական պրոցեսը). այդ է պատճառը, որ վանկի սկզբում բաղաձայնները ուժեղավերջ բաղաձայններ են, իսկ վանկավերջ բաղաձայնները՝ ուժեղասկիզբ¹, այսինքն՝ առաջին դեպքում բաղաձայնները՝ աստիճանաբար ուժեղանում են, իսկ երկրորդ դեպքում ուժեղացումից դնում են դեպի թուլացում: Սա է բնական արտաբերական վիճակը, որի հիման վրա կատարվում է հրնչյունական բաղմամպիսի շղթաներից կազմված բառերի վանկատումը, մանավանդ երբ բառերը խճողված են բաղաձայնների խմբերով. արտաբերական այդ վիճակի ռեալությամբ են բառերը վանկատվում: Վանկը լինում է փակ և բաց, կարճ և երկար. ըստ որում կարճությունը և երկարությունը պայմանավորվում են ոչ միայն ձայնավորի կարճությամբ ու երկարությամբ, այլև վանկի մեջ մտնող հնչյունների քանակով:

¹ Грамматика русского языка т. I, 1953, изд. АН СССР, стр. 71.

Հայերենում երբ բառն ունի երկու կից ձայնավորներ, վանկատելիս մեկը մնում է նախորդ վանկում, իսկ մյուսն անցնում է հաջորդը: Հայերենում նման վիճակ ստեղծվում է երկու տարբեր ձևությոնների կցությոններում. օրինակ՝ ամենաուրախ, ամենաարագ, ամենաընդունակ և այլն: Բայց տեղծվում են երկու տարբեր դրսևթյուններ. եթե կցութիւնում երկու ձայնավորները միևնույնն են, ապա վանկատումը կատարվում է զուտ իմաստային կողմի հաշվառման հիման վրա. բացի սրանից, հայերենում հենց այդպիսի հնչյունները իմաստի պահանջով արտաբերվում են առանձին դադարով. օրինակ՝ ամենաարագ բառը արտաբերում ենք ամենա-արագ, եթե փորձենք մի երկար ա արտաբերել, չի ստացվի. ծայրահեղ դեպքում մի ա-ն ընկնում է: Իսկ երբ տարբեր ձայնավորներ են, վերոհիշյալ պայմանին միանում է առանձին ձայնավորների հնչեղության տարբեր աստիճանը, այսինքն՝ ուժեղից անցում թուլացումը կամ հակառակը: Էի, էիր ձեռքը մենք վանկատում ենք է-իր, է-իր, այդպես էլ՝ տեսնե-իր: Իմաստային կողմը նպաստում է ոչ միայն միևնույն բառի մեջ եղած ձայնավորների առանձնացմանը, այլև նախադասության մեջ իրար մոտեցող ձայնավորների առանձնացմանը. օրինակ՝ անսխառնալի այն խոսքը իրականացավ: Վանկատման մեջ բառիմաստը այնքան ուժեղ զեր ունի, որ դրա առկայությամբ հաշվի չի առնվում բնական վանկատումը. այդ է պատճառը, որ բաղադիր բառերը վանկատում ենք ըստ առանձին ձևությոնների. օրինակ՝ լուսանկար, ջրագրգիտ, անգրդջում բառերը վանկատում ենք՝ լուսա-նկար ան-գրդջում և այլն: Սակայն պետք է նշել նաև, որ այս դեպքում իմաստային վանկատումը լեզվի ստեղծած հնչյունախմբերի յուրահատուկ օրինաչափ դասավորությամբ գերազանցապես համապատասխանում է բնական արտաբերական վանկատմանը. անկար բառը մենք կվանկատենք՝ ան-կար, իսկ լուսանկար բառը անհնար է այդպես վանկատել, որով-

հետև մենք ոչ թե հնչում ենք լուսան-կար, այլ լուսանը-կար, որտեղ ըստ կանոնի արգեն ն-ն անցնում է հաջորդ վանկը:

Հայերենում երկու ձայնավորներ միևնույն բառի մեջ հանդիպում են նաև օտար բառերում. օրինակ՝ ամեորա, իդեա, քեորիա, աերապլան, բոա, կոոպերատիվ, կախո, կլո-ուն և այլն (բարդ թե ածանցավոր, սրանք մեր լեզվի հա-մար պարզ բառեր են): Գրական արտասանության մյուս բառերը հնչում ենք ա-մե-ո-բա, ի-դե-ա, քե-ո-րիա (թերևս այստեղ իա-ն երկրարբառ է). ա-ե-րո-պլան, բո-ա, նթե եր-կուան էլ միևնույն ձայնավորներն են, ապա մենք հնչում ենք որպես մի վանկ, չնայած գրության մանկատում ենք երկուսի. օրինակ՝ կո-ո-պերատիվ:

Վանկատման դեպքում որոշ դժվարություն են ներկա-յացնում բաղաձայնների կուտակումները: Երբ երկու ձայ-նավորի միջև ընկնում է որևէ բաղաձայն (նաև կիսաձայն-յ-ն), ապա ըստ վերևում հիշատակված այն օրենքի, թե բա-ղաձայնները վանկի սկզբում ավելի թույլ սկիզբ ունեն, բաղա-ձայնը անցնում է հաջորդ վանկը, այսինքն՝ վանկատման սահմանը (ամենաթույլ կետը) ընկնում է այդ մի բաղա-ձայնից առաջ. օրինակ՝ դանակ դա-նակ, ո-բակ, շա-վիդ, գո-յություն, ծառա-յություն և այլն:

Երբ երկու ձայնավորների միջև ընկած են երկու տար-րեր բաղաձայններ, ապա վանկատման սահմանագիծը ընկ-նում է երկու բաղաձայնների միջև. այսինքն՝ բաղաձայն-ներից մեկը մնում է նախորդ վանկում, իսկ մյուսը անց-նում է հաջորդը. օրինակ՝ պառ-կել, զար-կել, զար-մանալ և այլն: Այս դեպքում էլ յ-ն հանդես է գալիս իբրև բաղա-ձայն. օրինակ՝ պայ-ման, լույ-սի, ար-յուն և այլն: Վան-կատման այս երևույթը բացատրվում է նրանով, որ ար-տաբերության պրոցեսում ձայնավորից բաղաձայնին անց-նելու մոմենտը ավելի ուժեղ է, քան անցումը բաղաձայ-նից բաղաձայնին: Բացի սրանից, մեր արտաբերական ունակության համաձայն՝ մենք բառասկզբում երկու բա-

դաձայնով բառ չենք կարող արտաբերել. եթե այդպես է գրությունը ամբողջական բառի նկատմամբ, ապա նույնը կարող է վերաբերել նաև նոր վանկին. այսինքն՝ եթե երկու բաղաձայն տանենք նոր վանկը, հակառակ բառի արտաբերական բնական վիճակի, մի վանկ կավերացնենք և կադավադենք բառը. օրինակ՝ կա-նչել, պա-տկեր. սա կհնչենք կա-նը-չել, պա-տը-կեր, որ իսկապես՝ բառի ադավադումն է:

Տարբեր կերպ է բացատրվում կրկնակ բաղաձայն ունեցող բառերի վանկատումը բառամիջում: Բոլոր դեպքերում կրկնակ բաղաձայնը բաժանվում և մեկը մնում է նախորդ վանկում, իսկ մյուսը գնում է հաջորդը: Այսպիսի վանկատումը հակադիր է տեսական ընդունման, որովհետև մենք ընդունում ենք, որ կրկնակ բաղաձայնը իր գրությամբ մի երկար բաղաձայն է: Եթե այսպես է, ապա ուրեմն միևնույն հնչյունը չի կարող վանկատվել երկու մասի: Սակայն այդպիսի վանկատումը մեկնաբանվում է այսպես. եթե կրկնակ բաղաձայնը շփական է, ապա այդ երկար արտաբերվող շփականի մեջտեղը արտաբերումը պելլի թույլ է, քան նույն հնչյունն սկզբի և վերջի եզրերը. հովվական բառի հովվա վանկերի ամենաթույլ կետը կրկնակ բաղաձայնի մեջ է, ուստի վանկատվում է հով-վա:

Երբ կրկնակ բաղաձայնը պայթական է, ապա պայթական հնչյունն արտաբերությունը արդեն ստեղծում է վանկատման պայմանը: Պայթականները արտաբերվում են երկու գրությամբ՝ հպումով ու պայթումով. կրկնակ պայթականի առաջին կեսը սկսվում և վերջանում է հպումով, իսկ մյուս կեսը՝ պայթումով. իսկ ամենաթույլ կետը (գրեթե դադար) ընկնում է հպման և պայթման միջև: Ուստի արբա, Ադդա, տոնա, ֆիննակաՆ և այլ բառեր վանկատվում են՝ ար-բա, Ադ-դա, տոն-նա, ֆին-նակաՆ և այլն:

Մենք խոսեցինք բառամիջի մեկ և երկու բաղաձայնների վանկատման մասին. այժմ խոսենք բառամիջում կուտակված բաղաձայնների վանկատման մասին, որ բա-վականին գովարություններ է ներկայացնում:

Նայա և առաջ մի դիտողությունն. ր և ո ձայնորդները կուտակման մեջ իրենցից առաջ միշտ պահանջում են մի ձայնավորը, իսկ իրենցից հետո, առանց վանկի՝ Ե-ի կցում գրեթե չեն հանդուրժում. այդպես է նաև դ-ն, որ իրենից առաջ հաճախ մի ձայնավոր է պահանջում. այդ է պատճառը, որ մենք ձեռնահաս, ձեռնատու բարդ բառերը հնչել ենք ձե-որն-տու, ձե-որն-հաս. դժվարությամբ ենք վանկատում ձեռն-տու, ձեռն-հաս. այսպիսի հնչումը արհեստական է և բռնի: Այդպես էլ պատրվակ, մատուվակ, արկղ, աստղ հնչում ենք պա-աքր-վակ, մա-աքր-վակ, արկըղ, աւ-աքղ: Եթե այս հնչյունները չկան, ապա բառամիջում երեք բաղաձայններից երկուսը մնում են նախորդ վանկում, իսկ մեկը անցնում է հաջորդը: Մեր լեզվի հնչական օրենքների համաձայն վանկի սկզբում չի կարող երկու բաղաձայն լինել. եթե երկու բաղաձայնը անցնի հաջորդ վանկը, ապա բառի վանկերի թիվը արհեստականորեն կավելանա. օրինակ՝ զանգված, հայտնի, մարգպան, մարդկային, մարմնամարզություն և այլ բառեր վանկատում ենք զանգ-ված, մարգ-պան, մարդ-կային և այլն, միայն մարմնամարզություն բառը հընչվում է նաև մար-մընամարզություն:

Հայերենում բառի մեջ չորս բաղաձայն հազվագյուտ է հանդիպում. դա պատահում է միայն տարբեր ձևությամբների կցման պայմաններում: Այս դեպքում բնականորեն երեք բաղաձայնը մնում է, իսկ մեկն անցնում է հաջորդ վանկը: Մ. Արեղյանը բերում է այսպիսի օրինակներ՝ քղանցքներ, առանցքներ, միջանցքներ, որակող անցք արդեն միավանկ բառ է և հեշտությամբ առանձնանում է ոչ միայն վերջին -ներ մասնիկից, այլև նախորդ արմատից (բարդ բառերի վանկատման օրենքով): Հայերենում բառամիջում չորս կամ ավելի բաղաձայն կարող է առաջանալ նաև հնչյունափոխության հետևանքով, կամ այլ պայմանների առկայությամբ: Օրինակ՝ կայծկլառլ, անքննելի, անդրդվելի, Անդրկովկաս, անդնդախոր, անխղճություն և այլն: Այս և նման բառերը վանկատվում են ոչ միայն բնական վան-

Վատման կանոններով, այլև ձևաբանական, իմաստային և բառական կողմերի հաշվառումով: Հայերենում երեք բաղաձայնը մի ձայնավորի մոտ կարող է միավանկ արտարերվել, բայց և կան այնպիսի բաղաձայններ, որոնց միավանկ արտաբերությունը հնարավոր չէ, օրինակ՝ անգղ, արնղ, անդր, ասաղ և այլն, ուստի այսպիսի բառերը պետք է վանկատենք ան-դըր, աս-տըղ, ան-գըղ, ար-կըղ (կոճղ հնչվում է երկու տեսակ՝ կոճղ և կո-ճըղ): Ըստ վերևում նշված պայմանների կայծկլտալ, անքննելի, անդրդվելի, անդրնդախոր, անխղճություն բառերը վանկատվում են այսպես՝ կ-այծ-կըլ-տալ, ան-քըն-նելի, ան-դըրդ-վելի, ան-դըն-դա-խոր, ան-խըղ-ճու-թյուն և այլն:

Հայերենում որոշակի դժվարություն է ներկայացնում բաղաձայնների խմբին հաջորդող յ ձայնորդի հետ կապված վանկատումը: Մ. Արեղյանը նշում է, որ յ հնչյունը երկու բաղաձայնից հետո պահում է իր հստակաձայն ձայնավորի հատկությունը, ուստի բաղաձայններից մեկը միշտ յ-ի հետ անցնում է հաջորդ վանկը. օրինակ՝ ար-դյոք, ան-կյուն, աղ-բյուր, թըն-դյուն, որ-դյակ, տա-մյակ, ծոփ-նյա, երկամ-սյա և այլն¹: Այս բացատրությունը միանգամայն ճիշտ է, քանի որ երկու բաղաձայնի միջև ընկած արտաբերությունը շատ ավելի թույլ է, քան մի բաղաձայնի և յ կիսաձայնի միջև: Այս դեպքում ոչ մի բացառություն չի կարող լինել, որովհետև երկու բաղաձայնից հետո յ-ն հնչվում է ի-ին մոտ: Իսկ ինչ վերաբերում է մի բաղաձայնի և հաջորդող յ-ի հարցին, գրությունը որոշ չափով փոխվում է: Ամենից առաջ պետք է հաշվի առնել ձևաբանական և իմաստաբանական հանգամանքները:

Եթե միևնույն բառի մեջ բաղաձայնի և յ ձայնավորի կապակցությունը առաջանում է իմաստաբանորեն պարզ ըմբռնելի տարբեր ձևություններից, ապա անհրաժեշտ է վանկատել այնպես, որ բաղաձայնը մնա նախորդ վանկում,

¹ Պրոֆ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 96—97:

խոյ յ-ն անցնի հաջորդը. մեր կարծիքով այժմ արհեստա-
կան է արևմը-տյան, արևե-լյան, վերոհի-շյալ և այլ բառե-
րի նման վանկատումը. բնականը և ճիշտն է՝ արևմըտ-յան,
արևել-յան, վերոհիշ-յալ, սևաշ-յա, տաաճաճ-յա, հեգաճ-յա,
Քարայել-յան, Համբարձում-յան և այլն:

Հայերենում յ-ին նախորդող ո, դ, ք բաղաձայն հընչ-
յունները ի բնե արդեն չեն կարող անցնել նոր վանկը,
որովհետև այդ հնչյուններով հայերեն բառեր համարյա
չեն սկսվում. ա-ռյուծ, ա-ղյուս, Կո-րյուն, հա-քյուր, Տեր-
տե-րյան, Արե-ղյան և այս կարգի այլ բառերի հին այսպի-
սի վանկատումը ոչ թե հիմնված է եղել ճիշտ արտաբե-
րության վրա, այլ կախված է եղել գրությունից. հնում
գրանք գրվում էին առիւծ, Արեղեան . . ., որտեղ ի, ե հա-
մարվում էին ձայնավորներ, և չէր կարելի առիւծ բառը
վանկատել առ-իւծ: Այդպես է մասամբ գրությունը այժմ
հեքիաթ, Ֆրանսիա, Իտալիա և նման այլ բառերի վանկատ-
ման նկատմամբ: Դրանք հնչվում են հեք-յաթ, Ֆրանս-յա,
Իտալ-յա, բայց մենք վանկատում ենք հե-քի-աթ, Ֆրան-
սի-ա, Իտա-լի-ա:

Այժմ անկարելի է, որ ա և ո կամ ե և դ և այլ ձայ-
նավորների ու բաղաձայնների միջև արտաբերությունը
սովելի թույլ լինի, քան որևէ բաղաձայնի և յ-ի միջև. ուս-
տի այնպիսի վանկատումը, ինչպես սե-նյակ, մե-ռյալ և
այլն, այժմ հնացած է ու արհեստական. սա հավասար կլի-
նի այն բանին՝ եթե այսօր բանավոր, զորավոր, ցավալից,
երեվակ (հին գրությամբ բանաւոր, երեւակ) և այլն, վան-
կատենք բանավ-որ, զորավ-որ, ցավ-ալից, երեվ-ակ և այլն.
հնում այսպես էլ սողազարձում էին¹:

Անհրաժեշտ է բաղաձայն յ-ն վերոհիշյալ բաղաձայն-
ներից անջատել և տանել հաջորդ վանկերը. սրան նպաս-
տում է նաև այն հանգամանքը, որ յ-ն գերազանցապես

¹ Տես Ա. Այսրեյան, «Քննական քերականություն արդի հայերեն
լեզվի», էջ 349:

այս դեպքում հանդես է գալիս իբրև առանձին ձևությո՛ւն սկզբի հնչյուն:

Այս նույն դժվարությունը ներկայանում է նաև մ, լ, ճ, հ, վ հրնչյուններից հետո յ ձայնորդի վանկատման ժամանակ: Պետք է դարձյալ տողադարձել այսպես՝ մեհ-յան, Հով-յան, ավ-յուն, Ան-յա, լոն-յայն:

Սույն ձևով պետք է վանկատել մյուս բաղաձայնների հետ կապվելիս և այն դեպքում, երբ յ-ին նախորդող բաղաձայնից առաջ մի յ կա կա. օրինակ՝ Հայր-յան, պայթ-յուն. Հայկ-յան, փայթ-յուն և այլն:

Ինչ վերաբերում է -ություն-ով ամանցած բառերի-յուն կապակցության տողադարձին, ապա սա պետք է թողնել ըստ տրագիցիոն կանոնի. չնայած այժմ էլ կան պետութ-յուն, գիւտութ-յուն ձևով վանկատողներ:

Արեղյանը այս կարգի և վերևում հիշատակված տողադարձի մեր բերած ձևերը (յ-ի հետ կապված) համարում է բարբառային արտահայտություններ, մինչդեռ այժմ մեզ լեզվի հնչարտաբերական վիճակն է թելադրում այդպես վանկատել:

Տողադարձի ժամանակ դժվարություն է ներկայացնում նաև բառասկզբում գոյություն ունեցող բառերի բաղաձայնների կուտակումը: Արդեն ասված է, որ հայերենը երկու բաղաձայնով բառ չի սկսում. այնպիսի բառեր, ինչպես՝ կրակ, նրագ, դմակ, բնակվել, վրա, դնել և այլ բառեր մենք հնչում ենք կըրակ, նըրագ, դըմակ, բընակվել, վըրա, դընել և տողադարձում այնպես, ինչպես երկու ձայնավորի մեջ ընկած մի բաղաձայնի տողադարձման դեպքում, այսինքն՝ կը-րակ, նը-րագ և այլն: Սույն ձևով արտաբերում ենք և այն բառերը, որոնք սկսվում են երեք բաղաձայնով. օրինակ՝ ժխտել, վատահ, դժբախտ, աընկել, ախտում, գնդել, զբրկել և այլն: Սրանք էլ տողադարձում ենք ճիշտ և ճիշտ երկու ձայնավորի միջև ընկած երկու բաղաձայն ունեցող բառերի վանկատման ձևով, այ-

սինքն՝ ժըխ-տել, վըս-տան, դըծ-բախտ, աըն-կել տըր-տում, գըն-դել, գըր-կել և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենում երկու բաղաձայնի միջև միշտ ձայնավոր է եղել. այսպես՝ վրա-վերայ, մնալ-մանալ, մտածել-միտածել և այլն: Այդ ձայնավորների մի մասը հնչյունափոխվել է նախադատմական ժամանակներում, մի մասը՝ գրաբարի վաղ շրջանում, իսկ մյուս մասն էլ՝ ուշ և այժմ: Այդ հնչյունափոխությունից ստացված ը ձայնավորը այնքան թույլ է հնչվել, որ մեր գրականության հիմնագիր Մեսրոպը գրությամբ չի հաստատել այն: Սրա հետևանքով այժմ բառեր ունենք, որոնք սկսվում են չորս, հինգ և նույնիսկ վեց բաղաձայնով, մինչդեռ մեր լեզվին յուրահատուկ արտաբերությունը բաղաձայնների կուտակում երբեք չի հանդուրժում: Այս դեպքում պետք է ճիշտ կերպով դանել հընչյունափոխությունից ստացված ը ձայնավորի տեղը և վանկատելիս գրել:

Եթե բառակիրում կա չորս բաղաձայն, պետք է նախ նկատի ունենալ հետևյալը. միշտ ք-ից և ու-ից առաջ կա մի ը ձայնավոր, և որքան ր կամ ո կա բաղաձայնների կուտակման մեջ, այնքան ը ավելացվում է: Սովորաբար զրանք երկուսից չեն անցնում և այդ տեսակ բառերը վանկատվում են այսպես՝ գըր-գըռել, մըռ-մըռալ: Երբ երկու ր-ն իրար մոտ են, ապա բառը վանկատվում է այսպես՝ օրինակ՝ մը-բըրկի: Եթե ր-ն առաջին վանկում է, այսինքն՝ Ձ-րդ բաղաձայնն է առաջից, ապա երկվորյուն է առաջանում. երբեմն ր-ին հաջորդող բաղաձայնը կարող է մնալ առաջին վանկը, երբեմն անցնել հաջորդ վանկը. վերջին դեպքում բառը մի վանկով ավելանում է. օրինակ՝ քըրտ-նել—քըր-տը-նել, տըրտ-մել—տըր-տը-մել: Արտասանության վերջին ձևերն արդեն բարբառային են և մերժելի. սրան համապատասխան՝ բառեր կան, որ երկրորդ ձևով չի կարելի վանկատել. օրինակ՝ խըրտ-չել, չի կարելի ասել խըր-տըչել: Բայց կան նաև այնպիսի բառեր, որ առաջին ձևերով

չեն վանկատվում, այսինքն՝ ր-ին հաջորդող բաղաձայնը չի կարող ր-ին կաթծ մնալ և չանցնել հաջորդ վանկը. օրինակ՝ սըր-սըփալ (սըրս-փալ ճիշտ չէ): Կարող է այս դեպքում ր-ից հետո ը հնչվել և այն ժամանակ ր-ն, իբրև երկու ձայնավորի մեջ ընկած բաղաձայն, անցնում է հաջորդ վանկը. օրինակ՝ սը-ըսկել:

Երբ ր կամ ռ-ն կուտակման վերջընթեր բաղաձայնն է, ապա այս դեպքում առաջին և երկրորդ բաղաձայններից հետո ը է լսվում, օրինակ՝ զը-մըռ-սել, մը-կըը-տել: Մնացած դեպքերում առաջին բաղաձայնից հետո ը-ն պարտադիր լսվում է, իսկ երկրորդ բաղաձայնից հետո գրական արտաբերությանը սովորաբար սղում է, իսկ բարբառայինը պահում է, և նման բառերը տողադարձվում են այսպես՝ աընտ-ղել (նաև տըն-տը-ղել), բըզկ-տել (ալիլի հաճախ բըզ-կտել, նաև բը-զըկտել, մըղկ-տալ (նաև հաճախ մըղ-կըտալ)):

Մ. Աբեղյանը նշում է, որ մեր բանաստեղծները օգտագործելով մեր լեզվի այս տեսակի բառերի վանկատման երկվությանը, տաղաչափության մեջ փոխում են տողի ամանակը և հարմարեցնում նախորդ կամ հաջորդ տողերին. օրինակ՝ Վարդը փըթթեց ու բուրեց (Խաչատրյան):¹

Որ արյան դաշտում փըթըթեն վարդեր (Հովհաննիսյան):

Վերևում բերված բառերից որոշ բայեր կարող են կրավորականի վ մասնիկը ընդունել, իսկ այս դեպքում այդպիսի բառերի բաղաձայնների կուտակումները անկարելի է մի վանկով սղել. օրինակ՝ զըրգ-սել, բայց միշտ զըր-զըռ-վել, բըր-բըր-վել: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ հինգ բաղաձայնով սկսվող բառերի երկրորդ և չորրորդ բաղաձայնից առաջ ը է հնչվում և վանկատվում է այսպես. բըր-բըն-ջուկ, տըր-տըն-ջալ: Սակայն սա պարտադիր կանոն չէ, քանի որ կուտակումները հաճախ այնպիսի կոմբինա-

¹ Պրոֆ. դ-ր Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933 թ., էջ 51:

ցիաներ են ստեղծում, որ ըն հնչվում է այլ դրությամբ և փոխում է վանկատման ձևը. օրինակ՝ վը-ըընդ-վել: Միշտ պետք է գտնել ը ձայնավորի տեղը:

Հայերենում պատահում են նաև վեց բաղաձայնով ըս-կըսվող բառեր. օրինակ՝ քրթմնջալ, որ վանկատվում է այսպես՝ քրրթ-մըն-ջալ:

Երբ բառը սկսվում է այնպիսի բաղաձայնով, որից առաջ ը է հնչվում, ապա տողադարձի ժամանակ այդ ը-ն գրվում է և բառը վանկատվում է այնպես, ինչպես բառամիջում բաղաձայնական կուտակում ունեցող բառերը. օրինակ՝ ստվեր, ստրուկ, սկսել—ըստ-վեր, ըստ-րուկ (հնչում են նաև ըս-տըրուկ), ըսկ-սել (նաև՝ ըս-կըսել):

Մի քանի խոսք սղման մասին առհասարակ. ստվեր, ստրուկ, սկսել, բառերի մեջ նկատվում են սղման տարբեր տեղեկեցներ. մինչդեռ ստվեր բառի մեջ հնարավոր չէ մի վանկ ավելացնել, բայց ստրուկ, սկսել բառերն ունեն այդ հնարավորությունը և այն էլ տարբեր աստիճանի. ըս-տըրուկ արտասանությունը գրական չէ, այսինքն՝ ուղիղն է ըստ-րուկ. իսկ ինչ վերաբերում է սկսել բառին, ապա դժվար է դա մի վանկ պակասով արտաբերել. ճիշտ վանկատումն է ըս-կը-սել: Սա ցույց է տալիս, որ ս, կ իրար հետ դժվարությամբ են մի վանկ կազմում: Այս պարագաներում առհասարակ առաջնալեզվային և ետնալեզվային հնչյունների այդ և նման կոմբինացիաները մի վանկով դժվար են հնչվում, ուստի պրկվել, բազմապատկվել, օգտվել երկու տեսակ են վանկատվում. պըրկ-վել—պըր-կըվել, բազմապատկ-վել—բազմապատ-կըվել, օգտ-վել—օգ-տըվել: Գրականը և ճիշտը ը-ով արտաբերությունն է: Իսկ ժողովրդից անցած բառերի սղված արտասանությունը տրհատական է, որովհետև դրանք հնչվել են և այժմ էլ հնչվում են չսղված. սըս-կըվել, պ-սր-տըկել, բըն-ջըվել, մըն-ջըվել, կըն-կըվել և այլն և ոչ՝ սըսկ-վել, բընջ-վել, մընջ-վել, պարտ-կել:

Գրականում էլ կան բառեր, որ անկարելի է սղված արտաբերել. դրանք այն բառերն են, որոնց բաղաձայնա-

կան կուտակման մեջ նախավերջին բաղաձայնը *ն է*, օրինակ՝ խըռըրվել, տեսնվել, գտնվել, գարնվել, բեռնվել, մեկնվել, բռնվել և այլն։ Սրանք բոլորն էլ հնչվում են բեռ-նըրվել, խըռ-նըրվել, գըռ-նըրվել...

Ուրեմն՝ երբ երկու բաղաձայն արտաբերություն տեղով ու իրենց այլ առանձնատկություններով խիստ հակադրվում են միմյանց, այսինքն՝ դրանց միջև ստեղծվում է ամենախիստ թուլացումը, ապա վանկատման սահմանը ընկնում է դրանց միջև։ Իսկ այդ ուժեղ թուլացումը ստեղծում է դրանց մի վանկում չտեղավորվելու պայման։ Օրինակ՝ խըցկ վանկի մեջ *ց-ից կ-ի* արտաբերություն անցնելը արտաբերական ուժեղ թուլացում, գրեթե դադար է պահանջում, և այդ պատճառով բառը հնչվում է խըցկըրվել և ոչ խըցկ-վել։ Այս դեպքում բառը կհնչի խըցըր-վել։ Բազմապատկվել հնչվում է երբեմն բազմապատկըրվել։

Սղում անհնար է նաև այն դեպքում, երբ վանկի վերջից երկրորդ բաղաձայնը *ր, ռ, ղ է*։ Սակայն այս դեպքում ը-ն ընկնում է դրանցից առաջ, և նախորդ վանկը մնում է բաց։ Օրինակ՝ պա-տըռվել, ծա-ղըրվել, գայթա-կըղվել, պատըրվակ, մա-տըռվակ և այլն։

Երկկերպ են վանկատվում նաև պատճառական բայերը։ յրոնց ցր և ցն մասնիկների մեջ կամ ը է հնչվում և կամ կապակցությունների հնչյուններից մեկը մնում է նախորդ վանկում, իսկ մյուսը անցնում է հաջորդը։ Օրինակ՝ մեծացնել—մեծա-ցընել, կռվեց-րեց—կռվե-ցըրեց, հատկացընել, հատկա-ցըրեց, հատկաց-րեց և այլն։

Բաղադրյալ բառերը վանկատվում են ըստ իրենց բաղադրիչների։ Այս դեպքում վանկատման կանոնները հաշվի չեն առնվում։ Օրինակ՝ բանա-ստեղծ, շնչա-սպառ, ան-զգույշ, ան-պտուղ, նորա-հնար, համա-դրել, արա-դրողականություն, ձեռն-տու, ակն-կալություն, ունկն-դիր, ազատա-գրել, բացա-տրվել և այլն։ Չի կարելի վանկատել տնդադ-րել, մեղադ-րել և այլն։

Նույն ձևով են վանկատվում նաև անհոգակապ ու կցական բարդությունները. օրինակ՝ հանձն-առու, երես-սրբիչ, հանձն-արարել, հուշ-արար, կիր-արկել, բանս-արկել, ակն-ածել, գործ-ածել, կես-օր, այծ-եղջյուր: Իսկ եթե բաղադրության առաջին մասը բարդության մեջ սղման հետևանքով ձայնավոր չունի, ապա վանկատելիս լսվող ձայնավորը պետք է գրվի. օրինակ՝ ռընգ-եղջյուր: Հիշյալ բարդ բառերի օրինակով վանկատվում են կցական այն բարդությունները, որոնք կապված են շաղկապներով, նախդիրներով¹. օրինակ՝ առ-և-տուր, ել-և-մուտ, այր-ու-ձի, ել-և-էջ, աղ-ու-հաց, որ-և-է, ինչ-և-է, վերջ-ի-վերջո, որ-և-իցե, վայր-ի-վերո, օր-ընդ-մեջ, գառ-ի-վայր և այլն:

Իբրև բաղաձայն հնչյուններ չեն անջատվում միայն գ, ց նախդիրները: Բայց սրանցով կազմված բառերի վանկատումը որոշ հմտություն է պահանջում. նախդիրը պետք է կցել բարդության այն բաղադրիչի հետ, որին նախապես վերաբերել է այն. օրինակ՝ գույն-գգույն, տարե-ցտարի, օրե-ցօր և այլն, չնայած այժմ տարածված է՝ տարեց-տարի, գույնըգ-գույն:

Ածանցավոր բառերը վանկատվում են պարզ բառերի նման, այսինքն՝ հաշվի է առնվում ոչ թե իմաստային կողմը, այլ՝ հնչականը. չի կարելի վառարան, սիրեցի, վեցերորդ բառերը վանկատել սիր-եցի, վեց-երորդ, վառ-արան, այլ՝ սի-րեցի, վառ-արան, վեց-երորդ և այլն:

Ածանցավոր բառերի նման են վանկատվում այնպիսի չին բաղադրությունները, որոնց այս կամ այն բաղադրիչի բառական նշանակությունը մեր լեզվական ըմբռնումով արդեն մեռած պետք է համարել. օրինակ՝ փայլակ, կայծակ, (կազմված, փայլ-ակն, կայծ-ակն):

Վանկատելիս ուղևերեն և օտար բառերի մեջ չի կարելի ը ավելացնել, օրինակ՝ Սպարառկ, Ստանկևիչ, Պեշկով-

¹ Այս կանոնը ա հոգակապին չի վերաբերում:

սկի բառերը չպետք է գրել Ըս-պարտակ, Ըս-տանկիչ, Պեշ-կով-ըսկի, այլ Սպար-տակ, Ստան-կիչ, Պեշկով-սկի:

Պետք է հայերեն տարր, սոսող, դուստր, ուստր, կայսր, մեդր, սանր, մանր, ծանր, եզր և այլ այսպիսի մեկուկես վանկ ունեցող բառերը վանկատումից զերծ պահել, որովհետև կստեղծվի ավելորդ խժայրություն ու անբնական արտաբերություն:

Խոսելու պրոցեսում խոսքի ընդհանուր հոսանքի մեջ նույնպես կատարվում է վանկատում: Հայերենում բառավերջի բաղաձայնները ընձեռում են վանկատման տարբեր վիճակներ: Օժանդակ բայից առաջ գտնվող գերբայի վերջին բաղաձայնը միշտ հնչվում է օժանդակ բայի հետ, այսինքն՝ կերե-լեմ, ասու-մէ, կարդացա-ծեմ: Նույնիսկ դ-ն չի մնում նախորդ վանկում. օրինակ՝ գրող եմ հնչվում է գրող-դեմ: Այսպես է նաև այլ գեպքերում. օրինակ՝ սե-ղա-նէ, մո-տէ, Այսինքն՝ սա մեր արտաբերության բնական բաժանումն է:

Այդպես էլ իրար հետ սերտ հնչվող երկու բառերի միջև ընկած մի բաղաձայնը անցնում է հաջորդ բառին. օրինակ՝ այ-սասելով, կ-ս-ն սշխ սմրում, թո-ղօրհնէ, Գիլիջա-նավանը (Մուրացան): Նման բաժանմանը նպաստում է նաև շեշտը: Այս գեպքում որոշ անհաստատություն են հանդես բերում ու և ր բաղաձայնները. մեզ թվում է, թե հընչում ենք ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, քար ու սար, քար առսվ: Բայց և՛ սա-րէ (սար է), Այդ անհաստատությունը պետք է բացատրել հետևյալ հանգամանքով. մեր բառերը ր և ո-ով չեն սկսվում, որին ավելանում է նաև բառիմաստի հանգամանքը: Պետք է նշել, որ այս երևույթները կապվում են տարբեր արտաբերությունների հետ:

Եթե իրար մոտ են գալիս երկու բաղաձայն՝ մեկը մի բառի վերջում, իսկ երկրորդը մյուսի սկզբում, ապա բառերը արտաբերվում են անջատ-անջատ. օրինակ՝ ձորահովիտը եզերող դիմացի բլուրներից: Երբ երկու բաղաձայնն էլ պատկանում են նախորդ բառին, ապա բաղաձայնե-

լից մեկը միանում է հաջորդ բառի ձայնավորին. օրինակ՝ կան-գառան, հոր-դու, սառ-նաղբյուրից, հեն-ցայս և այլն: Այս դեպքում ր-ն էլ հեշտությամբ անցնում է. օրինակ՝ ման-րու-խոշոր, ման-րեղավ: Դժվարություն է առաջանում, երբ հաջորդ բառն ունենում է ո կամ ր. օրինակ՝ մանր արա, ծանր առավ: Կրկնակ բաղաձայնները նույնպես ենթարկվում են նույն կանոնին, այսինքն՝ հնչվում են աան-նէ աար-րէ:

Եթե նախորդ բառը վերջանում է երեք բաղաձայնով, իսկ հաջորդը սկսվում է ձայնավորով, բաղաձայններից մեկն է անցնում հաջորդ բառին. օրինակ՝ միջանց-քանցավ: Երեք բաղաձայնով վերջացող բառերի վերջին բաղաձայնը հայերենում սովորաբար ր է, որից առաջ սովորաբար ք է հնչվում. օրինակ՝ ազր, թանձր, կարծր, կայսր, զուստր, ուստր և այլն: Ունենք նաև դ-ով վերջացողներ. օրինակ՝ աստղ, արկղ, անգղ, որտեղ դ-ից առաջ նույնպես ք է հնչվում և սրանք դժվարությամբ են անցնում հաջորդ բառին. օրինակ՝ մի անգղ անցավ, բարձր ազդանշանները լսվում են հետվից, թանձր արծաթագույն հեղուկը հոսում է:

Երբ հաջորդ բառը սկսվում է մի բաղաձայնով, վերջինս չի անցնում նախորդ բառին. օրինակ՝ Տիրացու Մոսինին, երեկվա դիտողությունը: Քանի բաղաձայնով էլ որ սկսվի կապակցության հաջորդ բառը, դրությունը մնում է այնպես, որպես թե սկսվում է մի բաղաձայնով, քանի որ հենց առաջին բաղաձայնից հետո ձայնավոր է հնչվում. օրինակ՝ ճանապարհի վրա. եսքերը զգում էր, բնության շքեղությունները և այլն: Դրությունը չի փոխվում, երբ նախորդ բառը վերջանում է մի կամ մի քանի բաղաձայնով. օրինակ՝ սիրով նվիրում եմ, մարդ գնաց: Ուրեմն հայերենում միայն մի բաղաձայնն է անցնում հաջորդ վանկը, իսկ հիշյալ պարագաներում հաջորդ բառի սկզբում արդեն գոյություն ունի տվյալ բաղաձայնը: Տարբեր է վիճակը, երբ հաջորդ բառն սկսվում է սա, շա, սպ կապակցություններով, իսկ նախորդ բառը վերջանում է որևէ բա-

զաճայնով. այս դեպքում հաջորդ բառակզբի չգրվող Ը-ն այնքան է թույլ, որ մեծ մասամբ նախորդ բառի վերջին բաղաձայնը մնում է իր տեղում, մանավանդ, երբ այդ բաղաձայնը ծ, ց, շ, ջ, ժ, ձ, ս, չ, տ, պ է. օրինակ՝ շատ շտապեց, մի մաս ստանձնեց, այդտեղից մի ծովածոց սկըսվում է: Որպեսզի բառերը չաղավաղվեն և մանավանդ խուսափենք միևնույն բաղաձայնների աններդաշնակ խառնակումից, բառերը արտասանում ենք զատ-զատ: Ը-ն այնքան է թույլ, որ ստեղծվում է նույնահունչ բաղաձայնների ուժեղ տարնամանություն, բայց սրովհետև անկախ բառերի իմաստային ինքնուրույնությունը շատ ուժեղ է, բոլոր բաղաձայնները պահպանվում են: Եթե այդ դեպքում ձևական բառեր են հանդես գալիս, ապա շուտ ենթարկվում են տարնամանության օրենքին. օրինակ՝ թող խաղա, թող խոսի կապակցությունններում հիմա գերազանցապես աննկատելի սկսում են հնչվել թո խաղա, թո խոսի: Խոսքի մեջ ձայնավորները նույնպես հանդիպում են իրար: Հայերենում արձակ խոսքի մեջ նորմալ արտաբերության ժամանակ ձայնավորները հորանջ չեն առաջացնում, որովհետև առանձին-առանձին են հնչվում. օրինակ՝ մի տղա ասաց: Տարբեր ձայնավորները ավելի դյուրութայամբ են իրարից անջատվում. օրինակ՝ մի ուրու անցավ: Է (ե)-ով վերջացող բառեր ունենք, բայց է-ով սկըսվող քիչ բառ ունենք. եթե պատահում է, որ է-երը հանդիպում են, ապա հորանջը փակվում է մի թույլ յ-ով. օրինակ՝ բազն էր հնչում ենք բազն-յեր: Այդպես է հնչվում երբ է-ն հաջորդում է ա, ի ձայնավորներին. օրինակ՝ ձի էր, տղա էր հնչվում են ձի յեր, տղա-յեր: Մասամբ թուլանում և գրեթե չի հնչվում ի ձայնավորը, երբ հանդիպում է մի այլ ի. օրինակ՝ մի իսկական մարդ, մի իմաստուն, հնչում ենք մի մաստուն, մի սկական: Ը-ն ձայնավորներից հետո գրեթե սղվում է, իսկ առաջ չի պատահում. Ը-ի փոխարեն ն է գործածվում: Հազվագյուտ է հանդիպում նաև օ հնչյունը՝ այստեղ նույնպես նկատվում է թուլացում:

օրինակ՝ քո օգնությունը հնչվում է քօգնությունը: Կարծեք այս դեպքում ի և օ որոշ չափով երկարում են: Նշենք, որ նման երևույթները չեն կարող տեղի ունենալ, երբ նախորդ բառը շեշտ ունի:

Հիշյալ երևույթները տեղի չեն ունենում, երբ խոսում ենք դանդաղ, հատ-հատ: Այս դեպքում որոշակի ընդգծվում է յուրաքանչյուր բառի սահմանը: Բառերի հանդիպման սահմանագծում բաղաձայնների կուտակումները և ձայնավորների հորանջները վերանում են նաև քնակա՛ն ու իմաստային գաղափարների, ընդգծված ինտոնացիոն իջեցումների ու բարձրացումների ժա՛մանակ, որպիսի երևույթները, ինչպես հայտնի է, գրություն մեջ արտահայտվում են կետադրություն նշաններով:

11. Հ Ա Յ Բ Ե Ն Ի Շ Ե Շ Տ Ը

Շեշտը որևէ վանկարար հնչյունի ուժգին արտաբերությունն է, որ առանձնանում է իր լարվածությամբ: Շնորհիվ արտաբերական ուժգին լարվածության, շեշտի տակ եղած հնչյունն ավելի երկար ու անվթար է պահպանվում, քան նույնատիպ հնչյունները շեշտադուրկ գրություն: Ուրեմն՝ շեշտը հնչյունի դիմացկունության, նրա անվթար պահպանման հիմնական միջոցներից մեկն է: Բավական է, որ հնչյունը կորցնի իր այդ գեները, աստիճանաբար կթուլանա և վերջապես դուրս կընկնի լեզվից: Մեր լեզվի մեջ կատարված հնչյունական խոշոր փոփոխությունները կապված են շեշտի հետ:

Հեղուներն ունեն երկու տեսակ շեշտ. մեկը կոչվում է ուժգնություն շեշտ, իսկ մյուսը՝ երաժշտական կամ տոնիկ շեշտ. առաջինը որևէ վանկարար հնչյունի ուժգին արտաբերությունն է, իսկ մյուսը ձայնի բարձրացումն է կամ իջեցումը: Հայերենում երաժշտական կամ տոնիկ շեշտը առանձին դեր չի խաղում, ուստի մենք այստեղ կխոսենք միայն ուժգնություն շեշտի մասին:

Սակայն ուժգնության շեշտն էլ իր հերթին լինում է բառային, տրամաբանական և քերականական: Մեզ այստեղ առանձնապես անհրաժեշտ է խոսել բառային շեշտի մասին, որովհետև հնչյունների փոփոխությունների, նրանց սզման մեջ հենց բառային շեշտն է, որ դեր է խաղում:

Ըստ մեծավաստակ գիտնական Հ. Աճառյանի՝ շեշտը լեզուների կյանքում անցնում է մի քանի գիրքերից: Առաջին՝ կարող է գտնվել որևէ վանկի վրա. շեշտի այդպիսի վիճակ ներկայումս ունի ռուսաց լեզուն. օրինակ՝ *ОКОЛО ПОДАРОК, ЗАГОЛОВОК, ПРЕПОЛАГАТЬ*.

Երկրորդ վիճակն այն է, թր շեշտը գրվում է վերջից երրորդ վանկի վրա (եթե վանկերը կարճ են), երկրորդ վանկի վրա (եթե վանկերը երկար են). այդպիսի շեշտ ունեն լատիներենը և հունարենը:

Երրորդ՝ գրվում է արմատի առաջին ձայնավորի վրա. այդպիսի շեշտ ունի գերմաներենը:

Չորրորդ՝ անցնում է նախավերջին վանկը. այժմ այդպիսի շեշտ ունի լեհերենը:

Հինգերորդ՝ սրանից հետո կարող է վերջին անշեշտ վանկը կորչել, և շեշտը մնալ վերջին վանկի վրա. այսպիսի շեշտ ունեն հայերենը, պարսկերենը, ֆրանսերենը:

Հինգերորդ դարում հայերենի շեշտը վերջին վանկի վրա էր. այդ հաստատվում է ոչ միայն տրագիցիոն ժամերգության շեշտով, այլև տառադարձության պատմական տվյալներով: Աղաթանդեղոսի հունարեն թարգմանության մեջ հայերենից անցած բոլոր հասարակ և հատուկ անունները շեշտը կրում են վերջին վանկի վրա, օրինակ՝ *Οόαλαροσπαδτ* (Վաղարշապատ), *Μαοις* (Մասիս), *Ατροπαταχάν* (Ատրպատական), *σχορβλ* (սահմի ամսանունը), *δοπετ* (ապետ): Այդպիսի շեշտ ունեն նաև հայկական աշխարհագրական այն անունները, որոնք գործածվել են հույն պատմիչների գործերում Յ-րդ դարից առաջ:

Որ Ծ-րդ դարից առաջ շեշտը եղել է նախավերջին վանկի վրա, դրա համար կան շատ ապացույցներ:

Ամենից առաջ հայերենն բառերը՝ հակառակ հնդեվրոպական լեզուների, վերջավորութիւնները հունենա՝ Բացի դրանից, կան նաեւ պատմական տվյալներ։ Ծ-ըզ դարում Կարաաի, պատաա-թաանի, Հիւսիսի, աշծուի, տեղի բառերի շեշտը նախափերջին վանկի վրա էր. այդ է պատճառը, որ դրանք զրկվեցին վերջին ի ձայնավորից։ Այսօր բառի աշծմ կազմութիւնը նույնպէս ցույց է տալիս, որ շեշտը եղել է նախափերջում։ Ենթադրում են, որ հայերենում շեշտը ուներ նաեւ բառակազմական, քերականական նշանակութիւն. սեբմն, կողմն, հիմն և այդ կարգի բառերի ուղղականները սկզբնապէս եղել են սեբման, կողման, հիման, իսկ սեռականները՝ սերման, կողման, հիման, այսինքն՝ ուղղականն ու սեռականը միայն շեշտով են տարբերվել։ Ուղղական ձևերի վերջին ձայնավորները անշեշտ մնալով սղվել են և տղել Ծ-ըզ դարի սերմն, կողմն, հիմն, ձևերը, իսկ սեռականները շեշտ ունենալով պահվել են անվթար։ Այս նշանակում է, որ հնում հայերենը ունեցել է նաեւ ազատ ու շարժական շեշտ և ոչ թե շարժական, բայց որոշակի դիրքում։

Եթե շեշտը ունի բառակազմական ու քերականական արժեք, անկախ լեզվի այս կամ այն հանգամանքից, զգալիորեն ուժեղ կլինի. այդպիսին է ռուսերենի շեշտը, այդպէս պետք է լիներ նաեւ մեր շեշտը։

Մեր որոշ բարբառների ուժեղ շեշտը բացատրվում է նույնպիսի հանգամանքներով. բարբառներում կոչական բառերը, ձայնարկութիւնները և նույնիսկ սովորական բառերը ունեն իմաստային շատ նրբութիւններ. հանդիմանութիւն, աղաչանք, բարկութիւն, դժգոհութիւն և այլ հոգեկան ու մտավոր պահանջներ դրսևորում են գերազանցապէս շեշտներով և այն էլ ոչ միայն տարբեր ուժգնութեամբ ու երանգով, այլև տարբեր դիրքով, օրինակ՝ Ըհը՝ (բաններս լավ է, կորանք, այս է անա), Ըհը՝ (տխուր, բան չեկաւ, որ ասում էի)։ Կարո՞ (կտրուկ արգելում է որևէ բան անել), Կարո (աղաչում է՝ հոտ կանգնել և այլն)։

Մեր բարբառների շեշտը դեռևս չի ուսումնասիրված, հնարավոր է, որ դրանք ունենան ո՛չ թե հաստատուն շեշտ, այլ տարբեր բառերի վրա, տարբեր գիրքի շեշտեր. Արարատյան բարբառի Ալավարսի, Նլղովանի խոսվածքներում մի շարք բառերի հնչյունափոխությունից երևում է, որ շեշտը վերջին վանկի վրա է, օրինակ՝ մաաանիք—մաննիք, հարսանիք—խառնիս, գութան—գութնվուոր, բայց՝ ասում եմ, խոսում եմ, երգում եմ հնչվում են ասքմ եմ, խոսքմ եմ, երգքմ եմ և այլն, որ ցույց է տալիս, թե շեշտը առաջին վանկի վրա է:

Մեր ազգային լեզվի շեշտը կապ ունի ոչ միայն գրաբարի շեշտի հետ, որտեղ շեշտը գերադանցապես վերջին վանկի վրա է, այլև նրա վրա ազդել են մեր խոսվածքների տարբեր շեշտադրությունները: Մ. Արեղյանը նկատել է, որ մեր գրական լեզվին լավ չտիրապետող ինտելիգենցիան հաճախ շեշտում է ոչ վերջին վանկը, այլ վերջընթեր և հերեմն էլ առաջին վանկը: Հաստատուն վերջավանկ շեշտադրությունը կենդանի շեշտադրություն չի եղել. դա մեր լեզվի հետ կապված է տրագիցիոն կերպով: Նվ միշտ էլ կենդանի շեշտադրությունը միջամտել է մեր արտասանությանը. այժմ էլ զեկուցումների ընթացքում, ռադիոյի միջոցով լսում ենք մեր բառերի տարբեր շեշտադրություն՝ արտաբերություն. օրինակ՝ հնչում են տնե՛տուն, սարե՛սար: Մեր լեզվի վերջավանկ շեշտը կայուն պահպանվում է բանաստեղծության մեջ:

Այժմ մի քանի խոսք առանձին-առանձին բառերի շեշտի մասին:

Ամեն բառ լեզվում շեշտ ունի կապակցություն մեջ. հաճախ կարող են շեշտը կորցնել որոշ օժանդակ բառեր և շաղկապներ, իսկ առհասարակ առանց շեշտի բառ չկա, բավական է, որ բառը առանձին գործածվի, շարակցության մեջ նրա կորցրած շեշտը վերականգնվում է: Շարակցության մեջ շաղկապները հաճախ այնպիսի ուժեղ շեշտ են

առնում, որ նրանց մոտ գտնված բառերը շեշտագուրկ են մնում: Հայերենում եմ օժանդակը գրում եմ, խոսում եմ և այլ ձևերի մեջ շեշտ չունի, բայց չեմ գրում, չեմ խոսում կապակցությունների ժխտականները շեշտի ամբողջ ուժը վերցնում են իրենց վրա. այդպես չէ՞ արդյոք և չաղկապը և՛ ես, և՛ դու, և՛ նա կապակցություններում և այլ գործածություններում: Ուրեմն՝ շարակցության մեջ կարող են շեշտագրվել ոչ միայն շաղկապները, օժանդակ բառերը, այլև մյուս բառերը:

Հայտնի է, որ միավանկ բառերը մի շեշտ ունեն, բայց կրկնվելով՝ կարող են երեք գրություն հանդես գալ. առանձին-առանձին շեշտերով, օրինակ՝ մա՛րդ, մա՛րդ որն է, մի ածգանա, հավերքը ներս անելիս ասում ենք աո՛ւն-աուն, նույնիսկ ասվում է աո՛ւն-աուն արա, իսկ երբ շատ է կրկնվում, դառնում է՝ աո՛ւնունո՛ւ նու: Բասահյանը գրում է՝ Նանի կասե, օ՛ր-օր, օ՛ր, (Զ-րդ, 16): Ասում ենք նաև վե՛ր-վե՛ր է բռնում, Բայց ասում ենք փու՛նջ-փու՛նջ աղջիկներ, խումբ-խո՛ւմբ աղաներ: Մեռ՛նեմ թուր-թո՛ւր ունքերիդ (Իս., Զ-րդ, 15): Այսպես էլ երկվանկ բառերը այժմ հաճախ շեշտում ենք երկու ձևով, չնայած գրական լեզվի պահանջին՝ շեշտել միայն վերջին վանկը. առաջին վանկով շեշտվում են առավելապես ժողովրդական բառերը, մասնավորապես երբ արտաբերվում են իբրև հարցում, զարմացում, հեգնանք, հանդիմանություն արտահայտելու համար. օրինակ՝ կա՛րմիր, ի՛նչ կարմի՛ր է որ: Ա՛րմեն, չեղավ է: Թումանյանը «Անուշի» մեջ յա՛յլա բառի շեշտը միշտ առաջին վանկի վրա է դնում.

օրինակ՝ Աս սարեր, յա՛յլա,

յա՛յլա ջան, յա՛յլա:

Հատուկ անունները կոչական գործածությամբ շեշտվում են առաջին վանկով.

օրինակ՝ Սա՛քո, Սա՛քո, մեզ մոտ արի:

Այն գեպքում, երբ առաջին վանկը ը-ով է, շեշտը վերջին վանկի վրա է. օրինակ՝ Մընո: Այգպես էլ սովորա-

կան բառերի շեշտը վերջին վանկի վրա է, երբ առաջին վանկը սուղ է. կըրակ, ճըրագ և այլն:

Մեր բազմավանկ բառերի շեշտը լավ ուսումնասիրված չէ: Մենք այժմ գրական լեզվում գրաբարի հետևողությամբ շեշտում ենք վերջին վանկը, բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկարաշունչ բառերը անհնար է մի շեշտով հնչել. այնպիսի բառեր, ինչպես վաճառահան, աշխարհայեցողություն, գերազանցապես, մոտավորապես, մարմնամարզություն և այլն, մենք այժմ հնչում ենք վանառակման, աշխարհայեցողություն, գերազանցապես, մոտավորապես, որտեղ առաջին շեշտերը թույլ են, իսկ վերջինները՝ ուժեղ: Այդպես էլ հնում մեր բառերը ունեցել են գլխավոր և երկրորդական շեշտեր, որոնք տարբեր դիրքերում են եղել: Այդ վիճակի պատկերը ներկայացնում են մեր բառերի տարբեր սղումները. օրինակ՝ կարկատան, կարկատան, կարկատե՛լ, կրկատե՛լ: Մեր խոսվածքում հնչում ենք Հերեման ա՛րխու՛ղ օ՛լբրե՛լ, լո՛խկընալ. առաջին շեշտը թույլ է. քանաբեռոցին, էլարեցին հընչում են՝ Հրե՛վան, քրիստո՛ղ, ճըլո՛րեկ, լըղա՛նալ:

Արարատյան խոսվածքների տարբեր շեշտադրությունը այսօր էլ ազդում է մեր գրական լեզվի շեշտադրության վրա:

Բացի հիշյալ ազդեցություններից, մեր լեզվի մեջ կան բավականաչափ բառեր, որոնց շեշտը վերջին վանկի վրա չէ: Այտընյանը բերում է այդ բառերը. գո՛նե, գո՛ցե, ճի՛ւմա, անդո՛ք, գա՛րձյալ. բարձ բառերից՝ անսօր, անսալես, ի՛նչպես, նո՛ւյնչափ, թե՛ն, թե՛պես, գրե՛թե, մի՛թե, մանսվանդ, վեցե՛րորդ, տասնե՛րորդ: Ինչպես ասվեց, կոչականների վերջընթեր վանկերը նույնպես կարող են շեշտվել: Վերջընթեր են շեշտվում նաև գաղտնավանկով վերջացող բառերը. օրինակ՝ աստղ, դառն, բարձր, ինքը, զենքերը, անոթները և այլն:

Մ. Արեղյանը վերջընթեր շեշտ ունեցող բառերը ամփոփել է հետևյալ վեց կետերում.

1. Հարաշեշտ բառեր, որոնց շեշտն ընկնում է վերջ-
րնթեր վանկի վրա. օրինակ՝ ասադ, արկդ, տարր, մեղր,
մանր, քանձր, կարծր և այն բոլոր բառերը, որոնց վերջին
վանկը ը-ով է:

2. Մի քանի բառերի շեշտն ընկնում է առաջին վան-
կի վրա, ինչպես՝ մանավանդ, նմանավանդ:

3. Մի քանի բառերի շեշտը դրվում է թե՛ առաջին և
թե՛ վերջին վանկի վրա. ինչպես՝ այսքան, այդքան, այնքան,
այնչափ, որչափ, ինչպես, որտեղ, այսպես, այսպիսի, նույն-
պիսի, դարձյալ և այլն: Այսպես են շեշտվում նաև դասա-
կան թվականները, օրինակ՝ երկրորդ, երրորդ, չորրորդ,
հինգերորդ և այլն:

4. Կոչական անունների շեշտը, նայելով առոգանու-
թյանը, կարող է ընկնել և՛ վերջին, և՛ միջին վանկերի վրա.
ինչպես՝ հայրիկ, կարապետ, հայրիկ, կարապետ, կարա-
պետ:

5. Հարադրյալ բայերի մեջ շեշտը վերցնում է նախա-
դաս հարադիրը. այդպես են նաև բայերի ժխտական բաղա-
դրյալ ժամանակները, որտեղ շեշտը ժխտականի վրա է
օրինակ՝ ցույց տալ, քննի տալ, չեմ գա, չի՛ գա և այլն:

6. Երկուսից ավելի վանկերից կազմվող հիշյալ բաղա-
դրյալ ձևերը կարող են ունենալ երկու շեշտ՝ ուժեղ (բա-
կըղբում) և թույլ (վերջում), երկրորդական շեշտեր ունեն-
նաև եռավանկ, քառավանկ բառերը:¹

Մեր լեզվում տարբեր դիրքի շեշտ ունեցող բառերի քա-
նակը սրանով չի սահմանափակվում: Շեշտադրության բաղ-
մագանությունը լիովին պարզ կգտոնա, երբ շեշտի խնդիրը
հատուկ փորձնական ուսումնասիրության կենթարկվի:
Սկզբում մեր լեզվի մեջ մտած փոխառյալ բառերը ստան-
գարտ կերպով ենթարկվում էինք մեր վերջաշեշտ հնչմանը,
այժմ այդպես չէ. ինչպես մյուս ժողովուրդները, այնպես
էլ մենք, այժմ նոր փոխառությունների մեջ հաճախ պահ-
պանում ենք փոխատու լեզվի, հատկապես ռուսերենի շեշտը:

¹ Դ-ը մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 20—21,

ՇԵՇՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

12. ՇԵՇՏԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՎՐԱ

Ինչպես վերեւում նշվեց, մեր արդի բարբառներից շատերն ունեն ուժեղ շեշտ. այդ շեշտի հետեանքով բարբառների հնչյունները ենթարկվել են այնպիսի փոփոխության, որ հիմնովին փոխվել է բառերի հին բնիկ կերպարանքը: Այդպիսի ուժեղ շեշտ ունեցել է նաև մեր հին լեզուն 5-րդ դարում և նրանից առաջ: Դրանով պետք է բացատրել մեր լեզվի մեջ կատարված հնչյունափոխությունների մեծ մասը: Արդարև՝ ուսումնասիրելով մեր լեզվի հնչյունափոխական օրենքները, նկատում ենք, որ մյուս կարգի հնչյունափոխությունները, բացի գուցե ընդհանուր կամ պատմական հնչյունափոխությունից, մասնակի բնույթ են կրում և լեզվի հնչյունական կերպարանքը այնպես չեն փոփոխել, ինչպես շեշտի հետեանքով կատարված հնչյունափոխությունները:

Մեր հին լեզվի մեջ մասնակի բացառություններով փակվանկում շեշտը կորցնելիս է, ի, ու, ձայնավորները, եա, ոյ, երկբարբառները, եայ եռաբարբառը հնչյունափոխվում կամ սղվում են: Իսկ բարբառները նույն վիճակին ենթարկում են նաև մյուս ձայնավորները: Միջին դարերում հնչյունափոխական այդ տեսակները դառնում է մեր լեզվի տիրապետող օրենքներից մեկը. գրարարից եկած հնչյունափոխությունների հետ դրանց ալելյանում են ա, ե, ո ձայնավորների և մյուս երկբարբառների փոփոխությունները: Արարատյան բարբառը իր բազմաթիվ խոսվածքներով մեր հին լեզվի բնական զար-

գացման արդյունքն է. հիմնական խոսվածքները՝ Քանա-
քեռի, Աշտարակի, Օշականի, Փարպիի, Օձունի և այլն, գրա-
բարի հնչյունափոխությունը ավելացրին մի կարգ նոր. սը-
լոյմներ: Մեր գրական լեզուն իր քերականական կառուց-
վածքով հիմնվելով արարատյան բարբառի վրա՝ բառապա-
շարի հարստացման համար իր գոները լայն բաց արեց
գրաբարի բառերի առջև: Այն բառերը, որոնք արարատյան
խոսվածքներում անվթար պահվել էին, բնականորեն դար-
ձան մեր ազգային լեզվի սեփականությունը, իսկ այնպիսի
բառերը, որոնք հեռացել էին հինգերորդ դարի բառաձևե-
րից՝ ենթարկված լինելով այլևայլ կարգի հնչյունափոխու-
թյունների, տեղի ավելցին գրաբարյան ձևերին: Գրաբա-
րյան բառերը իրենց հետ բերին նաև իրենց հնչյունափո-
խական հին օրինաչափությունները, մանավանդ որ դրանք
գերազանցապես պահված էին արարատյան խոսվածքներում:
Ընդունելով գրաբարյան բառերը իրենց հնչյունափոխական
օրինաչափություններով, մեր ազգային լեզուն իր գոները
չփակեց այլ բարբառների, միջին հայերենի և առհասարակ
մեր բազմադարյան լեզվական կուլտուրայի հարստություն-
ների առջև: Եվ քանի որ մեր լեզվի այդ տարբեր շրջան-
ները տարբեր ժամանակների, տարբեր լեզվական օրինա-
չափությունների արգասիք էին, — դրանց գումարած նաև
տարբեր ուղղությամբ զարգացած մեր բարբառները, — մեր
ազգային լեզուն ընդունեց բազմազան հնչյունափոխա-
կան օրենքներ (առաջացած տարբեր տեղերում ու ժամա-
նակներում), որոնք ներկայումս չեն կարող բացատրվել
մեր ազգային լեզվի առկա օրինաչափություններով: Բայց
հիշյալ բազմադեղ հնչյունական օրենքները չիմացին իրա-
րամերժ վիճակում, չպահպանվեցին իրենց նախնական ձևով:
Մեր լեզուն աստիճանաբար դրանք ենթարկեց իր օրինա-
չափություններին, մերժելով կամ փոխելով բազմաթիվ
խորթ հնչյունափոխական օրենքներ ու բացառություններ:
«Հյուսիսափայլ»-ի շրջանում նկատվում են գրաբարյան ծանր
ու գծվարալուր մի շարք հնչյունափոխություններ, որոնք

շարունակվում են մինչև Շիրվանշահներ և հետագա գրողները. օրինակ՝ ութիւն-ով վերջավորվող գոյականների տրական հոլովը լինում է -ութեան, իսկ բացառականը՝ -ութենէ. այսպես՝ պետութիւն-պետութեան-պետութենէ: Մ. Նալբանդյանը հընչյունափոխական այս օրենքը պահպանում է աշխարհաբարում, մանավանդ հոգնակիում, որ այնքան տհաճ է հնչում այսօր. օրինակ՝ վերանորոգութենների, բնավորութենների (Մ. Ն., 3-րդ, 270, 201, 388): Շիրվանշահներ հետեւում «Հյուսիսափայլ»-ի գրողներին, գրում է անգգուշութեամբ, գրութենից, գողութեամբ, խաբեբայութեամբ (Շ., 1-ին 47, 56 60): Հետագայում Շիրվանշահներ այլևս չի գործածում այդ ձևերը:

Նալբանդյանի, Բաֆֆու, Շիրվանշահների, Մուրացանի և նույնիսկ սովետական շրջանի մեր գրողների երկերում կան հնչյունափոխական այնպիսի երևույթներ, որոնք խորթ են մեր ազգային լեզվի համար: Շիրվանշահների մոտ նկատում ենք այսպիսի ձևեր. պակսիլ, ժպտով, փութանոց (փթանոց) և այլն: Բաֆֆին ունի՝ տունից, վաշխապի միտաթ, խումբեր, կոիվին, կուրծքից, լուսով, քուրդի և այլն: Նալբանդյանը և հետագա գրողները գեոկես պահպանում են մակերևութի, հանդիսում, ձուկներ, քրիստոնեի, պտուտում, հուսով, համբուրի, քիմու, ծուխի, աղորբի, ճշով, կիրքով, շառագնել, հագստով և այլն: Հիշյալ խորթ ձևերը աստիճանաբար գործածությունից ելնում են:

Այսօրվա մեր ազգային լեզվի մեջ հնչյունափոխության թե հին և թե միջին դարերի օրենքները այլևս կենդանի չեն. դրանք մնում են գործածության սովորությամբ և ոչ թե բխում են մեր լեզվի գործող օրինաչափություններից: Այդ ապացուցվում է ոչ միայն նոր փոխառությունների անհնչյունափոխ գործածությամբ, այլև այն բառերի գործածությամբ, որոնք նոր են փոխառվում մեր հին լեզվից: Բացի դրանից՝ անհարկի ու ագեղ հնչյունափոխություններ, ինչպիսիք են՝ ժողովրդներ, գլխներ, սկսում են գործածությունից դուրս գալ:

19-րդ դարի վերջում հնչյունափոխական այդ խառնակույթյունները անկարելի էր որևէ կանոնի ենթարկել. հետագա ավելի քան երեսուն տարիներում նկատելի կերպով բարելավվեցին մեր լեզվի հնչյունափոխական երևույթները. այժմ կարելի է արդեն տեսնել այն ընթացքը, որով դարգանում է մեր լեզուն, և ցույց տալ այն, ինչ որ մեռնում է ու այն, ինչ որ մնում է՝ առաջ բերելով նոր երևույթներ:

**13. ՇԵՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ Է, Ի, ՈՒ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ
ԵՎ ՀԻՆ ԵԱ, ՈՅ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒ ԵԱՅ
ԵՌԱԲԱՐԲԱՌԻ ՀՆԶՅՈՒՆԱՓՈՓՈՒԹՅՈՒՆԸ**

Գրաբարում շեշտավոր է-ն փակ վանկում շեշտը կորցնելով՝ փոխվում է ի-ի. օրինակ՝ օրէն-օրինի, ժապաւնէն-ժապաւինի: Այս հնչյունափոխությունը անցել է մեր ազգային լեզվին. և որովհետեւ գրաբարում է և ե հնչյուններէրից միայն առաջինն էր հնչյունափոխվում, իսկ այժմ մենք է-ն գերազանցապէս ե-ով ենք գրում, ստացվում է այսպիսի վիճակ. մի դեպքում ե-ն հնչյունափոխվում է, իսկ մի այլ դեպքում՝ ոչ: Մեր լեզվում ե-ն հնչյունափոխվում է այն բաների մեջ, որոնք գրաբարում գրվում էին է-ով: Այս դեպքում ուղղագրության փոփոխությունը ստեղծում է մի խառնակ վիճակ. գեր-գիրաւալ, բայց՝ գերա-զույն, գերազանց, ծեր-ծերաւալ, բայց՝ սեր-սիրո:

Այժմ տեսնենք գրաբարից եկած այս հնչյունափոխությունը ինչ դրութեամբ է մնացել:

Ամենից առաջ նշենք մի շատ կարևոր երևույթ. հոյովման և հոգնակիի կազմութեան ժամանակ ե՝ հին է-ն գերազանցապէս մնում է, իսկ բառակազմութեան գեպքում փոփոխվում է: Սրա պատճառը պարզ է. հոլովումը և հոգնակիի կազմությունը մեծ մասամբ աշխարհաբարի կազմութեան արդյունք են. թե՛ հոլովման վերջավորությունները և թե՛ հոգնակիի մասնիկները հաճախ նոր ի նորոգ գրվում են չփոփոխված հիմքի վրա ու այդպէս էլ մնում են. իսկ բառակազմությունը, մանավանդ բայակազմու-

թյունը, գրաբարից է գալիս. անորոշ դերբայը արդեն փոփոխված հիմքով պահվել է. բառակազմության մեջ փոփոխված արմատները մշակված են և գալիս են բարդություն հետ, և եթե նոր բառ էլ կազմում ենք, վերցնում ենք այդ փոփոխված արմատները, կամ ուղղակի կազմում ենք հին բարդությունների անալոգիայով. մաստի կարելի է հանել ընդհանուր օրենք:

ա) Հոլովման ժամանակ է (հին է) չի հնչյունափոխվում՝ օրինակ՝ ապարեգ-ապարեգի, վրեծ-վրեծի, հրավեր-հրավերի¹ և այլն: Բացառություն պետք է համարել հետևյալ ձևերը. սեր-սիրո, տեր-տիրոջ², մեջ-միջի (հաև մեջի), էջ-իջի (այժմ էջի), գոմեջ-գոմշի (սղումը գրաբարից է, այժմ՝ մեծ մասամբ գոմեջի):

բ) Բայերը, ինչպես ասվեց, գերազանցապես փոփոխված հիմքից են կազմվում. օրինակ՝ գետ-գիտել-գիտեմալ, դետ-դիտել, հաղամետ-հաղամիտել, գեր-գիրաճալ, հրավեր-հրավիրել, էգ-իգաճալ, սեգ-սիգալ, դեգ-դիգել, կեգ-կիգել, մեգ-միգել, վեծ-վիժել, անեծք-անիծել, վեմ վիմել, դեմ-դիմել, զենք-զինել, շեն-շինել, փոխարեմ-փոխարինել, օրենք-յօրենք-հորինել-տնօրինել, ապավեն-ապավինել, ապաքեն-ապաքինվել, հանդեպ-հանդիպել, վեպ-վիպել, ստեպ-ստիպել, վրեպ-վրիպել, դեպք-դիպել-հանդիպել, էջ-իջնել, շեջ-շիջել, մեջ-միջել-ընդմիջել, հանդես-հանդիսաճալ, կես-կիսել:

գ) Բարդության և ածանցման առաջին մասում այս բառերը և արմատները հանդես են գալիս փոփոխված հիմքով. օրինակ՝ գետ-գիտալի, գես-գիսալ, մետ-միտում, վերք-վիրաբույժ, հրավեր-հրավիրատոմս, էգ-իգական, սեգ-սիգապանծ, կեգ-կիգանուտ, մեգ-միգափամփուշտ, վեծ-վիժանուտ, անեծք-անիծապարտ, վեմ-վիմաբանություն, դեմ-դիմադրություն, զենք-զինագործ, ապավեն-ապավինություն, փոխարի-

¹ Թենքերնու (Կուրգ., Բ., 13) հին է:

² Բաֆթու ցերից (Յ-բդ., 64) ձևը բարբառային է:

նաբար, օրինագիծ, գիշակեր, հանդիսավոր, կիսակատար և այլն:

Մյուսնց մի մասը ուղղակի փոփոխված հիմքով վերցված է գրարարից, իսկ մյուս մասն էլ կազմվել է գրանց համարանությամբ. ահա մի քանի նման բառերի օրինակներ. սիգավեա (սեզ), սիգանեմ, վիրակապ, զինագործարան, հավիտյան, վիմատաշ¹, վիմաքանդակ, վայրիշույց մեխանիզմ:

դ) Ե-ն չի հնչյունափոխվում հետևյալ բառերի մեջ և հետևյալ դեպքերում. եղեգ-եղեգնուա-եղեգնախով, հրեշ-հրեշավոր, աղվես-աղվեսաքուն, Մովսես-մովսեսական²:

Պետք է նշել, որ նույնիսկ գրաբարում այսպիսի բառերի հնչյունափոխությունը անհաստատ էր. օրինակ՝ եղեգրն-եղեգան (է > ե), բզեզ-բզեզի, մողես-մողեսի, Մովսես-Մովսեսի, Արիստակես-Արիստակեսի, աղետք-աղետից, հրեշք-հրեշից: Ըստ երևույթին այն բազմավանկ բառերը, որոնք վերջավորվել են էս, էզ, էշ՝ հատուկ օրենքով չեն հնչյունափոխվել, իսկ հետագայում համարանությամբ սկսել են փոխվել. օրինակ՝ ասպարէզ-ասպարիզի պարտէզ-պարտիզի: Այս վերջին փոփոխվածները այժմ այլևս կենդանի չեն:

ե) Բառասկզբում է ունեցող քիչ բառեր ունենք. գրանցից մի երկուսը մի քանի անհոգակապ բարդությունների մեջ մնացել են անփոփոխ. օրինակ՝ էջ-էջմիածին, էշ-էշայծեամն²:

զ) Մեր ազգային լեզվում հին է ունեցող այն բառերն ու արմատները չեն հնչյունափոխվում, որոնցից նոր բառեր չենք կազմում և որոնց փոփոխված հիմքը մեզ համար խորթ է. օրինակ՝ քարտեզ-քարտեզագրություն-քարտեզագիտություն, հեն-ծովահենություն (հինաբար հնացած ձև է):

¹ ԲաժՖու վեմափոր բառը (1-ին, 516) անցման շրջանի կազմություն է:

² Այժմ, սակայն, ասվում է նաև իսայծյամ: Հնից ունենք Մովսիսյան:

Այսպես էլ ծվեմ բառից եթե բառ կազմենք, այլևս չի հնչյունափոխվի:

է) Չեն հնչյունափոխվում նաև բոլոր -եղեն,-երեն,-ավես (հին -եղէն, -երէն և -աւէտ) վերջածանցավոր կազմութունները. օրինակ՝ ամանեղենի, բուրավեսություն, հայերենի, ռուսերենի, գերմաներենի և այլն:

ը) Հնչյունափոխության չեն ենթարկվում այնպիսի բառերը, որոնք բարդության մեջ մտնում են հին ք հոգնակիականություն միասին. օրինակ՝ անեծք-անեծքաշոր-անեծքակոխ, մեջքացավ, մեջքակոտոր, ամպետություն և այլն:

թ) Անհնչյունափոխ են մնում նաև անհոգակապ ու կրկնավոր բարդության գեպքում. օրինակ՝ պեսպետություն, մեջընդմ ջ, դեզադեզ, օրենսդիր: Գրաբարում մեծ մասամբ չեն հնչյունափոխվում նաև՝ տերութուն, տնօրենություն¹ բառերը: Տնօրություն բառը վերցրել ենք նույնությամբ, իսկ մյուս բառը գործածում ենք տնօրինություն ձևով:

ժ) Բառավերջում գտնվող է-ն (այժմ ե) երբեք հնչյունափոխության չի ենթարկվում. օրինակ՝ բազե-բազեակիր-բազեի, ափսե-ափսեի, մարգարե-մարգարեություն և այլն:

14. Ի ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ի ձայնավորը շեշտը կորցնելով կամ բոլորովին սղվում է, կամ փոխվում է չգրվող ը-ի: Սա գրաբարի ընդհանուր կանոնն է: Այս կանոնը գործում է նաև մեր ազգային լեզվում, սակայն որոշ բացառություններով: Նախ և առաջ այստեղ քննության կառնենք բոլոր այն միավանկ բառերը ու արմատները, որոնց վանկարար հնչյունն է ի, և ապա ցույց կտանք այն առանձնահատուկ փոփոխությունները, որոնք կատարվում են հոլովման, բառակազմության և հոգնակիի կազմության ժամանակ: Ի վանկարար հնչյունով երեք կարգի միավանկ բառեր ունենք. բառեր, որոնք

¹ Իհնարկե տէր և տնօրէն բառերը այլ գեպքերում փոփոխվում են. օրինակ՝ տիրել, տնօրինել, տիրասպան և այլն:

սկսվում են ի-ով, բառեր, որոնք վերջանում են ի-ով և բառեր, որոնց ի վանկարար հնչյունը երկու կողմից շրջափակված է բաղաձայններով: Առանձին-առանձին ենք վերցնում, որովհետև այս երեք պարագայում ի-ն տարբեր որակի փոփոխություն է հանդես բերում:

Ի-ով սկսվող միավանկ¹ բառերը և արմատները մեր ազգային լեզվում հետևյալներն են՝ իծ, ինն, ինքք, իսկ, իր, իլ, իղձ, ինչ, ինծ (գրվում է ինձ), իրբ, ինձ (տրականը ես զերանվան, որից կազմվում են մյուս թեք հոլովները): Այս բառերը որպես կանոն մեր լեզվում փոփոխության չեն ենթարկվում ոչ բառակազմության, ոչ հոլովման և ոչ էլ հոգնակիի կազմության ժամանակ. օրինակ՝ իծ-իծային, իծի-իծեր, ինն-իններորդ, ինքք (ինքն)-ինքնագնաց, ինք-ներդ, ինքնին, իսկ-իսկական-իսկություն, իր-իրեր-իրական, իլ-իլիկ, իրբ-իրբև, ինձ-ինձեից-ինձնով. բացառություներ են կազմում իղձ-ըղձական-ըղձաք-ըղձալ-ըղձալի, բայց հոգնակին ալժմ՝ իղձեր՝ և սեռականը՝ իղձի: Հնադարձ պեսք է համարել Թումանյանի ըղձերով. ձեր (Ճ-րդ, 208). և հետո՝ պայծառ ըղձերս ինձ զուր մաշեցին (Թ., 1-ին, 46): Ինչ-ընչասեր-ընչագուրկ-ընչաքաղց, ինձ-ընձեմավոր, որոնք հին կազմություններ են, իսկ՝ ինչեր-ինչպիսի-ինչքան և ուրիշ ձևերում ի-ն չի փոփոխվում:

Ի-ով վերջացող միավանկ բառերը շեշտը կորցնելով բնավ հնչյունափոխության չեն ենթարկվում. օրինակ՝ ձի-ձիեր-ձիավոր, թի-թիակ, դի-դիակառք-դիակ, լի-լիանալ:

Հնչյունափոխական դժվարություններ ու անկանոնություններ են առաջ բերում ի վանկարար հնչյունով այն միավանկ բառերը, որտեղ ի-ն երկու կողմից փակված է բաղաձայններով. Այդպիսի բառերը չորս տեսակ արդյունք են առաջ բերում. բառեր կան, որոնք բնավ չեն հնչյունա-

¹ Քանի որ մեր քննությունը կառվում է շեշտի հետ, այստեղ բերում ենք նաև վերջնակիսական բառերը, որոնց առաջին շեշտակիր վանկը ի-ով է:

փոխվում. կան այնպիսիները, որոնք հոգնակիւն և հոլովումը կազմում են առանց փոփոխութեան, իսկ բառակազմութեան մեջ մասնում են փոփոխված ձևով: Կան այնպիսիները, որոնք, բոլոր դեպքերում փոփոխվում են, և վերջապես նրանք, որոնք վերջնականապես չեն ճշտվել, այսինքն՝ գործածվում են և՛ անփոփոխ, և՛ փոփոխված:

Այժմ տանք այդ միավանկ արմատները ու բառերի ցանկը և աշխատենք ըստ այս հատկանիշների ստորաբաժանել: Դրանք թվով այնքան էլ մեծ չեն: Ահա այդ բառերը՝ բիգ, բիծ, բիւ, բիբ, բիր, բիրա, բինա, բիծ, գիծ, գիծ, գինգ, գին, գինձ, գիպա, գիրգ, գիր, գիրք, գիրկ, դիրք, դիրա, գիսա, թիգ, թիռ, թիվ, թիմ, ժիր, լից, լիւ, լին, լիս, լիր, լիք, լիտր, լիրք, լինդ, խնկ, խիթ, խիթ, խիւ, խիւստ, խիտ, խից, ծիւ, ծին, ծիր, ծիրա, ծիծ, ծիվ, կիթ, կիր, կիրք, կիրն, կից, կիծ, կին, կիրք, կինն, հին, հինգ, հիմք, (*հիմն*), ձիգ, ձիրք, նիւ, նիկ, նիշտ, նիվ, նիգ, նիմ, նիգ, նիտք, նիռ (*ճառքաղ*), մինչ, միշտ, միրգ, միս, միտք, միֆ, նիշ, նիգ նինջ, նիստ, նիրն, շիք, շիշ, շիր, շիվ, շիւ, շիթ, շիք, չիզ, չիր, պիղծ, պիպ, պիշ, պինգ, պինչ, պիրկ, չիւ, չիզ, չինջ, սին, սինձ, տիրա, վիշտ, վիթ, վին, վիգ, վիգ, տիգ, տիպ, տիկ, տիզմ, ցին, ցիր, ցինկ, ցից, ցիռ, փիղ, քիվ, քիթ, քիմք, քիստ:

Բառերի այս ցանկը հանդես է գալիս հնչյունափոխական տարբեր ձևերով: Այստեղ կան արմատներ, և կամ այնպիսի բառեր, որոնք բառակազմութեան մեջ մասնակցութեան չունեն, չեն հոլովվում և հոգնակի չեն կազմում բնականորեն այսպիսի արմատները կամ բառերը հնչյունափոխութեան չեն ենթարկվի: Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ նաև ձևափոխութեան հանգամանքները: Մեր լիզուն հոգնակի կազմութեան ժամանակ միտում է անհնչյունափոխ ձևին: Հոգնակի կազմելիս հնչյունափոխվում են միայն այն բառերը, որոնք սկզբնապես գործածական են եղել բանավոր խոսքի մեջ, փոփոխվել են և այդ փոփոխված ձևով էլ անցել են գրականին. օրինակ՝ բիր-բրեր, բինա-բնա, գիր-գրեր, գիրկ-գրկեր, դիրք-դրքեր, նաև գիրքեր:

այժմ ճիշտ ձևը սա է), թիգ-թգեր, թիվ-թվեր, լին-լներ, լինդ-լնդեր (նաև լինդեր), լիր-լրեր, ժիր-ժրեր (նաև ժիրեր), ծիտ-ծտեր, հին-հներ, հիվ-հվեր (ճիվեր), հիմ-հմեր-հիմեր, միրգ-մրգեր, միս-մսեր, միտք-մտքեր, շիշ-շշեր, շիվ-շվեր-շիվեր, շիր-շրեր-շիրեր, շիթ-շթեր-շիրեր, շիվ-շվեր, պինշ-պնշեր (բարբառային է), ջիղ-ջղեր, սիրտ-սրտեր, վիշտ-վշտեր, վիղ-վղեր, ցից-ցցեր¹, փիղ-փղեր, քիթ-քթեր:

Վերևում բերված երկու ձևով հոգնակի ունեցողներից հաղթելու են անհնչյունափոխ ձևերը. այսպիսի գեպքում հնչյունափոխվածները արտահայտում են բարբառային կրանդ:

Մնացած բառերը կամ հոգնակի չեն կազմում և կամ. եթե կազմում են, մնում են անհնչյունափոխ. այս կարգին պատկանում են ուշ շրջանի վերցրած բառերը, որոնք մեր ազգային լեզվի մեջ մտել են ոչ բանավոր խոսքի միջոցով, այլ տարբեր աղբյուրներից՝ գրականության միջոցով². օրինակ՝ գիպս, գիրք, գիտ, գիրք, գիստ, թիմ, լիցք, լիտր, խինդ, ձիրք, միֆ, նիստ, նիրհ, շիթ, տիղմ, ցին, ցիռ (վայրի էշ), քիմք, քիստ:

Այժմ տեսնենք հիշյալ բառերը հոլովման մեջ ինչ ձևով են մտնում և ինչ օրենքներ են ստեղծում: Այս բառերի նկատմամբ մեր լեզուն հոլովման ժամանակ ճիշտ նույն տենդենցներն է հանդես բերում, ինչ որ հոգնակիի կազմությանը քննելիս նկատեցինք. այսինքն՝ եթե բառը բանավոր խոսքի մեջ չի մտել ու հնչյունափոխվել, վերցվում է հոլովման մեջ անփոփոխ: Հոլովման ընթացքում բառերի այս ցանկը ըստ փոփոխության և ոչ-փոփոխության բաժանվում է չորս խմբի. ա) այն բառերը, որոնք թե գրաբարում և թե բանավոր խոսքի մեջ շատ գործածական են եղել և արդեն փոփոխվել են ու այդպես էլ դարձել են մեր լեզվի սեփականությունը. բ) այն բառերը, որոնք գրաբարից են

¹ Շիրվ., 3-րդ 317, ցիցեր:

² Այս աղբյուրների տակ հասկանում ենք նաև գրաբարն ու բարբառները:

վերցվել, սակայն քիչ են գործածվել, և նրանց հոլովումն էլ ձևավորվել է մեր ազգային լեզվում. գ) չհոլովող բառերն ու արմատները և վերջապես դ) օտար այն բառերը, որոնք շատ ուշ են փոխառվել:

Առաջին խմբի բառերը հոլովվելիս՝ հնչյունափոխվում են. օրինակ՝ բիզ-բզի, բիծ-բծի, բիր-բրի, բինտ-բնաի, բիծ-բծի, գիծ-գծի, գիծ-գծի, գինդ-գնդի, գին-գնի, գինձ-գնձի, գիրկ-գրկի, թիզ-թգի, թիվ-թվի, լիլ-լլի (բարբառային է), լին-լնի, լինգ-լնգի, լինդ-լնդի, լիար-լարի, լիրբ-լրբի, խիծ-խծի, խիդն-խդնի, ծին-ծնի, ծիտ-ծաի, կիթ-կթի, կիրք-կրքի, նին-ննի, միրգ-մրգի, միս-մսի, միաք-մաքի, նիշ-նշի (նաև Նիշի), շիշ-շշի, չիր-չրի, չիթ-չթի, պիպ-պպի (բարբառային է), պինչ-պնչի (բարբառային է), ջիլ-ջիդ-շլի-շղի, սիրտ-սրաի, սինձ-սնձի, վիշտ-վշտի, վիզ-վգի, տիկ-տկի-տիկի, ցից-ցցի, փիղ-փղի, քիթ-քթի, քիմք-քմքի, այժմ մեծ մասամբ՝ քիմքի:

Մենք նշեցինք, որ հոլովման և հոգնակիի կազմության ժամանակ համարյա միևնույն վիճակում են գտնվում վերոհիշյալ բառերը. միայն պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները. ամենից առաջ հոգնակիի կազմությունը այնպես ուժեղ կաշկանդված չէ գրաբարի. հնչյունափոխական օրենքներով, ինչպես հոլովումը. հոլովման ժամանակ գոյություն ունի մասամբ նույն վերջավորությունը, նույն տրադիցիայով, իսկ հոգնակին ունի անկախ վերջավորություն և ըստ այդմ էլ որոշ անկախություն է ներկայացնում: Այս փաստարկումները ապացուցվում են հետևյալ օրինակներով. մի շարք այնպիսի բառեր, որոնք սկզբնապես հոգնակի չեն ունեցել, երբ այժմ դրանց հոգնակին կազմում ենք, վերցնում ենք անհնչյունափոխ ձևը, մինչդեռ գրանք հոլովվում են փոփոխված. օրինակ՝ գինձ-գնձի, գինձեր-գինձերի, պիղծ-պիղծեր, ծիլ-ծիլեր և այլն: Այսպիսի գեպքերում հոլովելիս էլ նախապատվությունը պետք է տալ անհնչյունափոխ ձևերին: Կան մի քանի բառեր, որոնք հավասարապես գործածվում են թե՛ հնչյունափոխված ձևով և թե՛ անհնչյունափոխ. այս ժամանակ միակ ճիշտը կլինի,

եթե նախապատվությունը տրվի ուղիղ ձևին. օրինակ՝ հիշ-
նշի-հիշի գիստ-գստի-գիստի, ծիրտ-ծրտի, ճիշտը՝ ծիրտի-
ծիրտեր-ծիրտերի:

Մնացած բառերը չեն հնչյունափոխվում ոչ հոգնակի-
կազմության և ոչ էլ հոլովման ժամանակ. օրինակ՝ գիրք,
լիցք, լիք (լքել բայի արմատը), լիք(ը), խինդ, խիտ, ծիր.
կիրք, կիրն, կիյ, հինգ, հիմք, ձիրք, նիգ, հիմ, հիշ, նիշ, նիգ.
նիստ, նիրհ, շիթ, շիլ, պիղծ, ջինջ, վիթ, վին, տիպ, տիղմ,
քիվ, քիմք: Այս արմատները բարդ բառի վերջին հզրում
հոլովվելիս նույնպես մնում են անփոփոխ. օրինակ՝ ինք-
նաթիռ-թիռի, վիմատիպ-վիմատիպի, բազմանիստ-բազմա-
նիստի և այլն:

Բառակազմության մեջ որպես կանոն վերևում բեր-
ված ցանկի բոլոր բառերն ու արմատները հնչյունափոխ-
վում են. նույնիսկ վերջին խմբի բառերը, որոնք հոգնակի-
կազմելիս ու հոլովելիս չեն հնչյունափոխվում, բառակազ-
մության մեջ մտնում են փոփոխված հիմքով. (երբ բարդ
բառի առաջին հզրում են). օրինակ՝ խինդ-խնդալ-խնդալից,
ծիր-ծրար-ծրագիր, ծիրտ-ծրտել, խիտ-խտանալ, հիգ-հցնել-
հցնածամ-հցնություն, նիտ(ք), նտահար-նտքանի (սեռ. լի-
նում է նաև նտքի), հիշ-նշել-նշում (Մալխասյանը բերում է
նիշել, որ արհեստական է), նինջ-ննջել-ննջարան, նիստ-նըս-
տել-նստակյաց, պիղծ-պղծել-պղծություն, տիպ-տպել-տպազը-
րություն, հինգ-հնգամյակ (կա և հնգի), բայց հինգերորդ
և այլն:

Բառակազմության մեջ նկատելի է մի այսպիսի երե-
վոյթ. այն, ինչ գրաբարից է գալիս, այսինքն՝ որևէ ար-
մատ արդեն գրաբարում մտել է բառակազմության մեջ,
մեր ազգային լեզվում տրագիցիոն կերպով երևում է փո-
փոխված ձևով. իսկ եթե արմատը վերջվում է մի քիչ այլ
ձևով, կարող է հնչյունափոխություն չկատարվել. օրինակ՝
լից արմատից ունենք լցնել-լցնովի, բայց այժմ այդ ար-

¹ Քմբի (Շիրվ. 4-րդ 110). ճշող (Շիրվ. 5-րդ 58):

մատի լիցք ձևից կազմում ենք լիցքավորվել: Ձիր արմատից ունենք ծրի, դրանից մենք կազմել ենք ձրիակեր, դրաբարում՝ ձրիաաուր: Իսկ եթե հարկ լինի ձիրք ձևից բառեր կազմել, կկազմենք ձիրքավոր, ձիրքատեր և այլն: Իսկ այն արմատները, որոնցից նոր միայն պետք է բառեր կազմել, անհրաժեշտ է վերցնել անփոփոխ ձևով. օրինակ՝ քիստավոր, կիրնային և ոչ՝ քստավոր, կրնային:

Ինչպես տեսնում ենք, հիշյալ միավանկ բառերը բառակազմության մեջ գերազանցապես մտնում են փոփոխված հիմքով: Բացասություն են կազմում անհոգակապ օրոշ բարդություններ. օրինակ՝ ցիլուցան, գիրկապ (կա և գըրկապ). սիրամաշուկ, սիրտխառնուք, վաթսուցնիցամյա (նար., 7-րդ, 221):

Գրաբարի անեզական ք մասնիկով բառերի արմատը զբեթե մնում է անփոփոխ. օրինակ՝ դիրք-դիրքավորվել, դիրքային, լիցք-լիցքավորվել-լիցքանալ, բայց սրանց հակադիր՝ ունենք գրքատեր, մտքափոխ: Այժմ մենք այս տեսակ արմատներով բառեր կազմելիս՝ չենք հնչյունափոխում, իսկ արդեն կազմված բառերը մեր լեզուն են եկել թե բարբառներից և թե բարբառների ու գրաբարի համարանություններ կազմված տարրեր աղբյուրներից: Այդ է պատճառը, որ կա դիրքային, բայց և գրքային: Բայց այն արմատներն ու բառերը, որոնցով անցյալում բառեր չեն կազմվել, այժմ մեր լեզվի բառակազմության մեջ մտնում են բացառապես անփոփոխ ձևով: Այսպիսի բառերի սղված ձևերը խորթ են ու խժալուր: Այլևս չեն հնչյունափոխվի՝ դիրա, կիրն, հիմ(ք)¹, հիրն¹, միմն, հիգ, շիթ, վիթ, վին, քիվ, քիստ:

15. Ի-ՈՎ ՇԵՇՏԱԿԻՐ ՎԱՆԿ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՀՆԶՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Շեշտակիր ի-ն այս տեսակ բառերում հանդես է գալիս երկու գիրքով՝ փակ վանկում և բաց վանկում. հիշյալ եր-

¹Այս արմատները գրաբարում էլ չեն հնչյունափոխվում. օրինակ՝ հիմնահասակ, հիմնադիր, հիմնական, հիրեն և այլն:

կու գիրքերում ի-ն առաջ է բերում միանգամայն տարբեր փոփոխություններ: Սկսենք գարձյալ հոգնակիի կաղմու-թյունից, Ի շեշտակիր փակ վանկ ունեցող բազմավանկ բառերը հոգնակի կաղմելիս չեն հնչյունափոխվում. ինչպես-օրինակ՝ կավիճ-կավիճներ, պարիսպ-պարիսպներ, հանգիստ-հանգիստներ և այլն: Բարբառների ազդեցությամբ գրակա-նություն մեջ մուտք գործեց երկրներ ձևը, որ կարելի էլինի դուցե իսխել, դեռևս Բաֆֆին ունի երկրներով, երկրներում (1-ին, 525). (տես նաև Շիրվ., 2-րդ, 146, 3-րդ, 394. Նար., 7-րդ, 207): Նույն բառի համաբանություն կան բազեակրներ, զինակըրներ սխալ կաղմությունները (տես Բաֆֆի, 3-րդ, 69, 171):

Վերելի կանոնը չի տարածվում այն միավանկ բառերի վրա, որոնք բարդություն վերջին բաղադրիչներն են. օրինակ՝ ծաղկագիր-ծաղկագրեր, գլխագիր-գլխագրեր: Իսկ եթե վերջին բաղադրիչը իմաստափոխվում է, այն ժամանակ հոգնակին կազմվում է ներ մասնիկով և հնչյունափոխություն տեղի չի ունենում. օրինակ՝ խմբագիր-խմբագիրներ, բարձրավիզներ, մեծաքիթներ, բազմաթիվներ (այսինքն՝ խմբագրողներ, բարձրավիզ, մեծաքիթ, բազմաթիվ մարդիկ): Հոգնակիները այդպես էլ հոլովվում են առանց հնչյունափոխության. օրինակ՝ կավիճների-կավիճներից, խմբագիրներից և այլն:

Եղապիրում հոլովվելիս հիշյալ բառերը երկու ձևով են հանդես գալիս. այսինքն՝ հնչյունափոխվում են և մնում են անփոփոխ. այժմ խմբավորենք դրանք և տեսնենք, որոնք ինչ տենդենցներ են երևան հանում:

ա) Կրաբարի-ի-ք մասնիկով կազմված բոլոր բառերի, — ալիք, խալիք, բաղիք, բաղանիք, խաղալիք (սրահի ձևն է խաղալիկ), չարիք, կաբիք, կեղծիք, ավետիք, արգասիք, կարծիք, ընթրիք, սպառնալիք, ալիք, ընտանիք, հայրենիք, գործիք, աղորիք, շոշափելիք, լսելիք, ստանալիք, մեմելիք, տանիք, հարսանիք, նահ շլինք, տեսիլք և այլն, — սկզբած ձևերը մեր լեզվի մեջ ավելորդ բաղաձայնների կուտակում են ստեղծում՝ բառը դարձնելով դժվարարտասանելի ու խժալուրդ։

բ) -իկ մասնիկով և իկ վերջավորվող այն բառերը, որոնց հոլովումը կազմված է մեր գրական լեզվում կամ կազմվելու է, մի շարք ածականներ ու գոյականներ են, որոնց շատերի հին հոլովաձևերը մոռացված են արդեն և չնայած մի մասը կա և գրաբարում, բայց հոլովվում են որպես նոր բառեր. որանց սղումը նույնպես վայելուչ չէ. օրինակ՝ մանիկ, խորտիկ, պարիկ, օղապարիկ, հիբիկ, պատրիկ, մուրացիկ, անձեռացիկ, ուզմիկ, գերագանցիկ, գերակետիկ, ընկեցիկ, մարտիկ, քարմիկ, թափանցիկ, շրջիկ, երգեցիկ, անատիկ, վաղամեռիկ, մարգիկ, շրջմուլիկ, զարմիկ, սնդիկ, հաամիկ, դքանիկ, մանկլավիկ, առնմիկ, սաստիկ, դժնիկ, բազմապատիկ, բնիկ, տաքիետիկ և այլն:

Ձեն հնչյունափոխվում:

դ) -իկ-ով վերջավորվող նվազականները. օրինակ՝ մանկիկ, ուլիկ, պատանեկիկ, կծիկ (կծկի բարբառային է) հայրիկ, մայրիկ, փոքրիկ, աչիկ, սանիկ, իլիկ, եղեգնիկ, շնիկ, դստրիկ, արևիկ, եղմիկ, գառնիկ, իշխանիկ, ձկնիկ, ձայնիկ, մասնիկ (մասնկի չպետք է գործածել), հատիկ, փայտիկ, խցիկ և այլն: Մանավանդ բոլորովին չի կարելի հնչյունափոխել-իկ նվազականով ձևացած հատուկ անունները, ինչպես՝ Թոռնիկ, Գառնիկ, Եզնիկ, Արեվիկ, Աստղիկ, Տաթևիկ, Սասունիկ, Տաթոնիկ, Էդիկ, Երագիկ, Հայրիկ, Լուսիկ, Շուշիկ, Շուշանիկ, Հոփսիկ, Վարսիկ, Արծվիկ, Այծեմիկ, Հուսիկ, Նազիկ և այլն: Սրանց հման չեն հնչյունափոխվում-իկ-ով վերջավորվող այլ կարգի անուններ, որոնք և՛ հատուկ են, և՛ հասարակ. օրինակ՝ Երջանիկ, Անդրանիկ:

դ) Այժմ միտում ունեն անհնչյունափոխ գործածվելու ազգ արտահայտող մի քանի բառեր. ինչպես՝ պարսիկ, հրեղիկ, տանիկ, խափշիկ:

-իկ-ով վերջավորվող բառերից հնչյունափոխվում են շապիկ, զատիկ, մրրիկ, մարդիկ, կապիկ, կոշիկ, ծաղիկ, ոռնիկ, փոթորիկ, գեղեցիկ, (որպես հատուկ անուն չի հնչյունափոխվում) ռամիկ, գռնիկ, որոնցից սակայն՝ գառնիկ, շապիկի, կապիկի, կոշիկի սեռականները անսովոր չեն:

-իդ, -իզ, -իծ, -իք, -իլ վերջավորվող բառերը գրեթե չեն հնչյունափոխվում. օրինակ՝ քղամիդ, պիրամիդ, ծղրիդ, երիզ, կորիզ, բլիք, մզկիք, կննիք, սամիք, առիք, մագիլ, արագիլ, կաթիլ, ոչիլ, աեսիլ, ապրիլ, սերկևիլ, շաքիլ և այլն. Բացառություն են կազմում խրնիք, գավիք, որոնցից, սակայն, խրնիքի, գավիքի հոլովված ձևերը անսովոր չեն: Մեծ մասամբ հնչյունափոխվում են պատիծ, կսկիծ, թախիծ, սկիզբ բառերը. ահիծ մեծ մասամբ մնում է անհնչյունափոխ:

-իդ վերջավորվող բառերի հնչյունափոխությունը մեր լիզվում անսովոր է, մանավանդ երբ դ խժալուր հնչյունը մոտենում է մի այլ բաղաձայնի (առանձնապես խ-դ), ստեղծում է արտասանական դժվարություն, ուստի տավիդ, շաղիդ, (ստակած անասունի միս), ուղիդ, տորմիդ, շառավիդ, բավիդ պետք է հոլովել առանց հնչյունափոխելու. միայն շավիդ բառն է, որ երբեմն հոլովվում է շավի, սակայն ճիշտը պետք է համարել շավիդի ձևը: Իսկ իբրև հատուկ անուն բնավ չի հնչյունափոխվում:

-իմ-ով վերջավորվող բառերը մեծ մասամբ հոլովվելիս հնչյունափոխվում են. օրինակ՝ ճահիմ-ճառիմ, դահիմ-դառիմ, արնիմ-արնիմ, մահիմ-մառիմ. չեն հնչյունափոխվում քիչ գործածական և զուտ գրական բառերը. օրինակ՝ ամիմ-ամիմի, կապիմ-կապիմի, պատիմ-պատիմի, ուտիմ-ուտիմի, կտրիմ-կտրիմի և այլն: Լվիմ, կարիմ, կավիմ բառերի հնչյունափոխ ձևերը բարբառային են, ուստի և անընդունելի: Դահիմ մեծ մասամբ այժմ մնում է անհնչյունափոխ:

-իմ վերջավորվող գործածական բառերն են՝ ճավատաբիմ, ճղնիմ, ուշիմ, կտաիմ (բնդունված է կտաեմ ձևով), ոխերիմ, մտերիմ, շիրիմ: Սրանցից փոփոխված հիմքերի որոշ հարադատությունը գալիս է բառակազմությունից. հոլովելիս լավ է պահել հնչյունափոխված ձևը. հաճախակի հոլովվում է շիրիմ, որ մեր գրական լեզվի մեջ լինում է շիրմի և շիրիմի:

-իմ և իմ + բաղաձայնով վերջավորվող բառերից հնչյունափոխվում են. բաժիմ-բաժնի, աղախիմ-աղախնի, եր-

կին-երկնի, անկողին-անկողնի, մարմին-մարմնի, խեցգետին-խեցգետնի, կացին-կացնի, լուսին-լուսնի-ամուսին-ամուսնու, գետին-գետնի, սոսինձ-սոսնձի, բրինձ-բրնձի, նարինջ-նարնջի: *Ձեն հնչյունափոխվում ա) ածականները՝* նախկին, առանձին, դեղին, օդային, դժոխային՝ առաջին, ետին, վերջին, ստորին, վերին, միջին, դժվարին, խորին, ներքին, արտաքին *և այլն: Ձի հնչյունափոխվում նաև ո՛ւրիշ գոյականը:*

բ) Ձեն հնչյունափոխվում -ինք-ով վերջավորվող բառերը. օրինակ՝ նախատինք, քրտինք, երկինք, հարինք, դաշինք:

գ) Ձեն հնչյունափոխվում բազին, կաղին, սվին, դելֆին, ապա սրինգ, փոխինդ, շոինդ, խրխինջ, կոինչ, հակինթ, նաև օշինդր, կղմինգը սուղ վերջնավանկ ունեցողները: Սրանցից կաղին չի լինում կաղնի, որովհետև նույնանում է կաղնի բառի հետ, իսկ սրինգ լինում է նաև սրնգի, բայց լավ է սրինգի:

Հնչյունափոխության ենթարկվում են -իշ, -իս նաև սրանց հաջորդող մի բաղաձայնով վերջացող բառերը. օրինակ՝ բծիշկ, նածիշտ, երածիշտ, սոբարիշտ, թավիշ, խարիսխ, ամիս, պարիսպ, հաճգիստ, խորիսխ: *Սրանցից մի մասը կարող է գործածվել անհնչյունափոխ. օրինակ՝* նածիշտի, երածիշտի, ամբարիշտի, թավիշի *և այլն:*

Ձեն հնչյունափոխվում ըմբիշ, արիս, մայիս, քանիս, հունիս, հուլիս, ուրիշ, ավիշ, հյուսիս, կիսարիս, իրիս, բամբիշ: Ըմբշի, ուրշի գործածություններից պետք է խուսափել: Բոլորովին չեն հնչյունափոխվում -իստ վերջավորվող նոր փոխառությունները. օրինակ՝ կոմունիստ, արաիստ, մարքսիստ *և այլն:*

-իչ-ով վերջացող բառերից հնչյունափոխվում են միայն երգիչ, չամիչ, գրպարտիչ, նկարիչ, գրիչ, ուսուցիչ, փրկիչ, թարգմանիչ, Մկրտիչ, Լուսավորիչ, իսկ վերջինը просветитель խմաստով մնում է անփոփոխ:

Սրբիչ, գործիչ, բաշխիչ, թովիչ, վարիչ բառերի հնչյունափոխված ձևերը հնացած պետք է համարել: Մնացած բոլոր կազմությունները պետք է գործածել անհնչյունա-

փոխ. օրինակ՝ թռիչ(ք), լուծիչ, նորոգիչ, մարզիչ, շարժիչ, բուծիչ, եղանակիչ, զրկիչ, կազմիչ, կործանիչ, քննիչ, խափանիչ, գեթիչ, կեղեքիչ և այլն:

Ձեն հնչյունափոխվում նաև -իչ-, -իւ, -իտ վերջավորվող բառերը. ծրինակ՝ քրքիչ, բջիչ, գրգիւ, կշիւ (կշռի նույնպես գործ են ածում), փանդիւ, բամբիւ, կննիւ, օծիւ, վընիւ, ծպիւտ, հուպիւտ, վաիւտ, մարգարիւտ (կա և մարգարտի, բայց որպես հատուկ անուն Մարգարիտի.), հովիւ: Մրանցից մի քանիսը գործածվում են նաև հնչյունափոխված ձևով, բայց դրանք աստիճանաբար դիջում են. օրինակ՝ ժպիւտ-ժպտի. հովիւտ-հովտի, վնիւ-վնտի և այլն:

Հնչյունափոխվում են -իվ և -իր-ով վերջավորվող մի քանի բառեր. օրինակ՝ հաշիվ, հովիվ, կռիվ, պատիվ, արծիվ, անիվ (նաև անիվի), խնդիր, գզիր, նախիր, մոխիր, երկիր, պանիր, բոնիր, որոնցից շատերը կարող են նաև անհնչյունափոխ գործածվել: Անհրաժեշտ ենք գտնում նշելու, որ շտղված ձևերը աստիճանաբար օրինականանում են և բռնում սղված ձևերի տեղը: Բոլոր այն բառերը, որոնք նոր են հայտնված մեջ մտնում, պետք է հղովել առանց սղելու. օրինակ՝ հետաքրքիր-հետաքրքիրի: Նույն ձևով պետք է պահել դրարարից վերցրած. դուռ դրական գործածություն ունեցող բառերը. օրինակ՝ ջուիր, ջուիրի, դպիր-դպիրի, նույնիսկ ոնիր-ոնիրի և ոչ ոնրի:

Իք-ով վերջավորվող բառերը հոգնակի կազմելիս և հոլովելիս չի կարելի սղել. օրինակ՝ կարծիք-կարծիքներ-կարծիքի և ոչ կարծքի, վարտիք-վարտիքի, կարիք-կարիքի և այլն:

Որպես կանոն ի շեշտակիր բազմավանկ բառերը բառակազմության մեջ հնչյունափոխվում են: Ձեն հնչյունափոխվում.

ա) -իք-ով վերջավորվող բառերը. օրինակ՝ բաղիք-բաղիքագործ (բայց՝ թաղքել) կարիք-կարիքավոր, բաղնիք-բաղնիքապան (բաղնեպան հին բառ է), չարիք-չարիքաբեր, ալիք-ալիքավորվել և այլն:

բ) Այն բառերը, որոնք նոր են մտնում բառակազմու-

թյան մեջ. այսինքն՝ գրաբարում գրանցից բառեր չեն կազմելվել. օրինակ՝ անառիկ-անառիկություն, գերազանցիկ-գերազանցիկություն, նույնիսկ մասնիկ բառից նոր կազմված մասնիկավոր բառը այժմ մեծ մասամբ գործածվում է մասնիկավոր (Ֆրիդրիխ Շլեգելը 1808 թվականին լեզուները բաժանում է երկու տիպի՝ մասնիկավոր և ներքին թեքման. պրոֆ. է. Բ. Ալայան, Լեզվ. ներածություն, 1952 թ., էջ 580):

դ) Նոր փոխառություններով կազմվածները. օրինակ՝ մարքսիստական, կոմունիստական, արտիստական, վեներտիկոնի:

16. Ի-ՈՎ ՎԵՐՋԱՅՈՂ ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ի-ով վերջացող բաղաձայնի բառերը հոգնակի կազմելիս երբեք չեն հնչյունափոխվում. օրինակ՝ քամի-քամիներ, գինի-գինիներ, որդի-որդիներ, տարի-տարիներ և այլն: Հոգնակին ամբողջովին հոլովվում է անփոփոխ:

Այս կարգի բառերն ունեն երկու տեսակ հոլովում՝ ի և ու: Ի-ով հոլովվելիս բառավերջի ի-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ Ռաֆֆի-Ռաֆֆիի, քեռի-քեռիի, ծառուղի-ծառուղիի (Մուր. I, 76), իսկ ու-ով հոլովվելիս որպես կանոն ի-ն ընկնում է. օրինակ՝ գարի-գարու, թշնամի-թշնամու, խեցի-խեցու¹, թագունի-թագունու: Բացառությամբ են կազմում տարի և կաշի բառերը, որոնք հին անալոգիայով ունեն այլ կարգի հոլովում կա. օրինակ՝ տարի-տարվա, կաշի-կաշվի. սրանց մեջ վ-ն հին ի > ի հնչյունափոխության արձագանքն է ո ձայնավորից առաջ:

¹ Այստեղ խոսքը եզակի հոլովման մասին է, որտեղ գործիական և ներգոյական հոլովներում երբեմն ի-ն մնում է (ծառուղիում արգելված չէր. Մուր., I, 73): Իր ավանդական մեծավոր կղզիով. Վ. Ան. Սևանի ափին): Համեմատաբար, փոփոխվում, բայց տեղեկանքը անկոմս է առհասարակ: Նույնիսկ Թումանյանը ունի հոգնակի-հոգնակիում (1-ին, 582): Համեմատաբար կղզում, փոռով, հոգով, այգով, ռուբով (Րաֆֆի 3-րդ, 30, 84. Նար-Պոս, 7-րդ 203. Շիրվ., 2-րդ, 173, 3-րդ, 419):

Ի-ով վերջավորվող բառերը բառակազմության մեջ հանդես են բերում տարբեր օրենքներ.

Բայեր կազմելիս երբեք չեն հնչյունափոխվում¹. օրինակ՝ շոգի-շոգիանալ, փոշի-փոշիանալ, կղզի-կղզիանալ և այլն: Բացառություն է կազմում գոլորշիանալ բայը, որ հնչվում է նաև գոլորշանալ:

Բառակազմության այլ դեպքերում բառավերջի ի-ն կրում է զանազան փոփոխություններ. առաջին՝ ա-ի հետ միանալով տալիս է եա >յա >ն. այս կազմությունները գեղազանցապես հին կազմություններ են, որոնց օրինակով այժմ սակավ քանակությամբ նոր բառեր ենք կազմում՝ վերցնելով առաջին բաղադրիչի փոփոխված հիմքը. օրինակ՝ հոգի-հոգեբան-հոգեկան (չնայած գրաբարում կան հոգիափայլ, հոգիատափղ ձևերը), շոգի-շոգեքարշ-շոգեզնաց (բայց կա շոգիալից-շոգիամեզ), ոսկի-ոսկեզօծ - ոսկեզույն-ոսկեպատ, օղի-օղեվաճառ-օղետուն, բարի-բարեկամ-բարեգութ, ջորի-ջորեվաճառ-ջորեպան, տարի-տարեկան-տարելից-տարեմուտ, ապակի-ապակեգործ-ապակեպատ, զինի-զինեգործ, զինեբեր-զինեվետ, զերի-զերեղարձ-զերեվարություն, զարի-զարեջուր, գոտի-գոտեպինդ-գոտեպնդել-գոտեռավել, ուղի-ուղենիշ-ուղեգիր-ուղեցույց-ուղեմաս-ուղեկալ, որդի-որդեկություն-որդեսեր (բայց և՛ որդիական-որդիատյաց): Քեռի բառից ունենք բարբառային քեռեկին ձևը, այժմ՝ քեռակին, քեռություն-քեռություն: Աղավնի բառից ունենք աղավնեվաճառ-աղավնետուն, բայց և աղավնակերպ-աղավնաձև-աղավնաձագ-Աղավնատուն-Աղավնաձոր:

Ի-ով վերջացող մի քանի բառերից հնում կազմվել են բարդ բառեր, որտեղ ի-ն ընկել է. այժմ մենք այդ ձևի անալոգիայով նոր բառեր ենք կազմում. օրինակ՝ կենդանի-կենդանական-կենդանություն-կենդանաբանական, թերի-թերություն-թերանալ-թերակշռում-թերատ, խեցի-խեցագործ-խեցակույտ-խեցամամն-խեցքեկ-խեցգետին. կա նաև խեցեգործ,

1 Պետք է նկատի ունենալ անմիջական արմատից կազմվելը:

խեցեմորք, որտեղ ինն ընկած: Կատաղի բառից կազմված են կատաղալից-կատաղություն-կատաղաբար, թշնամի բառից ունենք թշնամանք-թշնամություն-թըշնամաբար, նախնի բառից՝ նախնական. գաղտնի-գաղտնապան-գաղտնագիր-գաղտնամիտ, հայրենի-հայրենական-հայրենաւեր-հայրենագարձ-հայրենագիտություն, վրացի-վրացախոս-վրացագետ-վրացական: Ըստ երևույթին վերոհիշյալ բառերի մեջ հնում ինն իբրև ածանց խիստ հակադրվել է առաջին բաղադրիչին, որի առանձին բառ լինելու ըմբռնումը ուժեղ է եղել, ինչպես որ մենք այսօր արժան, մորթ ձևերը ըմբռնում ենք իբրև անկախ բառեր (հնում էլ այդպես է եղել) և դրանցից թե հնում և թե այժմ կան կազմված բառեր. օրինակ՝ արժանավոր-արժանահալ-արժանահիշատակ-արժանավայել, մորթապաշտ-մորթագերծ (իսկ մորթի բառից հնում կազմված կա մորթեզործ): Նույն բառերի կազմության օրինակով վայրենի, պիտանի բառերից կազմված են վայրենական, անպիտանություն և այլն:

Իսկ վերջացող բազմական բառերի մի փոքրիկ մասը բառակազմության մեջ է մտնում երկու ձևով՝ ինն ընկած և պահպանված: Ինն ընկած է՝ ա) ժողովրդական կազմությունների մեջ. օրինակ՝ քամի-քամհար, նոնի-նոնաստամ, խնամի-խնամություն-խնամանալ (գրականում՝ խնամիություն-խնամիաբար-խնամիանալ (գրաբարի խնամենալ ձևը հնացած է), խելացի-խելացություն, քեհի-քենակալ, բարիբարություն, վանեցի-վանեցություն, պիտանի-պիտանացու, անոթի-անոթություն, կաղնի-կաղնուտ (բայց՝ կաղնեբազուկ, կաղնեփայտ նաև կաղնետունկ), բորենի-բորենություն: Բառակազմության մեջ ի-ի սղում նկատում ենք նաև ներքինացնել, փոքրոգություն, եկեղեցական, հայելի-հայելանման (Շիրվ., 4-րդ, 99) բառերի մեջ:

Ինն ընկնում է ո (օ) ձայնավորից՝ առաջ. օրինակ՝ բարի-բարօրություն, քեռի-քեռոնք (բայց՝ քեռիենց), քեհիքեհոնք (բայց՝ քեհիենց), փոշի-փոշոտ, զինի-զինով-զինոտ, օղի-օղոտ և այլն:

Ի-ն չի հնչյունափոխվում հետևյալ կազմությունների մեջ. հղի-հղիություն (հղամալ հին է և այժմ գործածվում է այլ իմաստով), հոգնակի-հոգնակիություն-հոգնակիաբար, կղզի-կղզիացում-կղզիաբնակ (կղզեբնակ անգործածական է), լուցիկ-լուցկիաման (Շիրվ., 2-րդ 393). ընտանի-ընտանիություն-ընտանեբար, ընտանեբույս-ընտանեսեր-ընտանեկեցություն-ընտանեմամ և այլն. այժմ կենդանի են ընտանեկան, ընտանեբար, որ իմաստափոխվել և նշանակում են ընտանիքական, ընտանիքաբար, իսկ ընտանի բառը այժմ հականիշ է վայրի բառին, եթե բառ կազմենք, կլինի՝ ընտանիաբար, ընտանիություն:

Ի-ն չի ընկնում նաև հետևյալ կազմությունների մեջ. քաղաքացի-քաղաքացիություն-քաղաքացիական, քանի-քանիանոց-քանիապատիկ, վաղեմի-վաղեմիություն (գործ են ածում նաև՝ վաղեմություն), սպի-սպիացում, պիտանի-պիտանիություն (բայց՝ անպիտան-անպիտանություն), անդրի-անդրիագործ-անդրիավանառ, արի-արիություն (արություն հին է,) արիաբար-արիասիրտ արփի-արփիափայլ-արփիացնցուղ, լեզվանի-լեզվանիություն, գյուղացիություն-գյուղացիական, ամուրի-ամուրիություն, բերրի-բերրիություն, անհոռի-անհոռիություն (հնչում են նաև՝ անհոռություն);

-Այլ վերջմասնիկով ածանցվելիս բառավերջի ի-ն դառնում է ե>յ. օրինակ՝ որդի-որդյակ, հոգի-հոգյակ, պատանի-պատանյակ, կղզի-կղզյակ, աղավնի-աղավնյակ և այլն;

17. ՈՒ ԶԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Շեշտակիր ու ձայնավորը նույնպես հանդես է գալիս երեք դիրքով՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում. ըստ որում այս բոլոր բառերը բաժանվում են երկու խմբի՝ միավանկ և բազմավանկ բառեր: Բացի միավանկ բառերից, բառասկզբի ու-ն շեշտակիր է նաև մեկուկես վանկանի մի քանի բառերի մեջ, իսկ բազմավանկների մեջ շեշտակիր ու-ն հատկապես վերջին վանկում կարող է լինել, իսկ եթե բառավերջում է ու-ն, ապա շեշտը այդ վերջինի վրա է:

Շեշտակիր ուն բառասկզբում շեշտը կորցնելիս *ս ձ մի* պարագայում չի հնչյունափոխվում. օրինակ՝ ուղտ-ուղտեր-ուղտի-ուղտապան, ուս-ուսեր-ուսի-ուսնոց. բացառություներ կա միայն բառակազմության մեջ մի քանի բառերի համար. օրինակ՝ ումպ-ըմպանակ-ըմպելիք, (հունդ) ունդ-ընդդեմ, ունչ-ընչացք (գրաբարում կա ունչատ), որոնք քարացած գործածություններ են:

Առավ փերջացող միավանկ բառերը առանց բացառության բոլոր պարագաներում (հոգնակիի կազմություն, հոլովում, բառակազմություն) ուն փոխում են վ-ի. օրինակ՝ ձու-ծվի-ծվեր-ծվածեղ, բու-բվեր-բվինակ, կու-կվել-կվանոց, լու-լվին լվի-լվեր-լվադեղ-լվածաղիկ, չու-չվել-չվի (Վ. Անանյան, Սևանի ափին, 57) — չվացուցակ, տու-տվել դասավորություն-դասավոր (այժմ դասատուի): Այսպիսի բառերի մեջ ուն չի փոփոխվում կրկնվելիս. օրինակ՝ կուկու, բուբու, մունու (իսկ հնում կուկու > կկու):

Առավ փերջացող բաղմամանկ բառերը հոգնակի կազմելիս չեն հնչյունափոխվում. օրինակ՝ ուրու-ուրուններ, կկու-կկուններ, եղջերու-եղջերուներ և այլն:

Բառակազմության մեջ հնչյունափոխված են մտնում հետևյալ բառերը. ուրու-ուրվական-ուրվագիծ-ուրվանկար. եղջերու-եղջերվաբաղ-եղջերաճար (հին բառեր են), աղու-աղվական-աղվ սմագ, լեզու-լեզվաբան-լեզվանի, թքու-թքվել-թքվաշ-թքվածին-թքվուտ, կծու-կծվել-կծվացում-կծվաճամ, երկու-երկվանալ-երկվություն (սրանք հին բառեր են. մենք այժմ բառ ենք կազմում երկ արմատից, իսկ երկու բառից ունենք երկուական, երկուբերանի). մեղու-մեղվանոց-մեղվապահ-մեղվաբուծություն, առու-առվակ-առվաճան-առվամեջ, կատու-կատվախոտ-կատվաճագ: Այս նույն բառերը փոփոխվում են եզակի հոլովման ժամանակ. օրինակ՝ լեզու-լեզվի, թքու-թքվի, Բաքու-Բաքվի, հերու-հերվա, կկու-կկվի, Շուշի-Շուշվա (Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ, 546), մեղու-մեղվի, առու-առվի, կատու-կատվի. բացառություն են կազմում ուրու-ուրուի, եղ-

ջերու-եղջերուի («Եղջերուի մահը», Թումանյան), նաև եղջերվի. երկու բառի հոլովումը կազմվում է երկուս ձևից, իսկ եթե հարկ լինի երկու հոլովել, կլինի՝ երկուի: Բայց մի վանկ ավելացնելու համար հաճախ հնչյունափոխություն չի լինում. համեմատիր. «որ մի չղջիկից կամ մի պաղդոկից, արջակատուից այսպես թանկագին տեղեկություններ թաքցըրած պահիր» (Շեքս., 1-ին, 71):

Ուռվ վերջացող մյուս բազմավանկ բառերի մեջ ու-ն չի հնչյունափոխվում, եթե այդ բառերը բարդ բառեր չեն, և դրանց վերջին բաղադրիչը ու-ռվ վերջացող միավանկ բառ չէ: Պետք է նշել, սակայն, որ նույնիսկ նման բարդ բառերից նոր բառեր կազմելիս, երբեմն ու-ն փնտրվում է. օրինակ՝ չու-չվացուցակ, բայց՝ օղաչու-օղաչուական-օղաչուություն: Չփոփոխվող բառերի օրինակներ են՝ նրազու-նրազուական-նրազուի, գնչու-գնչուական-գնչուի, քու-քուսի-քություն, հյու-հյուի-հյություն (նաև հյություն), վաշխառու-վաշխառուի-վաշխառություն (մի ու-ն ընկնում է հո-րանջի հետևանքով), հոգաբարձու-հոգաբարձուի-հոգաբարձուական նաև՝ հոգաբարձական:¹

18. ՈՒ ՋԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԻՑ ՓԱԿ ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՄԵՋ

Այսպիսի բառերը, ինչպես ի-ի մասին խոսելիս ասացինք, նույնպես հնչյունափոխական տարբեր տեղեկանքներ են հանդես բերում. ամենից քիչ հնչյունափոխվում են հոգնակի կազմելիս, իսկ ամենից շատ՝ բառակազմության մեջ: Սրանից գուրու պետք է նաև նկատի առնել հետևյալ հանգամանքները. նոր փոխառությունները բնավ չեն հնչյունափոխվում. անփոփոխ են փնտրվում նաև այնպիսի բառերն

¹ Հոգաբարձի, հարսնացվի, իրավասվի, վաշխառվի (Շիրվ., 3-րդ, 13, 96, 114, 131). եղջերվով (Բաֆֆի, 3-րդ, 4): Չնայած այս ձևերի առկայության և պրոֆ. Գ. Մեակի պնդման (Գ. Մեակ, Հայոց լեզվի տեսություն, 1-ին մաս, էջ 104), այնուամենայնիվ սրանք հնացած են, ուստի և մերժելի:

փուշ, փուտ, փութ, քուղ, քուն, Քուռ, քուռ (քուռակ) քութձ, քութմ, քութջ:

Այս բառերից ու արմատներից հոգնակի կազմելիս հընչյունափոխվում են համաժողովրդական լեզվի մեջ երկար ժամանակ մասսայական գործածության մեջ մտած բառերը (բնականորեն սոսկ արմատի արժեք ունեցող ձևույթները հոգնակի չեն կազմի, ուստի և այս դեպքում չեն հնչյունափոխվում): Մասսայական գործածություն ունեցող ածականները հոգնակին կազմում են փոփոխված հիմքից. օրինակ՝ քիչ-քեր, Պուռ-ծուր, հիմ-հմեր, սակայն այլ ածականներից նոր հոգնակի կազմելիս, վերցնում ենք չփոփոխված հիմքը. օրինակ՝ նուրբ-նուրբեր, թունդ-թունդեր, լուրթ-լուրթեր, լուրջ-լուրջեր և այլն: Հոգնակի կազմելիս չեն հնչյունափոխվում նաև մակրայներն ու հազվագյուտ գործածություն ունեցող գոյականները, ապա նոր փոխառությունները: Չնայած այս ամենին, այնուամենայնիվ բերված ցանկի մեջ կան բավական թվով բառեր, որոնք հոգնակի կազմելիս հնչյունափոխվում են: Ահա այդ բառերը. թուր-թրեր, բուն-բներ, բուրդ-բրդեր (նաև բուրդեր), գունդ-գնդեր, գուր-գբեր, թուզ-թզեր, թուր-թթեր, թուփ-թփեր, թումբ-թմբեր, թուղթ-թղթեր, լուծ-լծեր, խուփ-խփեր (նաև խուփեր), խումբ-խմբեր, խուց-խցեր, ծուխ-ծխեր, մուխ-մխեր (ծուխեր—տուն, ընտանիք), ծուռ-ծուր-ծուրեր, կուծ-կծեր, կուտ-կտեր. կուրծք-կրծքեր, հուր-հրեր-հուրեր, հիմ-հմեր, մուր-մբեր, նուշ-նշեր, շունչ-շնչեր, շուն-շներ, ջուր-ջրեր, սուտ-ստեր, սուրբ-սրբեր, տուն-տներ, ցուրտ-ցրտեր, փունջ-փնջեր, քուրդ-քրդեր, քութմ-քքմեր (նաև՝ քութմեր):

Մնացած բոլոր բառերի ու արմատների (եթե հարկ լինի դրանք որպես բառ գործածել) հոգնակին կազմվում է առանց հնչյունափոխություն: Վերևում բերված փոփոխված հիմքով հոգնակի բառերը հատկացուցիչի հոգնակին միաժամանակ արտահայտելիս, չեն հնչյունափոխվում. օրինակ՝ շունչները, կուրծքներդ (կրծքներդ ճիշտ չէ), ծուխներս, կուտ-

մերս և այլն¹, Անհրաժեշտ է այստեղ ևս նշել, որ աստիճանաբար հնչյունափոխված ձևերը տեղի են տալիս հնչյունափոխվածներին, ուստի երկու ձևով հոգնակի կազմողներից նախընտրելին հնչյունափոխվածն է:

Վերևում բերված դիտողությունները ընդհանրացնելով, եզրակացնում ենք, այն կարգի բառերը չեն հնչյունափոխվում, երբ նոր փոխառված բառեր են՝ լինեն դրաբարից, բարբառներից, ողաերենից, եթե մեր լեզվին անցել են գրականության ճանապարհով, կամ հոգնակին կազմվել է գրականության մեջ. օրինակ՝ բուրգ, բուստ, բուճա, գուղձ, դուքս, լուր, գուգս, խուղ, մուաք, ռումբ, աուրք: Չհնչյունափոխվելու մեջ գեր կարող են խաղալ նաև բազաձայնների հոստակոմբն ու բառի ձևի պահպանումը՝ այլ բառերի չնմանվելու համար. օրինակ՝ կուռք-կուռքեր, մուաք-մուաքեր (սղվածը կլինի մաքեր), փուքս-փուքսեր, հոււմ-հոււմեր, աուրք-աուրքեր և այլն:

Այն միայնակ բառերը, որոնք հոգնակի կազմելիս հնչյունափոխվում են, փոփոխվում են նաև հոլովման ժամանակ. միայն սրոշ կարգի բառերի հոգնակին սկզբնապես չի գործածվել, և եթե այժմ հոգնակի ենք կազմում, փոփոխված հիմքը անսովոր է. բայց որովհետև զբանց փոփոխված հիմքով այժմ կատարվում է հիշյալ բառերի հոլովումը, վերջինիս համաբանությանը էլ հոգնակին երբեմն փոփոխված հիմքով ենք կազմում. օրինակ՝ սուգ-սուգեր, բայց՝ սգի (նաև սուգի), հոււնձեր, բայց՝ հնձի, թուխպ-թուխպեր-թխպի, շուրք-շուրքեր-շրթի (ճիշտը՝ շուրթի): Այսպիսի դեպքերում էլ հոլովելիս նախադասությունը պետք է տալ անհնչյունափոխ ձևերին, մանավանդ, որ զբանց հոգնակի հոլովումը պահվում է անփոփոխ: Կան և այնպիսիները, որոնք հավասարապես գործածվում են երկու ձևով. օրինակ՝ դուքս-դքսի-դուքսի, գուք-գքի-գուքի, թոււնդ-թնդի-թոււնդի.

¹ Այս կանոնը վերաբերում է նաև ի-ով բառերին:

լուր-լրի-լուրի, բուրգ-բրգի-բուրգի, սուրն-սրնի-սուրնի, մութ-մթի-մութի: Նախադասելի են չհնչյունափոխված ձևերը¹:

Հոլովելիս չեն հնչյունափոխվում՝ զուգս, փութս, գուրկ, գուղծ, գուսպ, թութս, թութծ, լուրջ, լուռ, խութ, խուլ, խուղ, ծուծ, (ծծի ձևը ծիծ բառից է) ծութ, կուշտ, կուգ, կում, կուտք, հում, հուն, հունչ, մունչ, մուշկ, սուրն, մուտք, նուրբ, շուք, շուրջ, ոռու-ռուսի (հոգնակին կազմված է երկվանկի կանոնով՝ ոռուսնի), ոռմբ, վուշ, տունկ, տութ, ցուլ, ցուպ, քուղ և այն արմատները, որոնք եթե հարկ լինի հոլովել, այսինքն՝ գործածել իրեն բառ:

Չխոսելով արդեն վերևում բերված հնչյունափոխված բառերի, արմատների մասին, բառակազմության ժամանակ այս չփոփոխվողները նույնպես ենթարկվում են հընչյունափոխության. օրինակ՝ զուրկ-զրկել-զրկանք, գուսպ-գսպել, թութ-թխսգույն, թութծ-թրծել, լուրջ-լրջմաություն, լուռ-լուսկյաց, խութ-խշամ-խթել (նույն արմատն է, ինչ որ խիթ), խուլ-խլանալ, նուրբ-նրբանկատ, շուք-շքամուտք, շուրջ-շրջել-շրջան (շուրջանակի քարացած ձև է), ծութ-ծր-փանք, մուշկ-մշկախնձոր-մշկահոտ-մշկածաղիկ, մուրն-մրճահար, ոռմբ-ռմբապստաքան-ռմբածիզ, տունկ-տնկել, փուլ-փլշել, քուղ-քղանցք և այլն: Սակայն սրանց մեջ ևս բացառություններ նկատվում են. օրինակ՝ քուրք-քուրքական (քրքական հնացած է), ոռու-ռուսական, ցուպ-ցուպիկ, տութ-տութիկ, կուգ-կուգիկ և այլն:

Այն արմատները, որոնցից հնում բառեր չեն կազմվել, այսինքն՝ անսովոր է նրանց փոփոխված ձևը, պեճք է վերցնել անփոփոխ: Իսկ փոփոխված բառերը չեն փոփոխվում մասամբ անհոգակապ ժողովրդական կազմությունների ու կրկնությունների մեջ. օրինակ՝ կուծկուտբուկ, թութաշվի, խութուփոս, կուգեկուղ և այլն:

¹ Նուն, տուն բառերը չան, քան հոլովաձևերում իրենց փոփոխությունները չեն կապված:

**19. ՈՒ ԶԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՇԵՇՏ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՐԻՇ ԲԱՌԵՐՈՒՄ**

Շեշտակիր ու ունեցող գրաբարի հարաշեշտ երկվանի բառերը, որ մեր գրական լեզվում գրեթե միավանի են մնացել, երկու մասի են բաժանվում. ն-ով և ր-ով վերջացողներ: Ն-ով վերջացողները հնչյունափոխվում են բոլոր պարագաներում. օրինակ՝ բուռ(ն)-բռներ-բռնել-բռնակալ-բռի, կուռ(ն)-կռներ-կռան-կռնի-կռնաբաց, գուռ(ն)-գռան-գռնաց-գռներ, խուռն-խռնվել-խռնում (բայց՝ խռոններամ), ծուռկ(ն) ծնկան-ծնկներ-ծնկաշոք-ծնկի, շուրթ(ն)-շրթան-շրթնագլխեր (բայց և շուրթի), ձուկ(ն)-ձկան-ձկնկիթ-ձկնավամառ-ձկներ, մուկ(ն)-մկան-մկներ-մկնդեղ, փուռ(ն)-փռան-փռի-փռնապան-նուռ(ն)-նռան-նռներ-նռեր-նռնակ, գուռ(ն) գռան-գռեր-գռի: Որոշ բացառություներ է ներկայացնում ռուռզ(ն) բառը. եզակի սեռ. ռուռզի, հոգնակի ուղղական՝ ռուռզեր. իսկ բառակազմության մեջ մտնում է փոփոխված. օրինակ՝ ռնգալիմ-ռնգեղջյուր: Դուրզ(ն) բառը անգործածական է. գործածելիս հարկավոր է հոլովել հնչյունափոխված ձևով:

Ր-ով վերջացող հարաշեշտ բառերն են՝ դուստր, ուստր, ծուներ, կուսր, սուսր (կարմիր ներկ), փուխր, որոնցից դուստքը գրաբար ձևով հոլովվելիս հնչյունափոխվում է. օրինակ՝ դատեր, իսկ ի-ով հոլովվելիս՝ մնում է անփոփոխ. օրինակ՝ դուստրի-դուստրերի: Բառակազմության մեջ ունենք փոփոխված. օրինակ՝ դստրիկ, բայց և՛ դուստրիկ: Ուստր բառը ընավ չի հնչյունափոխվում: Կուսր բառը հոգնակին և հոլովումը կազմվում է առանց հնչյունափոխության՝ կուսրեր-կուսրի, իսկ բառարարգման ժամանակ փոփոխվում է. օրինակ՝ կպրածյութ-կպրել-կպրապատ և այլն: Մուեր բառը չի հոլովվում, իսկ եթե հոլովվի, կմնա անփոփոխ, իսկ բարդության մեջ մտնում է երկու ձևով՝ ծուերդրություն-ծըն-րադիր: Փուխր հնչյունափոխվում է միայն բառակազմության մեջ, օրինակ՝ փխրել-փխրուն-փխրվել:

Այս տեսակի հարաշեշտ եռավանի բառերը հոգնակի կազմելիս և հոլովվելիս՝ երբեք չեն հնչյունափոխվում. օրին-

նակ՝ արմունկ(ն)-արմունկի-արմունկներ, եղունգ(ն)-եղունգի-եղունգներ, կրունկ (կրուկն)-կրունկի կա և՛ կրնկի-կրունկներ, նպուռ(ն)-նպուռի-նպուռներ, շարժումն-շարժումի-շարժումներ: (Գրաբարածե հոլովվելիս փոփոխվում է. օրինակ՝ շարժման և այլն): Բառակազմության մեջ պահպանվում է հին հնչյունափոխությունը. օրինակ՝ կրնկակոխ, եղնգաքար:

Ում(ն) վերջավորվող բայանունները աշխարհաբար ձևերի մեջ չեն հնչյունափոխվում. օրինակ՝ շարժումի, անկումի, շարժումներ-անկումներ, խոստումնալից (նաև խոստմնալից) ինչպես շարժումային, անկումային և այլն: Շարժմունք, արարմունք, հարցմունք, բերմունք և սրանց նման ձևերը հին հոգնակի կազմություններ են և փոփոխությունն էլ հին է, ինչպես որ շարժման, անկման, իմացման, հուզման և այլն ձևերը հիմ հոլովաձևեր են:

Բազմավանկ շեշտակիր ու ունեցող բառերը հոգնակի կազմելիս երբեք չեն հնչյունափոխվում. օրինակ՝ զլուխ-զլուխներ, ծծումբ-ծծումբներ, ծնունդ-ծնունդներ, սերունդ-սերունդներ և այլն: Ըստ այդմ էլ ամբողջ հոգնակի հոլովումը մնում է անփոփոխ, սակայն եզակի հոլովման մեջ մի քանի բառեր հին համաբանությամբ հնչյունափոխվել են, իսկ այժմ տենդենց է նկատվում՝ չհնչյունափոխված գործածել. օրինակ՝ զլուխ-զլիխ, ծծումբ-ծծմբի, բայց այժմ՝ ծծումբի, մանավանդ որ չորս բազաձայն է հանդես գալիս բառի սկզբում: Մնունդ-ծննդյան, բայց՝ ծնունդի. ծննդի հնացած, արհեստական ու անհարմար ձև է: Պաուղ-պաղի, նաև պաուղի, սնունդ-սնունդի (սննդի), սերունդ-սերնդի-սերունդի, բլուր-բլրի-բլուրի, թռչուն-թռչնի-թռչունի, տեսուչ-տեսչի-տեսուչի, բազուկ-բազկի-բազուկի, խորհուրդ-խորհրդի-խորհուրդի, ժողովուրդ - ժողվրդի - ժողովուրդի - (ժողվրդներ ձևը մերժելով պետք է մերժել), մննդուկ-մննդկի-մննդուկի, պաուկ-պաուկի (պտկի), ձմերուկ-ձմերուկի, սարուկ-սարկի-սարուկի, մածուն-մածունի-մածնի: Անուն, աշուն, գարուն ի-ով հոլովվելիս երբեք չեն փոխվում, իսկ գրաբարի ձևով՝ լինում են աշնան, անվան, գարնան:

Բառակազմության մեջ գերազանցապես մտնում են փոփոխված. օրինակ՝ ստրկական, տեսական, խորհրդային, ժողովրդական, սերնդագործություն և այլն:

—Ուստ ամանցով կազմված գոյականները յան-ով հոլովվելիս հնչյունափոխվում են, իսկ ի-ով հոլովվելիս հնչյունափոխությունը հնացած է և արհեստական. օրինակ՝ փախստի, ճիշտն է՝ փախուստի, կորուստի, ապրուստի, հագուստի և այլն թերևս զալստի ձևը պահպանվում է միմիայն ի հակադրություն Գալուստի հատուկ անվան սեռականի: Բառակազմության մեջ սրանք հանդես են գալիս փոփոխված ձևով:

20. ՅԱ (ԵԱ, ԵԱ3), ՈՒ3 (ՈՅ), ՅՈՒ (ԻԻ)

ՀԻՆ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈ ԽՈՒԹՅՈՒՆԸ

Յա (հին եա) շեշտը կորցնելիս հոլովման և հոգնակի կազմության դեպքում երբեք չի հնչյունափոխվում. օրինակ՝ սենյակ-սենյակի-սենյակներ, դղյակ-դղյակի-դղյակներ մատյան-մատյանի-մատյաններ, առաքյալ- առաքյալի-առաքյալներ և այլն:

Յա-ն բառակազմության մեջ փոփոխված ենք դանում մի քանի հին բառերի մեջ. օրինակ՝ վայրկյան-վայրկենական, բայց կիրառվում են նաև վայրկյանապես, վայրկյանացույց-վայրկյանաբար ձևերը: Մեհյան բառից հնում կազմված են մեհենական-մեհենագիր-մեհենադրոշմ, առյան բառից՝ ատենակալ-ատենաբան-ատենադպիր, մատյան-մատենադարան - մատենավար - մատենագրություն-մատենագիտություն, առաքյալ - առաքելություն - առաքելական, տեղյակ-տեղեկություն - տեղեկատվություն (Ալաջաջյան, «Անապատում»), տեղեկագիր-տեղեկանք, սենյակ-սենեկապետ, բայց նույն կազմությամբ՝ գրասենյակային¹, մեհակյաց-մեհակեցություն, կյանք-կենսագրություն-կենսաբան: Սենեկային ձևը վաղուց մեռած է (Բաֆֆի, 3-րդ, 602):

¹ Այս տեսակ կազմությունների համար պրոֆ. Մ. Արեղյանը բողոքելով գրում է. «Այս ձայնափոխությունը նոր լեզվի մեջ կենդանի չէ. ուստի և դպրոցական հայերեն չսովորած մարդիկ սխալ կազմու-

Ձեն հնչյունափոխվում՝ հոբելյան-հոբելյանական-հոբելյանական, դղյակ-դղյակաձև-դղյակապարիսպ. դայակ-դայակություն-դայակորդի, մանյակ-մանյակազարդ-մանյակաձև և այլն: Նոր բառեր կազմելիս երբեք չի կարելի հնչյունափոխված ձևը գործածել, քանի որ այդ հնչյունափոխությունը միայն քարացած կազմությունների մեջ է մնացել:

Յա (հին եայ) միայն հանդես է գալիս բառի վերջում և հոլովման ու հոգնակիի կազմության ժամանակ երբեք չի հնչյունափոխվում. օրինակ՝ պաշտոնյա-պաշտոնյայի-պաշտոնյաներ, քրիստոնյա-քրիստոնյայի-քրիստոնյաներ և այլն. քրիստոնյա-քրիստոնի, հրեա-հրեի՝ Շեքսպիրի թարգ. մեջ (1-ին, 522, 523) հին է ու արված է հանգի համար: Իսկ Դեմիքանի մոտ գործածված Մամիկոնից ձևը քարացած է. մենք այժմ չունենք Մամիկոնյայք ուղղականը: Բառակազմության մեջ հին հնչյունափոխական օրինակափոխյամբ փոփոխվում է. օրինակ՝ հրյա գրվում է հրեա-հրեություն-հրեական, հրեունի, քրիստոնյա-քրիստոնեություն և այլն:

Յու (հին իւ) երկհնչյունը փակ վանկում (միայն յուն, ություն վերջափոխող բառերի մեջ)¹ հոգնակի կազմելիս չի հնչյունափոխվում. օրինակ՝ արյուն-արյուններ, պետություն-պետություններ, գիտություն-գիտություններ և այլն:

Հոլովման ժամանակ, եթե բառը գրաբարի հոլովման սխառեմով է հոլովվում, յուն հնչյունափոխվում է յա (հին եա)-ի. օրինակ՝ արյուն-արյան, գիտություն-գիտության, իսկ եթե այդ տեսակ բառերը հոլովում ենք ի-ով, այսինքն՝ փոխում ենք գրաբարի հոլովման սխառեմը, ապա յուն ոչ մի հնչյունափոխության չի ենթարկվում. օրինակ՝ Կորյուն-կորյունի, անիյունի, ձյունի, արդյունքի, սյունի, պայքյունի, բախյունի և այլն:

Սյուններ են անում, ինչպես են «գրասենյակային» «հոբելյանական» փոխանակ՝ «գրասենեկային» «հոբելենական» ձևերի: Պրոֆ. Մ. Արեղյան, ՀՀայոց լեզվի տեսություն, 203: Մինչդեռ այժմ Արեղյանի պահանջած ձևերը արդեն անվերադարձ մեռած են:

¹ Մնացած զեպքերում յու երբեք չի հնչյունափոխվում:

Պետք է նշել, որ -յու (հին իւ)-ի հնչյունափոխությունը շեշտի հետ կապ չունի, դա ձայնդարձ է և կապ ունի քերականական կատեգորիայի ստեղծման հետ, ուստի և բառակազմութեան մեջ այդ բառերը մտնում են առանց փոփոխութեան, եթե իհարկե բառակազմութեան համար չի վերցվում սեռականի հիմքը. օրինակ՝ արեմապարտ, արեմաթաթալ և այլն, որոնք հին կազմություններ են. մենք այժմ բառեր ենք կազմում այս բառերի ուղիղ ձևերից. օրինակ՝ արյունախում-արյունաքամ և այլն. հնում էլ մեծ մասամբ վերջին ձևերն էին մտնում բառակազմութեան մեջ:

Ույ (հին ոյ) փակ վանկում հոլովման և հոգնակիի կազմութեան ժամանակ երբեք չի հնչյունափոխվում. օրինակ՝ համբույր-համբուրի, գրույց-գրուցի, ցույց ցուցի, համբույրներ, գրույցներ, ցույցեր և այլն:

Հնչյունափոխվում է հետևյալ դեպքերում՝ ա) երբ բաձ ենք կազմում. օրինակ՝ հույզ-հուզել, սույզ-սուզել, փույթ-փութալ, գրույց-գրուցել, ցույց (ցուցել)-ցուցում-ապացույց-ապացուցել, բույր-բուրել- համբույր-համբուրել, վարագույր-վարագուրել, կույր-կուրանալ, հրապույր-հրապուրել, պարույր պարուրել, հանգույց-հանգուցել, զնկույց-զնկուցել, թույն-թունավորել, լույս-լուսավորել, խույս-խուսափել, հույս-հուսալ: կույտ-կուտել-կուտակել, ձույլ-ձուլել, բույծ-բուծել, լույծ-լուծել, պսնույն-պսնունել, ծույլ-ծուլանալ, տույծ-տուծել, բույծ-բուծել, կառույց-կառուցել, մատույց-մատուցել և այլն:

բ) Մի քանի բառերի մեջ ույ պատմական հնչյունափոխութեամբ դարձել է ու և հնչյունափոխվում է ու-ի օրինակափութեամբ. օրինակ՝ սառույց մասամբ հնչվել է սառուց և այս ձևից էլ կազմել ենք սառցապատ-սառցասար-սառցակույտ, նույնիսկ սառցի (Շիրվ., Յ-րդ, 68), այնինչ այս բառերը պետք է լինեին սառուցասար, սառուցակույտ, սառուցապատ:

Այդպես էլ ույծ, գույծ, աշխույծ, տույծ, բույծ, բույթ, անույշ, պույտ և այլն այժմ հնչվում են տուծ, ուծ, բուծ.

(վերջին ձևը Գեմիլդյանը «Վարդանանք»-ում գործածում է բծիշկ, բուծակ նշանակությամբ), բուք, աշխուծ, պուռ և այլն. նույնիսկ ուծ, անուշ արդեն օրինականացված են ուղղագրական բառարանով: Ույց-ով վերջավորվող մի քանի ձևեր՝ լույց, կառույց, ուսույց, հատույց շեշտը կորցնելով՝ հնչյունափոխվում և դառնում են լուց (լուցկի), կառուց (կառուցում), ուսուց (ուսուցում), հատուց (հատուցում): Մատույց բառը որպես գոյական հոլովվելիս և հոգնակի կազմվելիս չի հնչյունափոխվում. օրինակ՝ մատույցի-մատույցներ-մատույցների և այլն, բայց որպես հին ձև բառակազմության մեջ մեզ հասել է հնչյունափոխված ձևով. օրինակ՝ մատուցել-մատուցում և այլն: Իսկ այսօր մատույց բառից եթե նոր բառ կազմենք, կվերցնենք անփոփոխ. օրինակ՝ մատույցային և ոչ մատուցային:

Բառակազմության ժամանակ ույ-ը չի փոխվում ու-ի մի քանի այլ բառերի մեջ. օրինակ՝ առույզ, պատրույզ, ծրխնելույզ, ողկույզ, գրքույկ, բույլ, դույլ, խարույկ, մակույկ, բույր, գույզ-գույզավորվել (ի տարբերություն գուգավորվել բայի). իսկ գուգանալ (միաբանվել) արդեն հնացած է. պետք է այժմ հնչել նշույլել և ոչ նշուլել: Ոչ մի դեպքում չեն հնչյունափոխվում քույր, նույն բառերը. օրինակ՝ քույրական-քույրանալ (քուր բարբառային հնչյունափոխություն է, որից քրոջ ձևը և սրանից էլ՝ քրոջական), նույնություն-նույնական և այլն:

Ոյ-ը չի դառնում ույ միավանկ բառերի վերջում, եթե չի հաջորդում բաղաձայն. իսկ բառավերջի այդ ոյ-ը երբեք չի հնչյունափոխվում. օրինակ՝ գոյ-գոյական-գոյություն, խոյ խոյանալիս, բազմավանկ բառերի վերջում ոյ>ո. յ-ն վերականգնվում է հոլովման և բառակազմության մեջ ու մնում է անփոփոխ. օրինակ՝ երեկո-երեկոյանալ-երեկոյի: Բառավերջի ոյ (ույ), երբ վերջում ավելանում է գրաբարի ք մասնիկը, որ այժմ բառակազմական նշանակություն ունի, նույնպես չի հնչյունափոխվում. օրինակ՝ պիտո-պի-

տույթ, հանգ-հանույթ. սրանց նմանությամբ ունենք կա-
հույթ, գահույթ, խնջույթ, սրունք չեն հնչյունափոխվում:

Ձեն հնչյունափոխվում նաև ույթ ածանցով կազմված
բառերը, երբ որ հոլովվում և հոգնակի են կազմվում. օրինակ՝
հացկերույթ, ձահնորույթ, սովորույթ, հավաքույթ, ցերեկույթ,
երևույթ, գայրույթ, պարերույթ, հասույթ, հանույթ, ելույթ,
ծածկույթ, մշակույթ, ձևույթ: Բարբառային ձևեր են և պատ-
մական հնչյունափոխության արդյունք՝ բնութք (վես էր
բնութքը. Խաչակյան), սովորութք և այլն, որ հատուկ գոր-
ծածություն ունեն:

Վերևում բերված բառերի բառակազմության մեջ հնչ-
յունափոխված ձևերը հնացած են և միայն քարացած ձևով
մնացել են մի քանի կազմությունների մեջ, օրինակ՝ ըն-
կուզենի, կուրորեն, հանգուցել և այլն. այժմ նոր բառ պետք
է կազմել չհնչյունափոխված ձևերից. ինչպես՝ ողկույզ-ող-
կույզաձև, խույր-խույրաձև, նծույգաբաշ, մակույկավար,
աամույրեն, արույրեն, գրույցընկեր, կույրախնամ
և այլն: Բնականորեն այս բոլոր բառերը հոլովման և հոգ-
նակիի կազմության մեջ չեն հնչյունափոխվում:

Բառակազմության մեջ միայն հնչյունափոխված ձևով
են հանդես գալիս հետևյալ բառերն ու արմատները՝

Հույզ-հուզումնալից - հուզաթաթախ, խույզ-խուզարկել-
խուզարկություն, սույզ-սուզանավ-ջրասուզակ, փույթ-փութա-
ջան, ցույց-ցուցակ-ցուցամու, ժույծ-ծուծկալ, ծուլ-ծուլամիա-
ծուլանալ-ծուլություն, ձուլ-ձուլածո-ձուլաբան, բույծ-բուծել-
բուծարան, լույծ-լուծարք-լուծողական-լուծույթ, պտնույն-
պտնունել-պտնունապատանք-պտնունանք-պտնունազարդ,
գույն-գունավոր-գունազարդ, թույն-թունավորել-թունալից,
բույս-բուսաբան-բուսայուղ, լույս-լուսաքողարկում, խույս-
խուսափողական, կույս-կուսական-կուսակրոն, հույս-հուսա-
բեր-հուսամատ-հուսակտուր, զեկույց-զեկուցագիր:

Ինչ վերաբերում է բույն, փույթ, նկույթ, կապույտ,
պտույտ բառերին, ապա սրանք մեծ մասամբ հնչվել են բռն,
բուք, նկուք, կապուտ, պտուտ, ուստի սրանց հնչյունափոխու-

թյունը այլ բնույթ է ստացել. ույ (ոյ) > ու, բայց փոխանցման արդյունքը հանդիսացող ու-ն երբեք ը չի դառնում, իսկ սրանց մեջ կրկնակի հնչյունափոխություն է տեղի ունեցել. պատմական հնչյունափոխությամբ ույ (ոյ) > ու, իսկ սա էլ շեշտակորույս լինելով > ը. փոխանակ ունենալու նկույթամատ, ունենք նկթամատ, այս ձևով էլ՝ բնավեր, բթամատ, կապաագույն, պատել (բայց՝ պտուտակ - պտուտահողմ): Մրանցից բույն և բույթ ձևերը բոլորովին հնացել են, մանավանդ որ հոլովելիս՝ առաջանում է արհեստականություն՝ բույթի, բույնի-բութի-բունի:

Վերևում բերված հնչյունափոխական երևույթներից շատերը դեռ վերջնական կայունություն չեն ստացել. հին սերունդի համար հարազատ են հնչում հնչյունափոխված բառաձևերը, իսկ նորերը նախընտրում են չփոփոխվածները: Մի հիսուն տարի առաջ գործածական էին լուսի, լուսո, պետութենից, իրավասլի, վաշխառվի, բլրների և այլն, այժմ դրանք այլևս չեն գործածվում: Մեզ համար խորթ են հընչում այժմ հուսով, ծպտով, լուսով ձևերը, որ գործածում է Դեմիրճյանը (Վարդանանք, 1951 թ., էջ 4, 11, 757): Հատուկ անունները (մանավանդ, երբ գոյություն ունեն նրանց հասարակ գործածությունները) տենդենց ունեն հնչյունափոխվելու. օրինակ՝ Գալուստի, Հովհաննեսի, Մովսիսի: Շատերի հնչյունափոխված ձևերը դալիս են ավանդաբար:

21. ՀԱՅԵՐԵՆԻ ՄՅՈՒՍ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԼԻՆ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՇՏԻ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՄԲ

Վերևում մենք տեսանք թե շեշտից զրկվելով հայերենի ե (է), ի, ու ձայնավորները ենթարկվում են տարբեր փոփոխությունների. այդ փոփոխությունները զրաբարում հիմնական և ուժեղ օրինաչափ երևույթներ էին, որոնք սակավ բացառությամբ ընդգրկել էին այդ հնչյունները բոլոր պարագաներում. հարց է առաջ գալիս՝ ինչպե՞ս է, որ նույն օրենքը չի տարածվել նաև մյուս ձայնավորների ու երկ-

բարբառների վրա: Մենք գրաբարի հնչյունափոխության երևույթները ուսումնասիրում ենք՝ հիմնվելով 5-րդ դարի տվյալների վրա, մինչդեռ հետագա դարերում հնչյունափոխության հիշյալ օրենքները այնքան ուժեղ ու կենդանի են եղել, որ անճանաչելիորեն փոխել են մեր շատ բառերի կերպարանքը: Դա կատարվել է ոչ միայն միջին հայերենի, այլև մեր բոլոր բարբառների հետ, որ տեղի է մինչև 12—13-րդ դարերը: Ա, ե, ո ձայնավորները և այ, սւ, իւ երկբարբառները 5-րդ դարում գեոևս շեշտի ազդեցությամբ չէին փոփոխվել, բայց դրանից հետո շեշտի ազդեցություներ տարածվեց նաև դրանց վրա:

Ա, ե, ո ձայնավորների փոփոխությունները մեր լեզվում հետևողական և օրինաչափական բնույթ չունեն. այդ փոփոխությունները մասնակի երևույթներ են, բայց դրանք չի կարելի չարձանագրել: Ամենից առաջ նշենք, որ մեր ազգային լեզվին անցած բառերի մեջ հիշյալ հնչյունների հնչյունափոխությունը՝ կապված շեշտի հետ՝ երկու բնույթ ունի. մի գեպըում հնչյունափոխվում են շեշտը կորցնելով, իսկ մի այլ գեպըում՝ շեշտից անմիջապես առաջ գտնվելով:

Դեռևս գրաբարում նկատվում է վերոհիշյալ հնչյունափոխական պրոցեսը. օրինակ՝ ապստամբ, ապստաբել անցյալում էլ լրիվ մոռացվել են և տեղի են տվել ապստամբ, ապսպբել ձևերին. արմատ բառից գրաբարում ունենք կազմված արմտիք, աստուած բառի սեռականն է աստուածոյ, ակնատ>ակնատ¹: Ա. Այտրնյանը իր հոշակավոր «Նախաշավիղում» գրում է, որ 5-րդ դարում մի շարք բարդ և ածանցավոր բառեր սղել են ա ձայնավորը մեր լեզվում ա-ի հաճախության հետևանքով. օրինակ՝ գանձառու, բանքեր, վաղհասու, պահկություն. ա-ն հնչյունափոխվել է նաև հոլովման հետևանքով. օրինակ՝ ակընջոք, գոքընչի²: Բեր-

¹ Հ. Աճ ա յ ա ն ը կարծում է թե ակնատ կազմված է ակն ձևից:

² Ա. Այ տ ը ն յ ա ն, Քննական քերականություն արդի հայերեն լեզվի (Նախաշավիղ), էջ 72—73:

ված օրինակների մեջ ա ձայնավորի սղումը միայն կարելի է շեշտի ազդեցությամբ բացատրել. եթե ա-ի շատության հետևանքով լիներ այդ բանը, ապա զորքնչի ձևի մեջ չպետք է տեղի ունենար երևույթը. քացի դրանից, հատկապես սղվում է շեշտից առաջ գտնվող ա-ն միայն, մի բան, որ ապացուցում է, թե շեշտից առաջ ընկած մեր ձայնավորները ուժեղ չափով թուլանում էին:

Ե ձայնավորի սղումը 5-րդ դարում նկատվում է միայն որոշակի դիրքում, այսինքն՝ դ, ռ բաղաձայններից առաջ մի շարք բառերի մեջ. օրինակ՝ քիթեղն-քիթղան, ասեղն-ասղան, մծեղն-մծղան, պեղն-պնղան, Բարսեղ-Բարսի, Կիւրեղ-Կիւրղի, ուղեղ-ուղղոյ, թիթեղն-թիթղան, ծիծեղն-ծիծղան, լիսեղն-լիսղան, սիսեղն-սիսղան. այս փոփոխությունները որքան էլ այլ կերպ բացատրվեն, այնուամենայնիվ փաստ է այդպիսի փոփոխությունը: Հնում գտնում ենք նաև ո-ի հնչյունափոխություն. օրինակ՝ ծոթոք > ծոթրիւն, ծոծորակ՝ ծոծրակ, որկորամոլ՝ որկրամոլ:

Այժմ տեսնենք, թե մեր լեզվում այդ հնչյունափոխված ձայնավորների ինչ օրինաչափություններ են հաստատուն մնացել, և դրանք ինչնով են բացատրվում:

Նախ ա ձայնավորի մասին:

22. Ա ՁԱՅՆԱՎՈՐԻ ՍՂՈՒՄԸ

Փրարարից մեր լեզվի մեջ մտել են երկու տիպի ածանցավոր բայեր՝ ա խոնարհման -անալ և ե խոնարհման-անել վերջավորվողներ: Անալ վերջավորվողները անցել են առանց հնչյունափոխության. օրինակ՝ քարանալ, զարգանալ, մեծանալ, գոհանալ, արժանանալ և այլն. իսկ ե խոնարհման-անել վերջավորվող բայերը մեր լեզվում մնացել են զրեթե ան ածանցի ա-ի սղումով. օրինակ՝ տես անել-տեսնել, գտանել-գտնել, մտանել-մտնել, ելանել-ելնել, իջանել-իջնել, անցանել-անցնել և այլն:

Բացառություն են կազմում՝ բեկ անել, կլ անել, տտնել, ուսուցանել, մեղանչել: Այս կարգին պատկանող մի շարք

բայեր կորցրել են ամբողջ ան ածանցը. օրինակ՝ անհիծանել-անհիծել, գեկուցանել-գեկուցել, երգիծանել-երգիծել, թքանել-թքել, լքանել-լքել, սպանանել-սպանել, օծանել-օծել, շքանել-շքել, մոծանել-մոծել, գարկանել-գարկել և այլն.

Ամենից առաջ խոսենք այն բայերի մասին, որոնք ամբողջութեամբ պահպանել են իւր ածանցը:

Բեկանել բայը մեր լեզվում գոյություն ունի բեկել ձևով, որ հիմնականում նշանակում է ճկտաբեկ. բայց մեր պետական կյանքի գոյութեան հետ պահանջ դրացվեց արտահայտել Кассировать բայի իմաստը և բեկանել բայը գրարարից վերցվեց նույնութեամբ ու գրվեց գործածութեան մեջ, միևնույն բայից առաջացավ երկու բայ՝ երկու տարբեր իմաստներով:

Կլանել բայը ժողովուրդը երկու ձևով է գործածել՝ կլել և կուլ տալ: Արարատյան խոսվածքներում՝ բաղադրյալ ձևն է ծանոթ, որ անցել է նաև գրական լեզվին, սակայն հետադաշում գրականութեան միջոցով նույնութեամբ վերցվել է նաև կլանել բայը: Բեկանել և կլանել բայերի մեջ ան ածանցը մեզ համար բացառել է արմատական նշանակություն. որովհետև գրանց անցյալ կատարյալը լինում է՝ բեկանցի, կլանցի և ոչ՝ բեկա, կլա, ինչպես որ պետք է սպասվեր: Համեմատիր գտնել-գտա, տեսնել-տեսա: Տանել բայը ամբողջական է մնացել, որովհետև արմատը ձայնավոր չունի, իսկ ա-ի անկման դեպքում բայը կթալքայվեր: Ուսուցանել և մեղանշել բայերը նույնպես ուշ շրջանի փոխառություններ են և վերցված են սովորեցնել և մեղք գործել բառերի համար իբրև հոմանիշներ՝ արտահայտչական նկատառումներով. մեկը որպես համանիշ սովորեցնել բայի, իսկ մյուսը՝ մեղք գործել, հանցանք գործել հարադրական արտահայտությունների: Իրանցից էլ ուսուցանել բայը անհաստատ է. ոմանք կատարյալը գրում են ուսուցանցի, ոմանք ուսուցեցի, ուսուցի, իսկ մեղանշել բայի ան ածանցը այլևս չի գիտակցվում:

Այն բայերը, որոնք ան ածանցը ամբողջովին գցել են

բուրբուլին նոր երևույթ չեն. գրարարի քերականությունները ան ածանցի անկում և խոնարհման բայերի մեջ ցույց են տալիս հին ժամանակներից. օրինակ՝ անիծեմ, անջատեմ, դիզեմ, գտեմ, ստեղծեմ, ներկեմ, ապրածեմ, սպանեմ և այլն¹, փոխանակ՝ անիծանեմ, անջատանեմ, դիզանեմ, գտանեմ, ստեղծանեմ, ներկանեմ, ապրածանեմ, սպանանեմ:

Վերոհիշյալ ան ածանցից բեռնաթափված բայերի մի մասը բանավոր խոսքի միջոցով մտել է մեր գրական լեզուն, իսկ մյուս մասը հնարավոր է, որ հետապալում է կազմված, այսինքն՝ ծին արմատից կազմվել է ծնել, սկիւ արմատից՝ սկսել, գէջ նախադրավոր արմատից՝ գիշել, Բայց թե նրն է փոփոխվել բնական հնչյունափոխական ճանապարհով, նրը նոր կազմություն է, դժվար է որոշել, քանի որ գրարարում ան ածանցով և առանց ածանցի և խոնարհման կրկնակ բայերի թիվը բավականաչափ շատ է: Այտնյալը իր վերևում հիշատակված «Նախաշավիղ»-ի 92 էջում ան ածանցի անկման ժամանակը յատանել (դարձել է յատել), ներկանել (ներկել), խփանել (խփել), տարածունել (տարածել) բայերի վերաբերյալ տառնում է 5-րդ դարը, իսկ ինչ վերաբերում է միայն ա-ի անկման, որ այս գեպքում մեզ ամենից շատ է հետաքրքրում, սկսվում է 12-րդ դարից: 12-րդ դարում մերկացուցանել, դարձուցանել, անցուցանել պատճառական ձևերը դառնում են մերկացնել, դարձնել, անցընել (այժմ անցկացնել): Չնայած այս ամենին՝ իրողությունն այն է, որ և խոնարհման ածանցավոր բայերը մեր լեզվում -ա-ն սղել են, իսկ ա խոնարհման այդ տիպի բայերը չեն սղել: Արդ՝ ինչո՞վ բացատրել այս երևույթը:

Եթե ա-ի անկումը և խոնարհման բայերի մեջ կապված է վերջավանկի շեշտի հետ (ա ածանցը միշտ ընկնում է անմիջապես շեշտից առաջ), ապա ինչո՞ւ այդ փոփոխությունը չենք նկատում և խոնարհման ածանցավոր բայե-

¹ Տես Ա. Բաղրատունի, «Հայերեն քերականութիւնի պետական գրադեղոց», Վենետիկ, 1852, էջ 152; Տես նաև Ա. Ա. Արբանյան, «Գրարարի ձևաբան», էջ 133:

րի մեջ: Այսինքն՝ ինչպե՞ս մեր լեզուն տեսնել բայը պահել է տեսնել ձեռով, իսկ մոռանալ բայը պահել է ամբողջությամբ: Մերայն բարբառները, որոնք շեշտում են բայերի նախադերձին վանկը, այնտեղ ա-ի հնչյունափոխություն գոյություն չունի. կամիայն բարբառային հատուկ հնչյունափոխություն. օրինակ՝ գառնել Ագուլիսի բարբառում դարձել է գիգանիլ, Գանձակում, Ղարաբաղում քթէնալ, Շամախի՝ քիթոճալ. տեսնել Հավարիկում՝ տխանել, տըսնել: Իսկ արարատյան խոսվածքներում այգպիսի բայերի շեշտը կամ առաջին վանկի վրա է կամ վերջին, որի պատճառով ածանցի ա-ն անշեշտ մնալով սղվել է: Ղարաբաղի, Ագուլիսի բարբառներում ևս, երբ շեշտը ա ածանցի վրա չէ, ա-ն դարձյալ սղվում է. օրինակ՝ Ղարաբաղում՝ տըխնալ, Ագուլիս՝ տխնալ:

Ինչպես հայտնի է, մեր լեզուն հիմնականում խաբքսկված է արարատյան բարբառի վրա, արարատյան բարբառի խոսվածքներից՝ Քանաքեռի, Երևանի, Աշտարակի, Օշականի, Փարպիի և Լոռու մի շարք խոսվածքների վրա. հիշատակված բոլոր խոսվածքներում անալ վերջավորվող բայերը ա ածանցը պահել են, այսինքն՝ գողանալ, մոռանալ, գարմանալ, քարանալ, իմանալ, մեծանալ, փնտանալ և այլն: Իսկ արարատյան մի շարք խոսվածքներում ա ձայնավորը հնչյունափոխվել է. օրինակ՝ գողնալ, քարընալ, հիմնալ (իմանալ), մեծընալ, փնարնալ և այլն:

Ուրեմն՝ կան որոշ խոսվածքներ, որոնք միայն սղել են անել վերջավորվող բայերի ածանցի ա ձայնավորը, իսկ կան խոսվածքներ, որոնք սղել են թե անել և թե անալ վերջավորվող բայերի ա ձայնավորը: Պետք է ենթադրել, որ այդ խոսվածքներից վերջիններում՝ Բայազետ, Ելզովան Ալափարս և այլն, ունեցել են կայուն շեշտ, իսկ մյուս խոսվածքներում, որոնք անալ վերջավորվող բայերի ա հնչյունը պահել են, այդ բայերի համար շեշտի այլ դրություն են ներկայացրել, իսկ անել վերջավորվող բայերի համար՝ մի այլ դրություն, այսինքն՝ առաջին դեպքում շեշտը եղել է

ա հնչյունն իրա, իսկ երկրորդ գեպում՝ տարբեր գիրքերում, բայց ոչ ածանցի լրա: Այլապես ինչպես բացատրել հնչյունական այդ տարբեր երևույթները: Բացի վերևում բերված փաստարկումից, այստեղ առաջ ենք բերում ևս երկու պատճառաբանություններ, որոնք կարող են գեր խազայած լինել հնչյունափոխական այդ երկու իրարից տարբեր, բայց և տարօրինակ երևույթների համար: Հիմնական փաստարկումը, որի վրա մենք հենվում ենք, այդ այն է, որ այն ածանցը ա խոնարհման բայերի մեջ լրակատար կերպով պահպանել է իր իմաստային նշանակությունը, այսինքն՝ այն այդտեղ նշանակում է «մի բան լինել, մի բան դառնալ», որ այսօր էլ թարմ ու կենդանի է մեր լեզվում. օրինակ՝ մեծանալ, մարդանալ, քարանալ, փայտանալ չեզոք բայեր են և նշանակում են «մեծ դառնալ, մարդ դառնալ, քար դառնալ, փայտ դառնալ» և այլն: Ան ածանցի իմաստային այս կենսունակությունը ոչ միայն պահել է այդ ածանցի անվթար գոյությունը, այլև հենց այդ կենսունակությունից շնորհիվ նրանով կազմվել են ուրիշ շատ բայեր, և այսօր էլ այդ ածանցը կենդանի է ու արդյունավետ: Իսկ այն ածանցը և խոնարհման բայերի մեջ վաղուց արդեն մեռած էր և այդ է պատճառը, որ հարգ դարից արդեն և խոնարհման բայերը միտում ունեին բեռնաթափվելու հիշյալ ածանցից, որովհետև գա ավելորդ բեռ էր:

Ան ածանց ա խոնարհման բայեր է կազմում գլխավորապես գոյականներից ու ածականներից և, ինչպես նշվեց, արտահայտում է դառնալու, լինելու դադարվարը. ա խոնարհման այն բայերը, որոնց մեջ ա ածանցական լինելու դադարվար չի արտահայտում, այսինքն՝ մեռած է, շատ քիչ են. այդ բայերի կազմությունն ժամանակ ածանցի իմաստը կենդանի է եղել. օրինակ՝ զոդանալ բայը սկզբնապես նշանակել է զոդ դառնալ, իսկ այժմ դրաբարում բայը այլևս այդ նշանակությունը չունի, ընդհանրապես՝ ներգործական բայ է: Մեր լեզվում ա խոնարհման շատ սակավ ածանցավոր բայեր կան, որոնց արմատները այլևս չեն գիտակցվում իբրև գոյական կամ

ածական. օրինակ՝ զլանամ, իմանամ, մութանամ, ուրանամ, ստանամ, զարմանամ, ընթանամ և մի քանի ուրիշները, բայց միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ դրանք իսկական բայ-աբմատներին չեն կազմված, բուն բայաբմատներին բայ-յերը հետագա համաբանության արդյունք են: Իսկական բայաբմատներին կազմված բայերը ան ածանցը չունեն և չեն նշանակում մի բան դառնալ, իսկ այնպիսիները, որոնց մեջ ան ածանցը կենսունակ չի եղել, այսինքն՝ բայը ներգործական է եղել, կամ ան ամբողջովին է ընկել և կամ միայն ա-ն է սղվել դեռևս 5-րդ դարից առաջ. այսպիսի բայեր են դառնամ<*դարձանամ, բանամ<*բացանամ, բա-նամ<*բացանամ, բառնամ<*բարձանամ: Ամբողջովին ան ածանցը գրած ենք համարում ամանամ, գիանամ, գիտանամ, մարթանամ, որ տվել են ամամ, գիանմ (գիտամ), մարթեմ (*մարթամ): Եվ արդարև այս պրոցեսը շարունակվում է նաև հետագայում, երբ ան ածանցը կորցնում է կենսունակու-թյունը, այսինքն՝ իմաստը մթնում է, ածանցավոր բայերը միտում են ազատվելու նրանից, որով ա խոնարհման բայ-երի մեջ նույնպես առաջանում են կրկնակիներ. օրինակ՝ ցանկանամ || ցանկամ, զղջանամ || զղջամ անձկանամ || անձ-կամ, փութանամ || փութամ, նույնիսկ լուանամ ներգործա-կան բայը. որ գրաբարում լուալ ձևով չենք գտնում, ունի լուալի ապառնի դերբայը, փոխանակ՝ լուանալի, որ նշան է, թե հիշյալ ածանցի իմաստի խամբելու հետ՝ սկսվում է նաև նրա ձևական կերպարանափոխությունը:

Ուրեմն՝ անալ վերջավորվող ներգործական բայերի և չեղածներից այնպիսիների մեջ որտեղ մթնել է մի բան դառնալու գաղափարը, սկսվել է ան ածանցի քայքայու-մը գեռևս 5-րդ դարից առաջ, սակայն այս պրոցեսը կիսատ է մնացել շնորհիվ մեր լեզվի յուրահատուկ պատմական վի-ճակի. իսկ այն բայերի մեջ, որտեղ ածանցի իմաստը կեն-դանի է, ածանցն էլ մնացել է անվթար և նույնությամբ էլ մեզ է հասել: Իսկ անեմ վերջավորվող բայերի ան ածանցը վաղուց կորցրել էր իր կերպավորող նշանակութունը, բայց

գրաբարում դեռևս ամբողջական էր պահպանվում զուս-
ձևաբանական նկատառումներով: Բայերի տարբեր հիմքերի
ու գրանցից կազմված ժամանակների հակադրությունը
որոշ չափով անխախտ էր պահում ածանցի գոյությունը,
իսկ գրաբարի խոնարհման համար բայահիմքերի տարբե-
րությունը էական նշանակություն ունի: Մի օրինակ ունենք
գրաբարում, որտեղ բայահիմքերի տարբերությունը հիմ-
նոված է ձևաբանական այլ միջոցների վրա, և ահա ան
ածանցի քայքայումը սկսվել է 5-րդ դարից էլ առաջ. առ-
նեմ <*արաճեմ, անցյալ կատարյալը արարի. բայահիմ-
քերի տարբերակումը հիմնված է կրկնության վրա և ահա
~ան>ն:

Ուրեմն ան ածանցը և խոնարհման բայերի մեջ մնաց
միայն ձևաբանական տարբերակողի արժեքով: Նույն վիճա-
կումն էր գտնվում և անչ ածանցը, որ ամբողջական է մնացել
մեղանչեմ բայի մեջ. սրան հավասարազոր են եղել կորնչիմ
(*կորիւնչիմ), երկնչիմ (*երկիւնչիմ) և այն մյուս բայերը,
որոնք ան լրիվ գցել են. օրինակ՝ թաքչիմ || թաքնում, փախ-
չիմ || փախնում, հարթչիմ || հարթնում և այլն: Իսկ սրան
հակառակ, երբ իմաստը պահանջում է, բայերի մեջ նոր
ածանցներ են առաջանում:

11-րդ դարում ունել, կարել, մօաել, կալ, վախել և այլ
բայերից կազմվում են ունենալ, կարենալ, մօտենալ, կենալ,
վախենալ և այլն:

Ուրեմն՝ այսպես կոչված հնչյունափոխության չենթարկ-
վող ձայնավորները նույնպես գերծ չեն մնացել հնչյունա-
փոխական պրոցեսներից. մյուս ձայնավորների նկատմամբ
այդ պրոցեսը իր բարձրակետին հասավ շատ ավելի վաղ,
քան այս վերջինների նկատմամբ: Հնչյունափոխական պրո-
ցեսները ուժեղ գործեցին այն ժամանակ, երբ իրենց յու-
րահատուկ օրինաչափություններով ձևավորվում էին մեր
բազմաթիվ բարբառները, միջին հայերենը, իսկ գրաբար
լեզուն արհեստական կերպով պահպանում էր 5-րդ դարի
օրենքները: Մեր ազգային լեզուն կազմավորվեց՝ օգտվելով

Թե հին գրական լեզվի, թե միջին հայերենի և թե որոշ բարբառների ու համաժողովրդական հայերենի բառերի տարրեր հնչյունափոխական օրենքների ենթարկված ձևերից. սրանց մեջ անշուշտ հիմնական կորիզը հին հայերենի բառաձևերն էին կազմում: Այս առանձին ազդյուններից եկած բառաձևերի մեջ կան այնպիսի բառեր, որոնք ենթարկվել են զրաբարից տարրեր հնչյունական օրենքների. այսինքն՝ փոփոխության են ենթարկվել բարբառներում, միջին հայերենում, արևմտահայ գրական լեզվում, մեր ազգային լեզվում և հենց այդ պատճառով գրաբարում չհնչյունափոխված որոշ հնչյուններ որոշ դեպքերում ժամանակակից լեզվում հանդես են գալիս այլ վիճակներում, բայց սխտեմատիկ բնույթ չեն կրում, այլ ներկայացնում են մասնակի երևույթներ՝ որպես տարրեր օրինաչափությունների ենթարկված և տարրեր ազդյուններից եկած ձևեր: Անհրաժեշտ է նաև նշել, որ այդ փոփոխված ձևերից շատերը ընդհանուր օրինականություն չեն ենթարկվել, այլ գործ են ածվում տարրեր արտահայտչական, իմաստային և երբեմն էլ որպես բարբառային առանձին ձևեր: Իսկ մի մասն էլ, ինտրիկե, օրինականացված է արդեն:

Ա ձայնավորի անկում նկատում ենք բառավերջում մի շարք բառերի մեջ հսկուման ժամանակ. օրինակ՝ Գամփա-Գամփի (Իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնած. Տերյան, 1-ին, 19), Երեխ ա-Երեխի (Երեխի նման մտա ես աշխարհ. Թում., 1-ին, 528), Վրա-Վրի (Հեռու ու մոտ սարի վրի եզրայրներիս ձեն տվի. Թում., 1-ին, 545), աղ.ա-աղի. Նույնիսկ կա Մարիա Մարկովնի (Թում., 5-րդ, 305): Առհասարակ բառավերջի ա-ն արարատյան խոսվածքներում ընկնում է. մի շարք բառեր իրենց այդ ձևերով անցել են գրական լեզուն, բայց գործածվում են միայն իբրև արտահայտչական փոփոխականեր: Օրինականացված է միայն Գամփի ձևը: Գրական լեզվի բառերը այդպիսի սղումներ չեն ձանաչում, եթե նույնիսկ պատահի որևէ բառի մեջ, պետք է համարել սխալ համարանություն արդյունք. օրինակ՝ չի

կտրելի բնծա հոլովել բնծի, մինչդեռ բարբառներում նորբն-
ծա բառը հոլովվում է նորբնծի և ոչ՝ նորբնծայի: Մեր գրա-
կան լեզվի մեջ բարբառների ազդեցությամբ մտել են քա-
հանի, սառանի (Սատանի նման նա էլ էս գիշեր գնացել է
տուն. Թում., 2-րդ, 12) և սրանց նման այլ բառաձևեր,
սակայն դրանք մնացել են իբրև բարբառային արտահայ-
տություններ: Հնից է գալիս և օրինականացված է արքա-
արքեներ:

Առվ վերջացող անունները իկ նվազականով ածանց-
վելիս ա-ն կորցնում են. օրինակ՝ Սեդա-Սեդիկ, Լիդա-Լիդիկ,
Աննա-Անիկ և այլն:

Մի շարք բառերի մեջ ա-ն սղվում է վերջին փակ վան-
կում՝ հոլովման ու բառակազմության դեպքում. օրինակ՝
բերան-բերնի, շիտակ-շիակել (շտկել), կոնակ-կոնկել, մատաղ-
մատաղաշ, շինած-շինծու, ծիծաղ-ծիծղուն, ցամաք-ցամքած, պա-
ռավ-պառվի, արձակ-արձկել, ճակատ-ճակտի, քաղաք-քաղքի,
անդադար-անդադրում, ամառ-ամռան, սատակ-սատկել և այլն:
Ահա սրանց համար մի քանի գրական օրինակներ: Եզներն
արձկիր տուն արի, ձակտիս կնճիռները. փշե պսակը ճակ-
տիս կշնեմ. Սև մութ ամպեր ճակտիս դիզվան. Եվ խոժոռ
ճակտիս պսակ տատասկյա (Իս. 1-ին, 36, 41, 43, 68, 131): Քո
ճակտին դրոշմած է անմահության կնիքը (Շիրվ., 4-րդ, 502):
Ավեր օշխիս սև հարկի տակ (Գ. Բ., 22): Երկաթի մի կուռ
շալակին գրած ու արավ Սասմա քաղքի գառնարած (Թում.,
2-րդ, 108): Բաժնեցի մարդկանց անսեր, անտարբեր (Թում.,
1-ին, 528):

Վերևում բերված հնչյունափոխված բառերի ցանկից
մի քանի բառեր արդեն օրինականացված են և մենք դրանք
այլ կերպ չենք էլ գործածում. օրինակ՝ կոնկել, շինծու,
ծիծղուն, անդադրում, սատկել, ամռան (ամառվա ձևի
մեջ չի սղվում). ամռան ձևի ա-ի սղումը հին է և ունի
ձևաբանական նշանակություն). իսկ մյուսները, հատ-
կապես հոլովման հետևանքով սղվածները մերժելի են, իբրև
բարբառային երևույթներ:

Ա-ի սղում նկատվում է նաև մի քանի բառերի վերջ-
քնթեր վանկում, վերջավանկի ուժեղ շեշտի հետևանքով.
օրինակ՝ կատաղի-կատղել, առաջև-առջև, քեզանից-քեզնից,
երկուշաբաթի-երկուշաբթի, երեքշաբաթի-երեքշաբթի, չորեք-
շաբաթի-չորեքաբթի, հավանոց-հավնոց, ցավ սցել-ցավցել, չո-
րացել-չորցել, չորանալ-չորնալ, հավասար-հավասար, բաղանիք-
բաղնիք և այլն: Ահա մի քանի օրինակներ. Ճիչ ու աղա-
ղակ հավնոցի դռան (Իս., 3-րդ, 184): Ծածուկ ծովն է պարս-
կում (Կուրդ. Բանաստ., 11): Վրան նայելիս վիշտդ կմոռ-
նաս (Նույն տեղում, 15): Չարքաշ կնկաս կուրծքն է ցավ-
ցել: Մեր կերակուր պաղ ջուր, չորցած գարի հաց (Ն. տ., 22):

Մի քանի հնչյունափոխված ձևեր իմաստային տարբե-
րակումներ են ստացել անվթար ձևերի համեմատությամբ,
օրինակ՝ վարդապետ-վարպետ, հրամայել-հրամմել, համարել-
համրել,¹ պատճառել-պատռել, բանավոր-բանվոր, աշակերտ-
աշկերտ, համարիչ-համրիչ, դադարած-դադրած, թոթավել-
թոթվել:

Մեր կարծիքով սրանք են շեշտի հետ կապված ա ձայ-
նավորի հնչյունափոխական երևույթները, որոնք, ինչպես
նշվեց, մասնակի արտահայտություններ են մեր ազգային
լեզվի մեջ և այլևս կենդանի ու գործող օրինաչափու-
թյուններ չեն այժմ:

22. Ե ԵՎ Ո (Օ) ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՍՂՈՒՄԸ

ՇԵՇՏԻՑ ԱՌԱՋ

Ինչ որ ասացինք ա ձայնավորի մասին, նույնը վերա-
բերում է նաև Ե, ո (օ) ձայնավորներին. սրանք էլ սղվում
են վերջին և նախավերջին վանկերում դարձյալ իբրև մաս-
նակի և քարացած երևույթներ. օրինակ՝ թոռոմել-թոռմել
(միթե պիտի թոռմին թոռնիմ, Իս., 1-ին, 16): Խեղճ-խղճալ,
ավել-ավլել, սովորել-սովրել, որկոր-որկրամոլ, մծեղ-մծղուկ.

¹ Համարել-համրել СЧИТАТЬ, նշանակությամբ այժմ քիչ է գոր-
ծածական. համեմատիք. Եվ անցքերը պատմում է նա: Համարում է
նա ու թիվ չկա (Թում., 1-ին, 590):

ձմեռ-ձմռան, վերա-վրա, ցեխ-ցխել (եղել է նաև ցիխ ձևը), բոլոր-բոլրել, խոլոր-խոլրել և այլն, որոնցից մի մասը օրինականացել է. ինչպես՝ որկրամուլ, մծղուկ, ձմռան (հին հոլոված), վրա, ցխել, խղեալ, ավել և այլն: Նկատվում է նաև նոր երևույթ՝ եա>ե, իսկ ե-ն սղվում է. օրինակ՝ կորեակ-կորեկ-կորկի (հոգին գառել է կորկի հատ. Հնարի էջեր, 254).

23. Ա ՀՈԴԱԿԱՊԻ ՍՂՈՒՄԸ

Մեր ազգային լեզվում բարդ բառերի երկու հիմնական տեսակները՝ հոգակապով և անհոգակապ բարդությունները, այնպես են խառնվել, որ դժվար է ասել անհոգակապ բարդությունները կազմված են իբրև այդպիսին, թե դրանք հոգակապով բարդություններ են, իսկ հետագայում հոգակապը սղված է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կցական համարված բարդ բառերի մեծ մասը ծագում են հոգակապով, կամ սլրոֆ. Մ. Արեղյանի տերմինով ասած իսկական բարդությունից, որոնց շատերի ա հոգակապը ժամանակին սղվել է: Հոգակապով են կապվել ոչ միայն երկրորդ եղբու բաղաձայնով սկսվող բառերը, այլև ձայնափոքով սկսվողները, որտեղից էլ սկսվել է հոգակապի անկումը՝ հորանջը ծածկելու համար. ձայնավորից առաջ ա-ն ընկել է, որի համաբանությունը կազմվել են սկզբնական անհոգակապ բարդությունները: Այս առթիվ պրոֆ. Մ. Արեղյանը գրում է. «Թե հին և թե նոր լեզվի մեջ կան բաղմաթիվ բառեր, որոնք կազմված են բաղաձայնից առաջ առանց հոգակապի: Այդ բառերի մի մասն ունեն նաև հոգակապով ձևեր, և հաճախ դժվար է որոշել, թե այդպիսի բառեր սկզբնապես առանց հոգակապի են կազմված եղել և հետագայում երկրորդաբար հոգակապով ձևեր են առաջ եկել, թե ընհակառակն, առանց հոգակապի ձևերը հոգակապով ձևերի սղումն են»¹:

Սրանից անմիջապես վերև նույն ուսումնասիրողը գրու-

¹ Պրոֆ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 196:

նում է, որ հին լեզվի հոգակապով ձևերը սղում են հոգակապը, երբ բառը մեծանում է. օրինակ՝ արծաթասեր-արծաթսիրություն, ընկերասեր-ընկերսիրություն, երկայնամիտ-երկայնատություն, արյունահեղ-արյունհեղություն, սակավա-ծամանակ- սակավծամանակյա, եղբայր սեր- եղբայրսիրություն, ողջամիտ-ողջատություն, լրջամիտ-լրջատություն, պահապան-պահպանություն և այլն: Հոգակապի սղումը, ինչպես տեսնում ենք, մեր լեզվի մեջ հին երևույթ է և հատուկ է թե՛ գրաբարին, թե՛ բարբառներին և թե՛ միջին հայերենին: Պետք է կարծել, որ հացթուխ, ջրկիր, ջրհեղեղ, ջրվեժ, ջրկոտեմ, ջրհան, ջրհոր, ջրմուղ, բանբեր, հրձիգ, քարտաշ, քարկոփ, ամառես, ամպան և բոլոր նման բառերը առաջացել են հոգակապով ձևերից, որոնք միակ իշխող ձևերն են եղել մեր բառակազմության մեջ և մինչև այժմ էլ իշխում են: Հոգակապի անկման հետևանքով անհոգակապ ձևերն այնքան շատացան, որ սկսվեց դրանց համաբանությամբ անհոգակապ բառերի կազմությունը իբրև բառակազմության նոր սխառմ:

Մեր լեզուն (ա)վոր վերջածանցով ունի բազմաթիվ բառեր. օրինակ՝ բանսվոր, գրավոր, թագավոր, նենգավոր, գոգավոր, առդանգավոր, խորհրդավոր, ձիավոր, միավոր, երաշխավոր, հուշակավոր, հասակավոր, հարկավոր, մեղավոր և այլն: Սրանց օրինակով մենք այժմ կազմում ենք նորանոր բառեր, ինչպես՝ հրետանավոր, թրթուրավոր, տեսակավոր, դաճուկավոր, չմուշկավոր և այլն. բայց հենց այս կազմությամբ մեր ազգային լեզուն ունի մի շարք բառեր, որտեղ ա-ն սղված է. օրինակ՝ սարվոր, կենվոր, հնձվոր, ջրվոր, ամոթվոր (Մնացի ամոթվոր, (Անթ., 220), աստվոր (մի հավ թըռավ են ձորից, խաբար տըվավ աստվորից. Թում., 1-ին, 578), լողվոր, կթվոր, գինվոր, բանվոր, անցվոր, շատվոր, դարձվոր, քաղվոր, քոչվոր, երկվոր(յակ), անվոր, եկվոր (նաև եկավոր, բայց հնացած է. Եկան երկու եկավոր. Թումանյան), վարձվոր, լողվոր, գուցե ուրիշ բառեր ևս:

Թվարկված բառերից զինվոր, վարձվոր, ջրվոր հին են. շատ հնարավոր է, որ մի քանիսը սրանց համարանությամբ կազմված լինեն. օրինակ՝ բանվոր կազմված կամ առաջացած է ի հակադրություն բանավոր բառի. իսկ անցվորը՝ անցավորի. անցվոր ժողովրդի մոտ նշանակում է «անցորդ» (Շնորհակալ եմ, անցվոր ախպեր. Թումանյան), իսկ՝ անցավոր նշանակում է «մեռած, անցնող» (էյ անցավոր ցավի աշխարհ. Իս., 1-ին, 105): Դարձվոր նշանակում է «աղեղ, ալյանդակ, այն աշխարհից վերադարձած» և կազմված է խոսվածքներում (Հագցնում է իր սե, դարձվոր աղջկան. Թում., 1-ին, 305): Կան այս կարգի այլ սղումներ, բայց չեն օրինականալիս. օրինակ՝ սզվոր, բայց գրականն է սզավոր:

Ա ձայնավորի սղում նկատում ենք նաև մյուս ածանցավոր կազմությունների մեջ: Հայանի է, որ ածանցները գերադանցապես առաջանում են արմատական բառերից, որոնք հրքեմն իրենց առաջացրած ածանցներին զուգահեռ գործածվում են նաև իբրև անկախ բառեր: Ինչպես որ անկախ բառերը բարդության մեջ մտնում են հոդակապի միջնորդությամբ, այնպես էլ ածանցները: Անհոդակապ են միանում ձայնավորով սկսվող վերջածանցները, իսկ մյուս ածանցները, եթե հոդակապ չունեն, նշանակում է ժամանակի ընթացքում սղվել է այն: Մ. Աբեղյանը նշում է, որ կալ, կեկ, կիկ, կուկ ածանցները միանում են առանց հոդակապի. օրինակ՝ աղեկիկ, աղեկուկ, կարմրիկուկ, կարմրիկե, մանրիկակ, մեծիկակ և այլն: Բերված բառերի մեջ հիշյալ ածանցները կազմված են ալ, եալ. իկ վերջածանցներից և, ինչպես նկատվում է, կազմությունների մեջ ձայնավորները սղված են: Կարմրիկե բառը կազմված է կարմիր + իկ + եալ ածանցներից, և բնական է, դրանք հոդակապ չէին ընդունի, որովհետև երկուսն էլ սկսվում են ձայնավորով: Երբ արդեն կա մանր + իկ + ալ > մանրիակ, ապա -կալ ըմբռնվում է որպես նոր ածանց՝ իբրև թե անհոդակապ միացած մանր բառին. հետագայում այդ անհոդակապ ձևի համարանությամբ կազմվում են այլևայլ բառեր:

Առ վերջածանցով ունենք կազմված փսյաւատ, հեղեղատ, կոնատ, կրմատ (արմատական ձայնավորը հին որդման արգղունք է. պետք է լինել՝ կարմատ), արմատ, ակմատ, փշատ, ունշատ, կիսատ, ծոռատ, հեքատ, բացատ, կտավատ և այլն: Հայտնի է, որ այս անանցն առաջացել է հատաւենէ բայի հետ արմատից, և հենց այս արմատով՝ գուգահեռ վերը բերված բառերին, ունենք՝ քաքահատ, երկաթահատ, անկամահատել, հուսահատ, փայտահատ, վիրահատել և այլն: Հենց որ հ հնչյունը ձայնավորների մեջ այլևս չի հնչվում, ձայնավորներից մեկը մեր լեզվի հնչման օրենքով սղվում է և ստացվում են վերեի անհոգակապ ձեւերը: Զի բացառված նաև, որ հետագայում հիշյալ անհոգակապ բառերի համաբանությամբ կազմված լինեն հաւ արմատով անհոգակապ ձեւեր. օրինակ՝ քարհատ, կանեփհատ, քրհհատ (Հուսինն ինչպես քրհհատ կարապ, ծով երկնքում կը լողա. Իս., 1-ին, 97): Այդպես էլ հ-ով սկսվող մյուս բառերը կարող են այդ օրենքին ենթարկված լինել. օրինակ՝ հարկանել բայից կազմված է սպասանարկել (վերադառնում էր հայրենի տնակը՝ տեղական եկեղեցում սպասանարկելու, Պ. Պետրյան, 2-րդ, 355), որ հետագայում հ-ի անկումով դարձել է սպասարկել:

Նույն ձևով աստիճանաբար ընկնում են -եցի, -ացի անանցների ձայնավորները. օրինակ՝ երևանցի, լեւինգրազցի, աշաարակցի (իսկ փարպեցի կազմված է փարպի + ացի > փարպեցի), օշականցի, իսկ հարաշեշտի տակ՝ ուշակնեցի (բարբառային):

Ական անանցի առաջին ա-ն սղված է վարձկան, լծկան, բարձկան, որսկան, լսցկան, մուրացկան, չալկան, մրոկան, խոովկան, ծննդկան, չխոսկան, թխսկան, վազկան, հատկան, մնացկան և մի քանի այլ բառերի մեջ:

Անակ անանցի առաջին ա-ն սղված է խոտորնակ, վրացնակ, պահնակ, սողնակ, կոչնակ, խոսնակ և մի քանի այլ բառերի մեջ:

Անոց անանցի ա-ն սղված է հետեյալ մի քանի բա-

ռեբի մեջ. գոգնոց, ուսնոց, վզնոց, քիկնոց (<քիկանոց<քիկ-
նանոց), եզնոց <եզնանոց¹ և այլն:

Պան ածանցով կազմված բառերի շարքում ա հոգակա-
պից բեռնաթափված ձևեր են՝ խանութպան, պարտիզպան,
ջրաղացպան, թաթպան, բազպան (<բազուկապան), կուտ-
պան (<կուշտապան՝ ձիապան), բունպան (նույն իմաստով):
Սրանց օրինակով կազմվել են փոխառյալ պահապան, բայց
պահպանել-պահպանություն, գրպան<գրապան, գուցե նաև
մարզպան (<մարզապան) բառերը:

Վերևում բերված օրինակները ցույց են տալիս, որ
բառակազմության և ածանցման մեջ ա հոգակապը կապա-
կցման հիմնական միջոցն է եղել, իսկ հոգակապը կորցրած
ձևերը ուշ ժամանակի երևույթներ են: Ա հոգակապով չեն
կապվում այնպիսի ածանցները, որոնք մի ժամանակ թեք-
ման ձևեր են եղել և կամ սկսվել են որևէ ձայնավորով
կամ երկբարբառով, իսկ ձայնավորը հնչյունափոխվել է, երկ-
բարբառը վերածվել է բաղաձայնի. օրինակ՝ պատառ արմա-
տից ունենք պատռվածք բառը, որ զբարբառում հնչվում էր
պատռռածք. այսինքն՝ ածանցը սկսվում է ուս ահնչյու-
նակապակցությամբ. աւետիշ-աւետիշեայ-աւետիշեք, ապա
ի-ի անկումով աւետշեք և հետո համարանությամբ՝ առ-
հաւատշյա, հաւատշեք, կարողչեք և այլն:

Մի քանի ածանցներ երկու, երեք թվականների հետ
կապվում են առանց հոգակապի. օրինակ՝ երկպատիկ, երեք-
պատիկ, բայց եռապատիկ, քառապատիկ, կրկնապատիկ,
տասնապատիկ և այլն: Երկու բառով ունենք բաժականա-
շափ անհոգակապ կազմություններ. օրինակ՝ երկդիմի, երկ-
դասյան, երկառդ, երկլեզվյան, երկնատոր, երկբարբառ

¹ Մեր կարծիքով ոց և նոց ածանցները միևնույն անոց ձևից են
առաջացել ա-ի սղումով և եզն, քիկն, մասն բառերի մոտ նաև ն-ի
անկումով ստացվում են մասնոց, եզնոց, քիկնոց և այլն, որտեղ ոց
կարող է առանձնանալ մասն, քիկն, եզն ձևերից որպես դիտակցելի
ածանց: Իսկ նոց առանձին է բմբունվում՝ ա-ի սղումով:

և այլն: Առհասարակ մեր բարդ թվականները առանց հոդակապի են:

Բար ածանցով կազմված բառերի մեջ հին հնչյունափոխված ձև է իրր<իւնչաբար: Նախածանցներով կազմությունները նույնպես ունեն հոդակապը կորցրած ձևեր կամ ուղղակի կազմված են առանց հոդակապի. օրինակ՝ անգրավարաիք, բայց Անգրկովկաս, անգրկասպյան, անգրչրինեղեղյան, անգրշիրիմյան և այլն: Բազ մասնիկով ունենք բաղադրել, բայց բաղդատել, բաղմյուսանալ. կամ գերմարդ, գերբնական, բայց գերագույն, գերագանց, գերակշիռ և այլն, ապա մակագրել, բայց՝ մակբայ, մակդիր: Անհոդակապ են ներ մասնիկով բարդությունները. օրինակ՝ ներշնչել, ներդաշնակ, ներմուծել, ներգրավել և այլն: Ժխտական ածանցները, բացի ապ մասնիկից, միանում են առանց հոդակապի:

ՀԱՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՇԵՇՏԻՑ ԱՆԿԱՆ

25. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՄ ՊԱՏՄԱԿԱՆ
ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑԱԿԱՆ ՀԱՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Լեզուներում մի շարք հնչյուններ անկախ որևէ հանգամանքից սկսում են որոշ ուղղությամբ փոփոխվել: Երբեմն այդ փոփոխությունը միևնույն պայմաններում տարածվում է փոփոխվող հնչյունների բոլոր դիրքերի վրա և հասնում է իր լիակատար ավարտին, եթե փոփոխման ճանապարհին այլևայլ պարագաներում չկան հնչյունափոխական վերոհիշյալին հակադիր կամ խանգարող օրինաչափություններ: Սակայն անկախ այդ խանգարող հանգամանքներից՝ գալիս է մի ժամանակ, որ հնչյունափոխական այդ օրենքը բոլորովին կանգ է առնում, և երբեմն էլ դրան հակառակ պրոցես է սկսվում: Հիշյալ հնչյունափոխությունները կատարվում են դանդաղ, աննկատելի, աստիճանաբար և որոշ տեական ժամանակի ընթացքում կարող են փոխել լեզվի հնչյունական կերպարանքը: Մինչև այժմ պարզված չէ, թե այդ փոփոխությունների հիմքում ինչ պատճառներ ու հանգամանքներ են ընկած և վերջապես ինչու տվյալ պատճառներն ու հանգամանքները լեզվի պատմական մի շրջանում գործում են, իսկ մի այլ շրջանում ոչ միայն վերանում են, այլև հայտնվում են նոր պատճառներ ու հանգամանքներ, որոնք լիակատար կերպով բացառում են նախորդները և վերացնում նրանց առաջ բերած հնչյունափոխական օրինաչափությունները:

Ահա այս կարգի հնչյունափոխությունները կոչվում են ընդհանուր կամ պատմական: Իսկ փոխադրեցական է

կոչվում այնպիսի հնչյունափոխությունը, որը կատարվում է մեկ այլ հնչյունի ազդեցությամբ:

Ընդհանուր կամ պատմական հնչյունափոխությունը հայերենում շատ խոշոր դեր է կատարել լեզվի հնչյունական երևույթների կերպարանափոխության մեջ: Մեր հին գրական լեզվի մեջ պատմական շրջանում առաջացած ընդհանուր հնչյունափոխական որոշ օրինաչափություններ չհասան իրենց ավարտին և այդպես կիսաճանապարհին մնացին, իսկ որոշ հնչյունափոխություններ այնքան կատարյալ եղան, որ բացառությունները մի կամ երկու բառ են ներկայացնում: Գրաբարում սկսված և վերջացած օրինաչափությունները մեր գրական լեզուն ամբողջովին յուրացրեց, իսկ այն օրինաչափությունները, որոնք գրաբարում կիսատ մնացին, այդպես էլ անցան մեր ազգային լեզվին, որոնցից մի մասը դեռևս նույնությամբ շարունակվում է, իսկ մյուս մասի մեջ հնչյունափոխական նոր պրոցեսներ են նկատվում:

Բարբառներում ոչ միայն գործեցին և իրենց ավարտին հասան գրաբարում սկսված, բայց անավարտ մնացած հնչյունափոխությունները, այլև բարբառներում առաջացան նոր օրինաչափություններ, որոնք փոխեցին մեր բաներից շատերի հնչյունական կերպարանքը՝ լեզվի ձևական պատկերը:

Մեր ազգային լեզուն օգտվելով գրաբարից, բարբառներից, միջին հայերենից՝ երբեմն հիշյալ աղբյուրներից վերցրել է միևնույն բառը, բայց տարբեր հնչյունական կերպարանքով: Օրինակ՝ այլ լատր ունենք նաև էլ ձևով ու տարբեր իմաստներով: Այսպես են արծաթյա-արծաթե, երկաթյա-երկաթե, ժայռ-ժեռ, քայլ-քելք և այլն: Բայց քանի որ այս տարբեր ձևերն առաջացնող հնչյունափոխական օրենքները այլևս մեր գրական լեզվում կենդանի չեն, ապա նման խառը ձևերը մնում են որպես նրա ձևավորման ու զարգացման յուրահատուկ արգասիք և պահանջում են հատուկ ուսումնասիրություններ:

Հնդհանուր կամ պատմական հնչյունափոխությունը տարածվում է և՛ ձայնավորների, և՛ բաղաձայնների, և՛ երկրարժանների վրա: Այժմ տեսնենք պատմական ինչ հնչյունափոխություններ են առաջացել մեր լեզվի մեջ, դրանք մեր գրական լեզուն ինչպես է յուրացրել և ինչ նոր երևույթներ են ուղեկցում այդ փոփոխություններին:

26. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՅՑՈՒՆՍՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ե ձայնավորը բառասկզբում աստիճանաբար հնչյունափոխվում է և դառնում յե: Արարատյան շատ խոսվածքներում այս նույն երևույթը արտահայտվում է նաև բառամիջում. օրինակ՝ որոշակիորեն տարբեր են արտահայտվում սէր-սեր, մէր-մեր, բէր (ոչխարներին կիթ բերելը)-բեր: Գրությամբ տարբեր այս տեսակի բառերը արտաբերությունում դրարարում էլ տարբերվել են, բայց մեր գրական լեզվում արտաբերական այդ տարբերությունը այլևս չի զգացվում:

Այս էլ ասենք, որ ե-ն արարաայան շատ խոսվածքներում բառասկզբում տարբեր փոփոխություններ է կրել: Միևնույն ե-ն բառասկզբում տալիս է յե, է, հէ, ա (վերջինը հին է), ի, հի, հօ. օրինակ՝ երբ-յեփ, երկու-էրկու, երազ-էրազ, երեմունք-էրեմունք, երզում-հօրթում, եղայր-ախպէր, եղինջ-աղինջ, երեք-իրեք, ել-հելի, երեկո-հիրիզուն և այլն: Մեր գրական լեզուն այս բոլոր փոփոխությունները մերժել է (բացառությամբ մասնակիորեն արտահայտական արժեք ունեցող քարացած ձևերի՝ իրիկուն), միայն ընդունել է բառասկզբի ե>յե հնչյունափոխությունը:

Ա հնչյունը հայերենում այժմ երկու տեսակ է հնչվում՝ Վո և օ: Վո հնչվում է բառասկզբում, իսկ օ՝ մյուս դիրքերում. օրինակ՝ ոսկի, գործ, հաճո: Վո դառնալու պրոցեսը մեր լեզվում սկսվել է վաղուց: Նույնիսկ Ծ-ը դարձավ բառասկզբի ո-ն տարբեր է հնչվել. այդ ապացուցվում է նրանով, որ հունարենի εο, ου, ο, υ, հնչյուններն ու հնչյուն-

նախապահեցուիցունները 5-րդ դարում տառադարձվել են ուով. օրինակ՝ Ὀλυμπιάς բառը տառադարձել ենք Ողիմպիադ, Ἀσσυρίος ասորի, Βοιωτός բորալոն, Σεογμα գոմ և այլն: Հետագայում շնորհիվ պատմական հնչյունափոխութեան՝ բառակերպի այդ տարբերակները վերածվեցին վո-ի. այս համատարած օրենքից դուրս մնացին ով, ովկիանոս՝ ովազիս, ովաւննա, որոնց մեջ ու-ից հետո եկող վ հնչյունը տարնմանութեան օրենքով նախորդ վ-ի առաջացումը կանխում է:

Հայերենում բառասկզբի ուն վ-ի որոշ երանգ է ունեցել, դա ապացուցվում է նրանով, որ վո կապահեցութեամբ սկսվող ոչ մի բառ չունենք, ինչպես որ ունենք վեց, վուշ, վեմ, վարդ, վիթ: Վո-ով ունենք վոմմակ, որ գրվում է նաև ոմմակ, յոմմակ. վոռէ, որ գրված է նաև վառռէաւ, վոռէ, վառռաւ և այլն, որոնք ուշ շրջանի ձեւեր են և սխալ գրութեան արդյունք:

Ու ձայնավորը մի այլ ձայնավորից առաջ դարձել է վ. օրինակ՝ պատուէր-պատվեր, նուագ-նվագ, կոուել-կովել, հարուած-հարված և այլն:

Նուշնիսկ օտար բառերի մեջ ձայնավորից առաջ ուն, որ երկբարբառի բաղադրիչ է բարբառներում, հնչում են վ. օրինակ՝ բուրժուա-բուրժուա:

Աւ երկբարբառը բաղաձայնից առաջ ամենուրեք դարձել է օ. օրինակ՝ աւծ-օծ, արաւտ-արօտ, կարաւտ-կարօտ: Այժմ այդ օ-ն մենք մեծ մասամբ տառադարձում ենք ուով: Աւ-ը բաղաձայնից առաջ մնացել է երկու բառի մեջ աղաւնի և նաւթ: Հյուրշմանը այս երեւութը բացատրում է նրանով, որ աւ-ից հետո հնչվել է մի ք, այսինքն՝ մի ձայնավոր, իսկ քանի որ ձայնավորից առաջ աւ մնում է նուշնութեամբ, ուստի այդ բառերի մեջ փոփոխություն տեղի չի ունեցել: Սակայն իրողությունն այն է, որ աղաւնի բառը մեր կենդանի խոսվածքներում բոլորովին տարբեր է հնչվել. օրինակ՝ աղունիկ, եղունիկ, եղունէկ, աղունակ, նաև աղօնիկ, քղօնի և այլն, իսկ մեր գրական լեզուն վերցրել է հին

ձևը: Ինչ վերաբերում է նաև բառին, ապա դա շատ քիչ գործածական բառ է եղել և խոսվածքներում այժմ գործածվածը ոչ թե հին բառն է, այլ նոր փոխառություն է թուրքական լեզուներից: Իսկ այն խոսվածքներում, որտեղ կենդանի է եղել, կանոնավոր կերպով դարձել է նօթ:

Այս դառնում օ նաև այն դեպքում, երբ նրան հաջորդում է հոդ, կամ բառակազմական որևէ ձևույթ. օրինակ՝ գրաւ-գրաւչակ սն, նաւ-նաւս-նաւդ և այլն: Այժմ հին աւ կապակցությունը մենք գրում ենք ալ:

Եւ երկրորդապես, որ պատմական հնչյունափոխությամբ այժմ դարձել է յա, նույն հնչյունափոխությամբ բառավերջի փակ վանկում դարձել է ե հետևյալ դեպքերում. ա) գրաբարի բոլոր անցյալ դերբայներում, եթե աշխարհաբարում գրանք գործածվում են օրպես վաղակատար դերբայ. օրինակ՝ կարդացեալ-կարդացել, սիրեալ-սիրել, գործեալ-գործել, մատուցեալ-մատուցել և այլն. Իսկ եթե գրաբարի անցյալ դերբայը գործածվում է ոչ իբրև դերբայ, այլ ուրիշ խոսքի մաս, ապա եւ չի դառնում ե, այլ մնում է յա. օրինակ՝ առաքյալ, ստուգյալ, ճիշտյալ, (ճիշտ վաղակատար դերբայ), ճեծյալ, անկյալ (բարբառներում անգյալ), դարձյալ, ընտրյալ, կոչեցյալ, օրհնյալ, կապյալ և այլն: Բացառություն են կազմում Առաքել հատուկ անունը և բարբառներից փոխառյալ մեռել (<մեռյալ) ձևը:

բ) Այն բոլոր բառերի փակ վանկում, որոնք գործածական են կենդանի խոսվածքներում. օրինակ՝ ցորեանց-ցորեն, կորեակ-կորեկ, վառեակ-վառեկ, երմեակ-երմեկ (<երա-մեակ, որ անձնանուն է այժմ), լեւառն-լեռ:

դ) Եւ ավել է ե անցյալ կատարյալ եղակի երրորդ դեմքի եաց ձևի մեջ. օրինակ՝ գրեաց-գրեց, սիրեաց-սիրեց, կոչեաց-կոչեց: Այս դեպքում բացառություն գոյություն չունի: Մնացած դեպքերում եաց կապակցությունը չի տալիս ե. օրինակ՝ մեմակյաց, երկարակյաց, կնատյաց, նստակյաց և այլն:

դ) Ես > Ե հոգնակի եար, Գեար վերջավորությունների մեջ առանց բացառության. օրինակ՝ բանեար-բաներ, բարձ-
կընեար-բարձիկներ և այլա սրանց համարանությամբ մյուս
բոլոր ձևերը: Միայն ես կապակցությունը իրեար ձևի մեջ
տվել է ա (ոչ որպես հոգնակիի վերջավորություն), օրի-
նակ՝ իրեար-իրեր-իրար(միմյանց):

ե) Մեր գրական լեզուն գրաբարի ես, Ե զուգահեռ ձևե-
րից վերցրել է Ե ձևը. օրինակ՝ շեմք (շեամ, սեամ), ղեկ (ղե-
ակ), խնայեմ (խնայեամ), կլայեկ (կլայեակ), գեհնն (գեհեան),
ատեմ (ատեամ), գոեհ (գոեան):

զ) Ես չի դարձել Ե աղգանունների վերջում եսն
ձևի մեջ. օրինակ՝ Մամիկոնյան, Մկրտչյան, Արարամյան
և այլն:

է) Եան ձևի մեջ առհասարակ ես չի դարձել Ե. օրի-
նակ՝ մալյան, պալյան (Թումանյանի պատենում ձևը հնա-
ցած է և արդյունք է շեշտադրության, եթե չկա պատեն
ուղղականը), վայրկյան, մեհյան, այժմյան, առյան և այլն.
միայն եանց ձևը բարրաններում դարձել է ենց և անդել է
նաև գրական լեզվին. Չարենց, Մեծարենց, ապա առանց,
Համբարձումենց իբրև սեռականի ձևեր:

ը) Այս բոլոր գեպքերում, երբ ես կապակցությունը
գրական ճանապարհով է անցել մեր լեզվին, չի դարձել Ե.
օրինակ՝ խարտյաշ, որդյակ, օթյակ, եռյակ, քառյակ, դղյակ,
այծյամ, եղյամ և այլն:

Եայ ետաբարձառը մեր գրական լեզվում երկու ձևով
է ընդունված: Դեռևս գրաբարի շրջանում դա փոխվում է՝
դառնալով Ե. օրինակ՝ աշտեայ-աշտե, միջօրեայ-միջօրե,
քուեայ-քուե (այժմ մենք գրում ենք աշտե, միջօրե, քվե):
Այդպես ունենք բազեայ-բազե, գոնեայ-գոնե, ափսեայ-ափսե
և այլն: Գրաբարում փոփոխված ձևերը այդպես էլ մնացել
են մեր գրական լեզվում, իսկ չփոփոխվածները բոլորովին
դուրս են մղվել: Սակայն եայ վերջացող հաջորդական
ածականները, ինչպես պղնձեայ, երկաթեայ և այլն, մեր
գրական լեզվում երկու ձևով են ընդունվել. մարմարյա-

մարմարե, պղնձյա-պղնձե, երկաթյա-երկաթե, ադամանդյա-ադամանդե, փայտյա-փայտե և այլն: Ե-ով ձևերը վերացրել ենք խոսվածքներից, իսկ յա-ով (հին եայ)՝ գրարարից: Բայց պետք է նշել, որ սրանք այժմ ավելի արտահայտչական արժեք ունեն. միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ կենդանի ու պրոդուկտիվը ե-ն է, որովհետև քիչ բացառությամբ այն բառերը, որ յա-ով են, կարելի է գործածել նաև ե-ով, իսկ ժողովրդական բառերը և այն բառերը, որոնցից գրարարում եայ-ով բառ չի կազմված, այժմ արհեստական է յա-ով կադմել. օրինակ՝ չենք ասում քարյա դսր, այլ քարե դսր, չունենք կամ չենք գործածում կավյա, հողյա:

(Եայ) յա չի դառնում ե, երբ արտահայտում է մի բան ունենալու խմաստ, մի բան անելու ունակ լինելը, մի որևէ կրոնի, կամ ուսմունքի հետևողը, նաև երբ տեղի և ժամանակի բառերից ածական է կազմում. օրինակ՝ անձնյա, սևայա, հրաչյա, քրիստոնյա, հրյա-հրեա, պաշտոնյա, գործունյա, ծովագերյա, սադրերկրյա, եռամսյա, միամսյա, բազմամսյա, հնգամսյա, առժամյա, յոթնամսյա, տասնամսյա:

(Եայ) յայ փակ վանկում հազվագյուտ է. միայն գտնվում է լույլայն բառի մեջ: Հավանորեն դժվար արտաբերության հետեանքով այդ տեսակի բառերը չեն մնացել լեզվում: (Եայն) կենդանի է եղել բարրառոնեում, բայց մեզ հասել է (էն) եմ ձևով. օրինակ՝ զնգալեն, զոռզոռալեն, խնգալեն և այլ բառերի վերջում¹:

Ընդհանուր կամ պատմական հնչյունափոխություններ այ երկրորդադար արարատյան խոսվածքներում դարձել է է. օրինակ՝ այս-էս, այն-էն, գայլ-գէլ, սայլ-սէլ, մայր-մէր և այլն: Այս երևույթը նկատվում է նույնիսկ հույից առաջ. օրինակ՝ տղայ-տղէն, սղայ-սղայն-սղէն և այլն: Այս հնչյունափոխությունը չի ընդունված մեր գրական լեզվի մեջ՝ չնայած Թումանյանի հայտնի էս, էդ, էն ձևերին:

¹ Տես նաև Ա. Արբանյան, «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը», Երևան, 1953, էջ 263:

Այ երկբարբառի պատմական հնչյունափոխությունն նկատվում է մի քանի ձևերի մեջ. ա խոնարհման ըզձականի ապառնիի հոգնակի երկրորդ դեմքը լինում է աղաք կարդաք, գնաք և այլն, փոխանակ՝ աղայք, կարդայք, գնայք. այգպես է նաև ըզձականի անցյալի եզակի երրորդ դեմքը. աղար, կարդար, գնար, փոխանակ՝ աղայր, կարդայր, գնայր: Այս երևույթը նկատվում է նաև գրաբարում. օրինակ՝ մի՛ աղար, մի՛ գնար, փոխանակ մի՛ աղայր, մի՛ գնայր:

Այ տվել է ե տայգր-տեգր և ժայռ-ծնո բառերի մեջ, մնացած բառերի փոփոխությունները չեն ընդունված գրական լեզվի մեջ. օր.՝ սայլ-ս'լ, գայլ-գ'լ: Այլ մնացել է երկու ձևով՝ այլ, էլ: Բառավերջում այ հնչվում է ա. օրինակ՝ ծառա, աղա, աբեղա և այլն. միայն մնում է միավանկ բառերի մեջ. օրինակ՝ բայ, այ, հայ, նայ, հայ: Իսկ միավանկ բայերի մեջ չի մնացել. օրինակ՝ կա, գա, տա, լա և այլն: Բառավերջի այ վերականգնում է, երբ հաջորդում է որևէ ձայնավոր. աղա-աղայի-աղայություն և այլն:

Յ-ի անկումը բառավերջում հատուկ էր նաև գրաբարին. օրինակ՝ գնա, քո և այլն: Հին հնչյունափոխության արդյունք է վայք > վօք, վէք, վիք, (վօթել, ջրվէք, վիթել):

Այ փակ վանկում հնչյունափոխվում է մաստաբ կըրկնության մեջ. օրինակ՝ փայլվիել, կայծկլտալ, ձայնձնել նաև՝ կեծանալ-կեծ-կրակ, որոնք գալիս են խոսվածքներից, ճիշտ այնպես, ինչպես լայն-լեն, ժայռ-ծեռ, ձայն-ձեն և այլն:

Ոյ կապակցությունը բառավերջի բաց վանկում դառնում է ո. օրինակ՝ երեկո, ամենո, չափածո և այլն: Նույնությամբ մնում է միավանկ բառերի մեջ. օրինակ՝ գոյ, խոյ, կոյ (կա նաև կու ձևով): Բառակազմության և հոլովման ժամանակ յ-ն վերականգնվում է. օրինակ՝ երեկոյի, երեկոյանալ, համոյական և այլն: Առհասարակ ձայնավորից առաջ ոյ միշտ մնում է ոյ. օրինակ՝ հոյակապ:

Փակ վանկում ոյ պատմական հնչյունափոխությամբ հնչվում է ույ. օրինակ՝ լոյս-լույս, կոյս-կույս, յոյս-հույս և այլն: Բարբառներում պատմական հնչյունափոխությամբ

ոյ դարձել է ու. օրինակ՝ լուս, բուս (բուսը տեղն է), պատրուգ, նկուք և այլն: Այս երևույթը այժմ որոշ բառերին կատմամբ դիտվում է նաև մեր գրական լեզվում, ուր ինչքան էլ խուսափում ենք ույ-ի ու արտասանությունից, չի հաջողվում. նման բառերից կարելի է հիշատակել՝ արատւա, բութ, ուծ, բուն, անուշ, բուծ, պուտ, շուտ, հանդուրծ, այտուց, գուծ, կուր (հավկուր): Սրանց մեծ մասը հին գրությունն են և կան նաև ոյ գրություններ: Ինչպես տեսնում ենք ոյ > ու դառնալու պրոցեսը սկսվել է վաղուց, բայց գրաբարում անավարտ է մնացել: Նկատվում է, որ մեր լեզվում շ, ժ բաղաձայններից առաջ ույ դժվարություններ է հնչվում. այդ պատճառով աշխույծ, զգուշ, տույժ, այժմ հնչում ենք զգուշ, տուծ, աշխուծ: Գրաբարում նկատվում է նաև յ-ի անկում շեշտի տակ. օրինակ՝ հոյծ-հոծ, լոյդ-լոդ, լոյս-լուսն:

Հին փոփոխության արդյունք են ոյգ-յոյգ > վեգ:

Ոյց պատճառականի կապակցությունը մեր գրական լեզվում չի մնացել: Անց. կատ. եղակի երրորդ դեմքում ունենք ույց, ուց. օրինակ՝ ուսույց, սեցուց, որոնցից մեկը գրաբարի մնացորդ է և ընդհանրական արժեքից զուրկ. իսկ մյուսն էլ բարբառային է և միևնույն չափով անարժեք:

Ոյր հնչյունափոխված ուր նկատվում է գրաբարայերի արգելական հրամայականում. մի՛ թողուր, մի՛ հեղուր, փոխանակ մի՛ թողոյր, մի՛ հեղոյր:

Եւ երկբարբառը գրաբարում արդեն պատմական հնչյունափոխությամբ դարձել է իւ, ավելի ճիշտ կլինի ասել եւ, իւ նույնարժեք երկբարբառներից իւ-ը հազթել է: Եւ մնացել է միայն բառավերջի բաց վանկում և ինչպես այժմ, այնպես էլ միջին դարերում և գուցե է՛լ ավելի առաջ հնչվել է եվ, որ գրվում էր և գրվում է և. օրինակ՝ պարգև, թև, ձև, անձրև, կեղև, արև, տերև և այլն: Բաղաձայնից առաջ գտնվում է միայն ևս բառի մեջ: Ուրեմն՝ եւ-ից իւ-ին անցումը փակ վանկում արդեն գրաբարում վերջացած էր:

Մի քանի կրկնակ ձեերից (ալեր-ալիւր, առեւծ-առիւծ, եղ-ջեր-եղջիւր և այլն) վերջնականապէս հաղթել էին վերջին ձեերը:

Իւ երկրարբառը արարատյան խոսվածքների մեջ փակ վանկում գարձել է ի, ու. օրինակ՝ ալիւր-ալիւր-ալուր, ա-րիւն-արիւն-արուն, ձիւն-ձիւն-ձուն:

Իւ բառասկզբում գտնվում է իւր և իւղ բառերի մեջ, որոնցից իւր > իր, մնալով նաև իբրև յուր, իսկ իւղ գործածվում է միայն յուղ ձևով (եղ հին փոփոխություն է եւղ-ից):

Իւ երկրարբառը իր հին արտաբերությամբ մոտ է եղել յու-ին, ուստի այդ իւ > յու փոփոխությունը մնացել է աննկատելի: Արարատյան խոսվածքներում կատարված հնչյունափոխությունը քիչ է ազդել գրական լեզվի վրա. կան մի քանի մասնակի օրինակներ. այսպէս՝ դիւր-դյուր այժմ հնչում ենք դուր, սակայն բարդության մեջ պահպանվել է. օրինակ՝ դյուրաբեկ, դյուրագգաց, և այլն: Բայց հենց այս դեպքում հնից ունենք գուրեկան. հին ժամանակներից ունենք դյուցապաշտ և գիցապաշտ. արյուն բառից կազմված ունենք արունքտեր, արնոտ, արնաքամ, արնահեղեղ, որոնք կազմված են արուն ձևից և գրական լեզվին անցել են բանավոր խոսվածքներից՝ իբրև պատրաստի կազմություններ: Յու գծվարությամբ է հնչվում ձ, ֆ, շ, ժ բաղաձայններից հետո. ֆյուղ, շյուղ, ձյուր, ժյուլ, ժյուրի և ուրիշ բառեր գրեթե հնչում ենք ֆուղ, շուղ, ձուք, ժուրի: Այժմ յուր բառի իր ձևն է տարածված՝ բայց բարդության և ածանցման մեջ պահվում է անվթար. օրինակ՝ յուրաքանչյուր, յուրովի, յուրացում. բացառություն է կազմում հին ածանցավոր իւրեան ձևը, որ տվել է իրեն: Հին իւ և ի կրկնակի ձևով գրված բառերից այժմ վերցրել ենք ի-ով գրվածները. օրինակ՝ փիւղ-փիղ, պիւղծ-պիղծ:

Ձայնավորներից առաջ և բառավերջում իւ հնչվում և գրվում է իվ, օրինակ՝ կիվիվ, (կիւիւ), արծիվ, պատիվ և այլն: Այս դեպքում այլ փոփոխություններ չեն նկատվում:

Եւս եռարարբառը գրաբարում առաջացել է իսկ ձևից մի բառավերջում երևում է միայն ի-ով վերջացող բառերի գործիական հոլովի մեջ (բացառություն է կազմում սեաւ (սև) բառը: Այդպիսի գործիականները մեր գրական լեզվում այլևս չեն գործածվում, միայն մնացել են մի քանի քարացած ձևեր, այն էլ բավականաչափ փոփոխված. օրինակ՝ բարեաւ-բարև, արդեաւք-արդեօք-արդյոք, կարծեաւք-կարծեօք (ք-ն հոգնակի վերջավորություն է): Միայն հազվագեպ գործածական է հավաստյալ ձևը: Գրաբարում արդեն եւս դարձել էր եւ, եօ. օրինակ՝ եաւթն-եւթն-եօթն-յոթ:

27. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ծ-ըզ գարի վիճակի հետ բաղդատելով պատմական կամ ընդհանուր հնչյունափոխություն նկատում ենք հայերենի պարզ և բարդ ձայնեղների մեջ: Ծ-ըզ գարի բ, գ, դ, ձ, ջ պայթականներն ու կիսապայթականները, որոշ դիրքերում տվյալ հնչյունափոխյան հետևանքով դարձել են փ, ք, թ, ջ, չ խուլ-շնչեղներ. այս օրենքը գուցե հնում ընդհանուր է եղել, բայց այն դեպքերում, որտեղ նկատվում են փոփոխություններ, մեր լեզվում իր ավարտին չի հասել: Դեռ ավելին. այսօր մեր նոր գրական լեզվում նկատվում է վերադարձ դեպի հին արտասանությունը նույնիսկ այն դիրքերում, որտեղ խլացման երևույթը վաղուց սեալ փաստ է եղել:

Ուրեմն՝ մեր գրական լեզվի հնչյունական սխտեմի համար այդ պատմական երևույթը նույնիսկ այն որոշակի դիրքերի համար, որ վաղուց անտի նշվել է, ընդհանուր բնույթ չի կրում, այլ դարձել է մասնավոր պատմական մի ժառանգություն:

Խուլ- շնչեղացման ամենատեղ տենդենց նկատվել է և ձայնորդից հետո. օրինակ՝ բուրդ հնչում ենք բուրթ, տըջ՝ արչ-տաչ, կարգ՝ կարք, խուրձ՝ խուրց, նուրթ՝ նուրփ, պրդել՝ գրթել, դարձ՝ դարց և այլն: Կարելի է ասել, որ բ-ից

հետո եկող վերոհիշյալ ձայնեղների խուլ շնչեղացումը օրենք է: Բայց հենց այս ընդհանուր օրենքից գուրս են մնում՝ ա) այն բառերը, որոնք արարատյան խոսվածքներում չեն գործածվել, օրինակ՝ սարգ, սիրամարգ, արգ, արբանյակ, բորբոքել (սրա փոփոխված ձևն է բորփել, իսկ բորբոքել վերջված է գրական ճանապարհով), ներծված, հործանք, ձործ, շուրջ, գորգ, լործ, որջ, հորջորջել, ներծել, ստերջ, մերծ, ոսկերծ, արգանակ, արգանատել, անուրջ, սորգ, արգասիք, արգավանդ, բարբաջանք, բարգավանել, բարբարոս, բուրգ, գիրգ, երգիծել, խարգավանք, խորդալ, գղիրգ, խորդենի, ներբան, սարբինա, վարգել, ցրդենի, քարբ, անջրդի, ընդ և գուցե մի քանի այլ բառեր:

բ) Ուշ շրջանի փոխառությունները, որոնք մեր գրական լեզվի մեջ անցել են բարբառային ճանապարհով, օրինակ դարդ՝ դարդագուն, զարբար, դարբեղար, կուրգան, նարդի, բուրջ, մարջան և այլն:

գ) Նոր փոխառությունները, բերգան, օսրտորգ, Վիրորգ, Սերգո և այլն:

դ) Բացահայտ կրկնությունները, երբ այդ պատճառով բաղաձայնը մոտենում է ր-ին. օրինակ գրգիռ, բարբառ, դարդար, ջարջառ և այլն:

ե) Գրականության միջոցով խոսակցական լեզվին անցած բառերը՝ օրինակ՝ զարգանալ, լուրջ, խարդախ (մեր խոսվածքում խարթախ), Նար-դոս, հարգել (հարգ ու պատիվ):

զ) Գրական լեզվում և խոսվածքներում տարբեր ձևով գործածված բառերը, այսինքն՝ խոսվածքներում փոխվել է, բայց գրականը վերցրել է հին անվթար ձևը. օրինակ՝ կաթ՝ ժուճ-կամուրջ, քրչ-քուրջ, բորփել-բորբոքել և այլն:

է) Բառակազմության հետեանքով ր-ին մոտեցող հիշյալ ձայնեղները. օրինակ, նրճիգ, ներգործական, տարբեր և այլն:

ը) Կան մի շարք բառեր, որոնք այժմ երկու տեսակ են արտաբերվում. օրինակ՝ ներբող-ներփող, երջանիկ-

երչանիկ, արդի-արթի, բորբոս-բորփոս, արվարձան-արվար-
ցան, արձան-արցան, հանդերձ-հանդերց *և այլն, որոնց մեջ
այժմ առաջնությունը տրվում է ձայնեղներին*։ Նոր սե-
րունդը մոռացության է տալիս խուլ *ա* արտաբերությունը։

Թե խոսվածքներում *և թե՛* գրական լեզվում *վա-
զուց* ի վեր մարզ¹ բառը հնչվում է՝ համապատասխան իր
գրության, որից կազմված գրական մարզագետին բառը
հնչվում է մարքագետին։

Դիտված է նաև, որ *հիշյալ* ձայնեղ բաղաձայնները եր-
բմիս նաև *ն-ից* հետո են խուլ-շնչեղ դառնում²։ Պարզենք
այս խնդիրը։

Ն-ից հետո մեր լեզվում այժմ սովելի շուտ խուլների
ձայնեղացում է նկատվում։ օրինակ՝ բնծա, բնկնել, բնարել,
բնկեր, այժմ շատերը հնչում են բնձա, բնգնել, բնդրել,
բնգեր, մանավանդ հոգնակին՝ բնգերներ։

Ձ *և ջ* ձայնեղների խլացում *ն-ից* հետո չի նկատվում,
իսկ ք հաջորդում է *ն-ին* միայն բարդության *և* ածանց-
ման մեջ։ Մնում են *զ* *և* *ղ* ձայնեղները, որոնք արդարև
սակավաթիվ բառերի մեջ հնչվում են շնչեղ-խուլ։ Այդ բա-
ռերն են՝ խնդրեմ, կենդանի, անգամ, արձագանգ (այժմ ար-
ձագանք), անգամ *և* մի քանի այլ բառեր, որոնք կազմվում
են բնդ նախդիրով՝ չնայած բնդ առանձին³ *և* նույն պայ-
մաններում ուրիշ բարդությունների մեջ հնչվում է դ-ով։

Բնդ-ով կազմված *թ-ով* հնչվող բառերն են՝ բնդարձակ,
բնդհատակյա, բնդօրինակել, բնդհանուր, բնդհատել, բնդա-
ռաջ, բնդհարվել, բնդհուպ, բնդունայն, բնդհակառակը, բն-
դունակ, բնդամենը *և* գուցե մի քանի ուրիշ բառեր, որոնք
բոլորն էլ, սակայն, զուտ գրական բառեր են *և* խոսվածքնե-
րում այժմ են միայն գործածական դառնում։ Սակայն

¹ Մարզ չի դարձել մարզ, որպեսզի չփոթվի մարզ բառի հետ, որ
հնում մայր բառի հոգնակի ուղղական էր։

² Տես Մ. Արեղյան, «Հայոց լեզվի օնոտոթյուն», էջ 104։

³ Այս բառն էլ ստացվին հնչողների կան, որ ժողովրդական
սխալ ստուգաբանության արդյունք է. շփոթվում է առանց բառի հետ։

սրանց միանգամայն հակադիր, բայց միևնույն կազմությամբ, ընդդեմ, ընդարմանալ (ընթարմանալ այժմ այլևս չի հնչւում), ընդգծել, ընդելուզել, ընդմիջում, ընդվզել, ընդլայնել ընդմիջտ, ընդամին և այլ բառեր, նույնիսկ գրանց ձևով ընդեղեն (ուեղ բառից), ընդերք (ընդեր բառից) դարձյալ դ-ով են հնչւում:

Բացի վերևում բերված փոքրիկ ցանկից, ն-ից հետո այլևս խլացում չենք նկատում. ինչպես՝ ժանգ, գունդ, ցանգատ, զինդ, ռունգ, թունդ, ժառանգ, խանգարել, խնդալ, կանգ, հանդես, կոնդակ, հանգամանք, հանգիստ, հանգույց, հանգրվան, հանգարտ, հանդ, հանդես, զնդան և այլն:

Ղ-ից հետո ձայնեղները գերազանցապես մնում են նույնությամբ. մասամբ բ-ն հնչւում է պ՝ դ-ի խլացման հետևանքով. օրինակ՝ աղբ (ախպ), եղբայր (եխպայր), աղբյուր (ախպյուր), ողբ (ոխպ), աղջիկ (ախջիկ), դաղձ (դախց), դեղձ (դեխց): Մնացած դեպքերում թե՛ ձայնեղ բ, գ, դ, ձ, ջ հնչույններ են պահպանւում և թե՛ դ-ն. օրինակ՝ աղջամուղջ (ախջամուխջ հնչելը արհեստական է ու բռնազրոսիկ), բաղդատել, լավանք, բղջախոն, բողբոջ, գաղջ, գեղգեղանք, գեղձ, գեղջուկ, դեղձանիկ, դեղձան, հեղգ, հեղձամղձուկ, անհողդողդ, մաղձ, շաղգամ, շեղջ, ողջ (առողջ), փղձկալ և այլն: Դեխցանիկ, ոխջ արտաբերությունը հնացած է:

Մ-ից հետո խուլ-շնչեղացում նկատւում է համբույր և համբա (այժմ՝ գրվում է համփա) բառերում: Այլ օրինակ չենք գտնում: Մնացած բոլոր դեպքերում ձայնեղները մնում են, օրինակ՝ թմբուկ, լամբակ, թամբ, համբակ, խըմբակ, համբարձում և այլն:

Բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները մասամբ խլանում են ձայնավորներից հետո: Այս երևույթը նկատւում է արարատյան խոսվածքներում վաղուց անտի կիրառություն ունեցած բառերի մեջ: Մեր գրական լեզուն այդ բառերը ժառանգել է բնական արտասանությամբ, բայց նույնիսկ հենց այդպիսի բառերը մեր գրական լեզվում մտնելով բարդու-

թյան մեջ՝ վերականգնում են իրենց հին հնչումը, այսինքն՝ արտասանվում են ձայնեղ. օրինակ՝ աջ հնչում ենք աչ, բայց աջակից, աջակցել գրական բառերը չ-ով հնչելը ոչ թե բնական հնչում է, այլ սխալ արտասանություն։ Այժմ այդ բառերը հնչում ենք ջ-ով. ավագ հնչում ենք ք-ով, բայց ավագանի ք-ով հնչելը սխալ է ու կեղծ։ Նույն օրինակափությամբ եթե ամանցավոր բառերը խոտվածքներում գործածվելիս նրանց ձայնեղները խլացել են, գրանց արմատները նոր գործածության մեջ զնելով հնչում ենք ձայնեղ. օրինակ՝ իջնել գերազանցապես արտասանում ենք իչնել, բայց էջ պահում ենք նույնությամբ։

Այն կանոնները, որ առաջ բերեցինք ք բազաձայնի հետ կապված, գերազանցապես վերաբերում են նաև ձայնավորներին։ Առայժմ ձայնավորներից հետո ձայնեղները խուլ-չնչեղ ենք արտաբերում հետևյալ բառերի մեջ. առաջ, աջ, խաբել, արևածագ, ծագում, արագ, պատարագ, ուրագ, նվագ, քագավոր (խսկ թագ պետք է գ-ով հնչել), թագածառանգ, ճիգ, ճագ, էգ, իբրև, դադար, իջնել* (բայց էջ, իջևան, Նախիջևան, վայրիջույց և այլ գրական բառերը պետք է հնչել ջ-ով), հորդ*, հեգ (գրաբարում գրվում է նաև հեք), (խսկ հեգ-հեգել-հեգում պետք է հնչել գ-ով), հոգ, հոգնակի, հագնել, երգ (բայց՝ ողբերգու), էգուց, գոգ—(բայց՝ գոգավոր), նրագ, տեգր, մարագ, մեջ (բայց՝ միջոց), հոգնել, ոջիլ, օգի, շոգի, շոգ, հոգի, շաբաթ, նորոգել, իբր, Սերոբ, օգուտ, զիջել, նիգ* (նգնավոր), օդ, օճ և մի քանի այլ բառերի մեջ, իսկ ձայնավորներից հետո ձայնեղությունը պահպանվում է հետևյալ բառերի մեջ. Աբել (Ափել բարբառային է), արեղա, ագահ, ագի, ագռավ, Ադամ (Աթամ, Հաթամ բարբառային են), առագաստ, հագագ, թագ, հագենալ, եղեգ, գոդ (գոթ բարբառային է), էջ, սեգ, սագ, վիրագ, վայրագ, գրվագ, փափագ, Վահագն, վագր, Բարեկոն, բագին, բադ, լաբիրինթոս, լաջվարդ, լեգիոն, լո-

* Վերևում բերված ցանկերի աստղանիշերով բառերը այժմ հնչվում են երկու տեսակի։

գանք, խոխոջ, ծնեբեկ, հեգել, հեգնել*, հեգեմոնիա, ոռոգել, պարագա, պաղպաղուն, հառագել, հառագայք, հագար, մագաղաթ, մագիլ, մագիստրոս, մագլցել, մեգ, միգամած, միջոց, մզլել, մեղալ, մելոդիա, մոգ*, մոգական*, Հաբեթ, Հուդա (Հուրա բարբառային է), հոդ, բացօթյազ (бывак), հաջող, նիգ, շագանակ, շիջել, ոգորել, որոգայք, սաղրել, սեգ, սիգանեմ, քաջ, արիբուն, տոգորել, տեգ, տիգ, վիգ (օգնական), սաուդիոն, սաուգել, արեգակ, ծղրիդ, օլիմպիադ, բջիջ, քրքիջ, դողդոջ, բողբոջ, գուր, մարմաջ, գեջ, Տիգրան և այլն:

Այս ցանկից երևում է, որ ձայնեղները պահպանվել են զուտ գրական բառերի մեջ: Ինչպես մյուս դեպքերում, այնպես էլ այստեղ գրի, ավելի ճիշտ, գրական արտասանությունը աստիճանաբար նվաճում է իր տեղը, և հին ձայնեղները նորից վերականգնում են իրենց նախկին վիճակը: Գրական լեզվում ձայնեղների բռնի խուլ արտաբերությունը, որ պարտադրվում է դպրոցական քերականություն, բառարանների և այլ օժանդակ ձեռնարկների միջոցով, պարզիպարզո բռնադրուսիկ է. մեր արտասանական դեռավիճակը հակվում է դեպի ձայնեղ արտաբերությունը. չենք խոսում այն մասին, որ արդեն բավականաչափ մեծ թիվ են կազմում այն մարդիկ, որոնք բոլոր դեպքերում խլացած ձայնեղները ձայնեղ են արտաբերում:

Պատմական հնչյունափոխության հետևանք է նաև լիզու բաղաձայնի դառնալը մեր լեզվում: Պատմական այս հնչյունափոխության ժամանակը պրոֆ. Աճառյանը դնում է 9-րդ դարից: Մեր գրական լեզվի մեջ անցման այդ պրոցեսը լիակատար կերպով վերջացած է: Մենք ունենք մի շարք բառեր, որոնք հնչվում են *և՛ լ-ով, և՛ դ-ով*. օրինակ՝ աղ-անաղի, բայց և անալի, ջիղ-ջիլ, տիղ(մ)-աիլ, քաղ-թուլ, լինել-եղա: Պրոֆ. Աճառյանն այս երևույթը բացատրում է նրանով, որ դեռևս այդ տեսակ բառերը ու-

* Վերևում բերած ցանկերի աստղանիշերով բառերը այժմ հնչվում են երկու տեսակ:

նեխն երկու տեսակ հնչում. աղի հնչվում էր ալի, այսինքն՝ կոշտ լ-ով (դ-գրությամբ) և կիսափափուկ լ-ով: Այնպես որ այսօր մեր լեզվում լ-ի և դ-ի շփոթությունը չկա. մեր դ-ն այժմ շփոթվում է եռնալեզվային խուլ խ-ի հետ. օրինակ՝ բեղ-բեխ, ասնդուղ-ասնդուխ: Մեր հին ձեռագրերն էլ շփոթում են բախտ-բաղդ, աղքատ-ախքատ, սխալ-աղալ և այլն: Ինչպես նկատում ենք, պատմական հնչյունափոխությունը երբեմն իր ընթացքում շատ հեռու է գնում. այսինքն՝ լ-ն այնքան է փոխվում, որ շփոթվում է խ-ի հետ:

Պատմական հնչյունափոխության արդյունք է գրաբարի ո(յ) հոլովման ու դառնալը մեր գրական լեզվում: Սա նման չէ մյուս հոլովումների փոխանցման. օրինակ՝ ծոփու դառնում է ծովի, ոչ թե պատմական հնչյունափոխությամբ, այլ համաբանությամբ (անալոգիա), իսկ ոյ-ի անցումը ու-ի տեղի է ունեցել նաև խոնարհման մեջ. օրինակ՝ երգեցո (հրամայականում յ-ն ընկնում է) երգեցրու (երգեցուք), բխեցո-բխեցրու: Գոյականներից պատմական հնչյունափոխության՝ հոլովման մեջ ենթարկվել են մարդ-մարդոյ-մարդու, աստուած-աստուծոյ, աստծու (նաև աստծո) սխիւ-սխիւոյ-սխիւու (սխիւո): Աջ-աջու, ձախ-ձախու¹, ահ-ահու բարբառային են:

Եթե ո հոլովման՝ վերևում բերված, միայն երեք բառի մեջ ենք նկատում ոյ > ու փոխանցումը, ապա ի-ով վերջացող բառերը ենթարկվել են այդ օրենքին. օրինակ՝ ձի-ձիու,² գարի-գարու, այգի-այգու, ջորի-ջորու և այլն: Նույն օրենքին ենթարկվել են նաև անորոշ դերբայները. ուտել-ուտելոյ-ուտելու, կարդալ-կարդալոյ-կարդալու և այլն: Առաջ գործածական էր նաև լուսու, ամոքու (վերջինը այժմ մակրայական նշանակություն ունի) խորովոյ-խորովու, ազդոյ-ազդու, շինածոյ-շինծու:

¹ Այդ, ձախ բառերը գրաբարում հոլովվում են նաև ու-ով, իսկ ամու համաբանության հետեանք է:

² Դի, քի, մի, լի բառերը նույնությամբ գրեթե չեն հոլովվում:

28. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱՍԿԶԲՈՒՄ

Բառի սկիզբը հնչելը կապված է հնչարտաբերական մի շարք հանգամանքների հետ. այստեղ դեր են կատարում արտասանական ունակությունը, շնչառության հանգամանքները և այլն: Հենց այն հանգամանքը, որ մեր գրական լեզվում միայն բառասկզբի ե-ն և ու-ն են փոխվում յե և վո-ի, որոշ չափով կապ ունի բառասկզբի արտասանական վիճակի հետ: Հնում հայերը դ և ր բաղաձայններով բառ չէին սկսում, նույնիսկ օտար բառերի մեջ այդ բաղաձայններից առաջ ձայնավորներ էին ավելացնում: *Լբայր > եղբայր, դունգ > եղունգ, *րկու-երկու, *դունի > աղավնի և այլն, բայց հետագայում այդ առաջագիր ձայնավորները բարբառներում բառասկզբում ընկնում են. օրինակ՝ ողորկ-ղորկ, ուղղորդ-ըղորդ-ղորթ, եղունգ-ղունգ:

Գրաբարի յ կիսաձայնը մեր գրական լեզվում բառասկզբում փոխվել է հ-ի: Որ յ-ն բառասկզբում հ-ից տարբեր է հնչվել, դա պատմական փաստ է. դա ոչ միայն հատատվում է գրությամբ, այլև հնչյունափոխությամբ. հայերենի այն բարբառները, որոնք պատմական հնչյունափոխությամբ հ-ն փոխել են յ-ի, յ-ն հետագայում դարձրել են հ. օրինակ՝ միկենույն արմատից առաջացած հիկեք բառը դառնում է իիկեք, բայց յիսուն չի դառնում իսիցուն, այլ հիցցուն: Յ-ի փոփոխությունն այլ դիրքերում չի կատարված, բացի բառավերջի յ-ի անկումից:

Հայերենի մի շարք բարբառներում ձայնավոր հնչյուններից առաջ նկատվում է հ հագագի ավելացում. օրինակ՝ ուս-հուս, ամուլ-համուլ-համբուլ, էգուց-հէգուց և այլն: Այս երևույթը գրական լեզվում իր հետքը թողել է միայն հարբել, հագնել, հորթ, հարս, հունգ բառերի մեջ, մնացած գեղեցիկներում գրական լեզուն ձայնավորով սկսվող հին բառերի հ-ով արտաբերությունը մերժում է՝ համարելով բարբառային:

29. ՀնչՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱՄԻՋՈՒՄ

Բառամիջում մի շարք նոր հնչյունների անկումը կամ առաջացումը պայմանավորվում է բառամիջում գտնված այս կամ այն հնչյունի արտասանական սպեցիֆիկ հատկություններով: Այստեղ գեր են խաղում առնմանությունները, տարնմանությունները, համարանությունները և այլ արտասանական երևույթներ, որոնք շատ զեպքերում ուսումնասիրություն կոնկրետ ծիրի մեջ չեն մտնում. օրինակ՝ այսօր էլ գծվարանում ենք, ճշտորեն գտնել այն պատճառարանությունները, թե ինչու գրաբարի մեք դարձավ մենք, կամ գնամք>գնանք, բերեմք>բերենք և այլն: Մենք բառի մեջ ն-ի առաջացումը պրոֆ. Գ. Ղափանցյանը կապում է գրափոփոխության հետ, որպես թե մ'անգայինի մտապատկերի շարունակությունը կազմում է ն-ն: Բայց հայերենում ք-ից առաջ ն-ի հայտնվելը նկատվում է նաև այնպիսի պայմաններում, որտեղ մ' գոյություն չունի. օրինակ՝ գնայար>գնայինք, բերեար>բերեինք. նույնիսկ գրաբարի ներկայի հոգնակի առաջին դեմքի մ-ն դարձել է ն. օրինակ՝ գրեմք>գրենք: Ուրեմն՝ որոշ զեպքերում ն-ի առաջացումը մանավանդ ք-ից առաջ մեր լեզվում մի յուրահատուկ տեղեկն է եղել. մանավանդ ենք ասում, որովհետև այդ տեղեկն չը նկատվում է նաև այլ կապակցությունների մեջ. օրինակ՝ փոք-փոք, մեծ բարբառներում դառնում է մենն. ծ-ն ձայնեղանում է ն-ից հետո, սա էլ դառնում է վենն. խորուկ տալիս է խորունկ:

Բառամիջում նկատվում է մի այլ միտում. ջ, գ, ս, շ, ժ, ց շփականներից առաջ հետագայում ր-ն ընկնում է: Այս երևույթը նկատվում է նաև ծ-րդ դարում. ունենք մրսել-մսել, փրցլինք-փալինք, մարգել-մազել-մամել, հորսելի-հոսելի, որջիլ-ոջիլ, խարշել-խաշել, քարշել-քաշել, արշալույս-աշալույս, բարշ-բաշ, թորշակ-թոշակ, հավերժ-հավետ, դարժան-զաման, պարշարել-պաշարել, կարժ-կաժ: Այստեղ հնում երկու վիճակ է նկատվում. մի զեպքում ր-ն ընկ-

նում է, իսկ մի քանի բառի մեջ առաջանում է. օրինակ՝ թորչակ, հավերժ, կարծ, բարձանել բառերի մեջ ր-ն ետսամուտ է: Այժմ բացի մարգել, արշալույս, մրսել, հավերժ և հատուկ առումով գործածված քարշ բառերից, մնացածների մեջ ր-ն այլևս ընկած է (մարգել, և մածել իմաստային տարբերակում են ստացել, իսկ հորսելի բարբառային է: Բարբառային է նաև շածել-ժածել. (Ու ժածեցին աշխարհն հիմեն. Իս., 3-րդ, 108):

Ր-ի անկում նկատվում է նաև հ-ից առաջ. օրինակ՝ խորհ-խոհ-խորհել-խոհակամ, արհ-ահ, պարհել-պահել. համեմատել՝ զարհուրել, արհավիրք, որոնց արմատն է արհ (ահ). բարհ-բահ, մարհ-մահ: Մեր լեզվում նկատվում է հ-ի անկում զ ձայնեղից հետո. օրինակ՝ զհով-զով, զհատ-զատ, զհարկանել-զարկանել-զարկել, զհաաանեմ-զատանեմ-զատել, զհանցանք-զանցանք և այլն:

Բառամիջուկ առհասարակ հ-ի անկման տենդենց է նկատվում. օրինակ՝ դրաբարում կա անոգի (անհոգի): Այդ օրենքից չի խուսափում նաև յ-ն. օրինակ՝ յարգել-անարգել:

Ա, ո ձայնավորներին մի այլ ձայնավոր հաջորդելիս՝ դրանց միջև հայտնվում է յ. սա վերաբերում է ոչ միայն հայերեն բառերին, որտեղ յ-ն կարելի է նախկին յ-ի վերականգնում համարել, այլև օտար բառերին. օրինակ՝ Պանովա-Պանովայի, Մարիետա-Մարիետայի, ամեորա-ամեորայի, Տաստ-Տաստյի և այլն:

Մր, սր, նր կապակցությունները դառնում են մբր, ստր, նդր. օրինակ՝ համարել-համբրել, խամրել-խմբրել, մանր-մանդր, ծանր-ծանդր. համեմատել՝ թոնիր-թունդիր, սրա-ստրա և այլն, որոնք, սակայն, դրական օրինականացում չեն ստացել:

Մի ինչ-որ, արդեն մեռած, օրենքով տ-ից առաջ իս-ն դառնում էր ս. օրինակ՝ բախտ-բաստ (բարեբաստիկ, չարաբաստիկ, (տախտակ-տաստակ, դրախտ-դրաստ, որոնցից պահվել է միայն բաստ ձևը:

30. ՀնչՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՌԱՎԵՐՁՈՒՄ

Գրաբարում հազվագյուտ քերականական մի քանի ձևեր ու օտար անուններ կան, որ վերջավորվում են ա, ո ձայնավորներով. ա-ով և ո-ով վերջացող մնացած բառերն ու ձևերն ամփոփվում են յ-ով. օրինակ՝ ծառայ, տղայ, երեկոյ, չափածոյ, ծանեայ, մերոյ և այլն:

Հավանաբար այսպիսի վերջք են ունեցել նաև ի-ով և ու-ով վերջացող բառերը, իսկ եյ հանգող բառերի եյ-ը գրաբարում դարձավ է, որ հավասար է ե + յ:

Ու և ի հանգող բառերի վերջում յ-ի հետք բոլորովին չի մնացել, միայն խոսվածքներում հիշյալ ձայնավորներից հետո յ-ն վերականգնվում է, երբ դրանց հաջորդում է մի այլ ձայնավոր. առանց այդ յ կիսաձայնի նույնիսկ գրական լեզվում նման դեպքում դժվար է արտաբերությունը: Այս նշանակում է, որ բառավերջի յ-ի անկումը հին երկույթ է: Ի և ու ձայնավորներից հետո յ-ն ընկել է. իսկ ե-ից հետո ձուլվել. պահպանվել է ա, ո ձայնավորներից հետո միայն գրության մեջ: Հավանորեն 10-րդ դարից հետո բառավերջի այդ յ-ն սկսում է ընկնել: Տրագիցիոն արտասանությամբ անդամ այդ յ-ն այլևս չի պահվում, միայն մյուսների համեմատությամբ ա, ո ձայնավորներից հետո դրա ունալությունը զգացվում է հոգերից առաջ. օրինակ՝ ծառա, բայց՝ ծառայն, տղա-տղայս (գրում ենք ըստ հնչման) երեկո-երեկոյն, մի բան, որ այլ դեպքերում չի նկատվում. օրինակ՝ կատուն, ձիւն, մարգարէն և ո՛չ կատույն, ձիւյն, մարգարէյն:

Մեր գրական լեզվում հոգերից առաջ այժմ յ-ն այլևս չի վերականգնվում: Ուրեմն յ-ն ընկել է բառավերջում լինելու հետևանքով. հոգեբանական և ֆիզիոլոգիական հանգամանքներով վերջում ընդհանրապես հնչյունի արտաբերությունը թուլանում է, այդ պատճառով վերջին հընչյունները աստիճանաբար ժամանակի ընթացքում դուրս են ընկնում:

Այս երևույթը տարածվում է բոլոր հնչյունների վրա: Այժմ հայերենում գոյություն ունի ժխտական դերբայ՝ (չեմ) գնա, (չես) գնա, (չի) գնա, (չեմ) բերի, (չես) բերի, (չի) բերի և այլն: Այս դերբայը առանձնացավ որպես անկախ դերբայ՝ խնորոշ դերբայի և վերջավորություն անկումով: Մեր գրական լեզվում անորոշ դերբայի լ-ն գեոևս սակավ գեպքերում պահպանվում է բարբառային երանգը արտահայտելու համար, իսկ մի հիսուն տարի առաջ ուներ ընդհանրացած գործածություն. օրինակ՝ Տեսար, ես քեզ ասում էի, որ չես փոշմանիլ (Շիրվ., 2-րդ, 149): Մի անգամ գպրոցական աշակերտները կատակով հարցրին՝ չէր կամենալ արդյոք դառնալ Ալեքսանդր Մակեդոնացի (Նույն տեղում, 4-րդ, 502): Կաշխատեմ և չեմ ուտիլ, չեմ քնիլ, մինչև չկատարեմ քո ցանկությունը (Մուր. 1, 83): Նկատենք սակայն, որ ե խոնարհման բայերի մեջ անորոշը արդեն առանց լ-ն կորցնելու նոր դերբայացման ուղին էր բռնել. գրել դարձել էր գրիլ, ուտել՝ ուտիլ և այլն:

Բառավերջում ընկնում են ոչ միայն բաղաձայնները, այլև ձայնավորները. օրինակ՝ 5-րդ դարի տեղի, պատասխանի, կարասի, արծուի, հյուսիսի հետագայում դարձան պատասխան, տեղ, կարաս, արծիւ, հյուսիս, որոնցից որոշ ոճերի ու կազմությունների մեջ ի-ն գեոևս պահում են տեղ և կարաս բառերը. օրինակ՝ անտեղի, տեղի ունենալ, տեղի տալ, տեղիք աւալ, տեղեկություն, կանկարասի և այլն: Հավանական է, որ այս բառերի շեշտը եղել է վերջնիշխի վանկի վրա, այլապես ի ձայնավորի այս հին անկումը կարող էր տարածվել նաև մյուս բառերի վրա:

Բ-ից հետո բառավերջում նկատում ենք հ-ի անկում. օրինակ՝ նամապարհ, խոնարհ, շնորհ, այժմ հնչում ենք իրրև նամապար, խոնար, շնոր: Առհասարակ բառավերջում հ-ն թուլանում է. օրինակ՝ մահ, գահ, վեհ, պատեհ, հրդեհ, բահ, շահ, ագահ, գանձապահ, վստահ և այլ բառերի վերջին հ-ն շատ թույլ է հնչվում. թվում է, թե ձայնավորը թույլ երկարում է և վերջանում:

Գրաբարում մի շարք բառեր և բաղաձայնիվ բայանուն-
ներ վերջավորվում են ն-ով և մի նախորդ բաղաձայնով.
օրինակ՝ ձուկն, առամն, սկիզբն, ակն, կողմն, ջերմն, ներմն,
գազաթն, աղեղն, ամառն, ասեղն, փայլակն, ռունգն, գեղմն,
դիակն, բուրգն, դուռն, պոյան, ունկն, որդն, ոլսոն, ոսպն, շուր-
թըն, նուռն, մուկն, մպուռն, ձմեռն, կնեխոն, կայծակն, ծիծեռն,
թիթեղն, լիսեռն, ունկն, եզն, բեռն, գառն, մատն, անձն, ափն,
բուռն, խուռն, թէկն, հիւսն, եղեռն, դաշն, դառն, թոռն,
լեռոն, կաթն, կառափն, հարսն, մասն, ողն, ձեռն, ոտն, և
բոլոր ումն, վերջավորվող բայանուններն ու մի քանի քիչ
գործածական բառեր. այս բառերից ն-ն պահել են միայն
հյուսն, կրուկն (պահվել է գրափոխության հետևանքով՝
<կրուկն), բիկն (թիկն տալ), խուռն, եղեռն, դաշն, բուռն,
(վերջինը որպես անական), խաշն, տասն (>տասը), ինն: Ն-ի
անկումը բառավերջում հույնական հին երևույթ է: Գրա-
բարում խորձ բառի խորձան սեռականը և խորձուք հոգնա-
կին ցույց են տալիս, որ սկզբնական ուղղականը եղել է
խորձն: (Այսպիսի ուրիշ բառեր շատ կան. օրինակ՝ պա-
տերազմ-պատերազմուք, մրագ-մրագուք, եպիսկոպոս-եպիս-
կոպոսուք և այլն, որոնց ն-ն, սակայն, համարանության
արդյունք է):

Գրաբարում երկու ձևով ուղղական ունենք՝ խուփ-խու-
փըն, կրուկն-կրուկ. դուռն ձևի հետ ունենք նաև՝ դուրք,
ձեռն-ձեռք-ձերբակալել-ձեռագործ, ոտն-ոտք, կառափն-
կառափել, ոսկեհուռն-ոսկեհուռ, ջերմեռանդն-ջերմեռանդ,
շոինդն-շոինդ, կողմն-կողմս-կողմակալ, քակն-քակ, անձն-
անձս, հարցումն-հարցում¹ և այլն:

Բերված բառերը (եթե դուրս հանենք գուցե սպրդած
մի քանի գրչագրական սխալները) ցույց են տալիս, որ
ն-ն սկսել է բառերի վերջից գեոևս շատ հնում՝ ընկնել-
Այժմ մեր գրական լեզվում այդ անկման պրոցեսը վերջա-

¹ Տես Ա. Այսերյան, «Քննական քերականություն», Նախաշավիղի-
էջ 73—74:

ցած պետք է համարել: Ն-ն հիշյալ բառերի մեջ վերահանգնած գտնում ենք բառակազմության և հոգնակիի մեջ. օրինակ՝ ձուկն-ձկներ-ձկնաբանություն, դուռն-դռներ-շունպան և այլն: Բայց բազմաթիվ դեպքերում այլևս ն-ն չի վերականգնվում. օրինակ՝ մաս-մասեր, կողմ-կողմեր, սերմ-սերմեր, բուրգ-բուրգեր, շուրթ-շուրթեր, ոսպ-ոսպեր, որդ-որդեր, անձ-անձեր (անձինք հին ձև է), ափ, ափեր, կաթ-կաթեր, հարս-հարսեր (հարսներ), ող-ողեր և այլն: Իսկ երկվանկների ու բազմավանկների հոգնակիի մեջ բոլորովին չի մնացել. օրինակ՝ կառափն-կառափներ, ամառն-ամառներ, նպուռն-նպուռներ և այլն: Այդպես էլ բառակազմության մեջ (եթե հին բառ չի և չի կազմվում հին համարանություն) արդեն ն-ն շատ դեպքերում չկա. օրինակ՝ բրգաձև, ձմեռային, ամառային, ասղաբուն, թիթեղագործ և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ն-ի անկումը այդ բառերի վերջից առաջ է բերել նաև ը-ի անկում: Բերված բառերը ն-ից առաջ ունեցել են ը ձայնավորը, որ երկար ժամանակ պահվել է ն-ի անկումից հետո և նույնիսկ խոսվածքների ազդեցությամբ թափանցել է նաև մեր գրական լեզուն. օրինակ՝ Դրա համար էլ ոչ լավ ձուկը բռնող էր (Թում., 3-րդ, 17): Մի անգամ գնում է ձուկը բռնելու (Նույն տեղում, 235): Հիմի ինչ ես մուկը դառել (Պ. Պոռյան, 2-րդ, 548), որոնց մեջ ը-ն որոշիչ հոդ չէ: Լուռ խոսվածքներում ն-ն դեռևս պահվել է հաջորդող ձայնավորից առաջ (օրական մի քանի ձուկն է աշխատում (Թում. 3-րդ, 158): Ձուկն է բռնում մոտակա գետից (Նույն տեղում, 17):

Բառավերջում մ-ից հետո ը-է առաջանում, որ կարելի է բացատրել շրթնային մ-ի ուժեղ պայթումով. իսկ շրթունքի ուժեղ պայթման արդյունքը մ-ի ձայնեղությունն է. օրինակ՝ բամ-բամ, դամ-դամ, բեմ-բեմ (բեմբասաց), պատշգամ-պատշգամ: Բարբառներում ա-ի առաջացում բառավերջում նկատվում է ա-ից հետո. օրինակ՝ կալպաստ, ամաստ, իսկ կրան բառի կրանք՝ դառնալը կտնթ բառի համարանության

արդյունք է. ինչպես՝ ոստ > ոստղ՝ կոնդ բառի համարանուն-
թյամբ:

Հայերենում բառավերջում նկատվում է նաև ձայնեղ-
ների խլացում. օրինակ՝ ածուղ դառնում է ածուխ, գազաղ
(մոխիր)՝ գազախ: Մանծաղ, չքնաղ, առաստաղ և նման շատ
բառերի վերջին դ-ի ձայնի թուլացում է նկատվում, եթե
համեմատում ենք ծանծաղուտ, չքնաղագեղ, առաստաղի
ձևերի հետ: Այդպես էլ հովազ, վարազ, ազգ և սրանց նման
շատ բառերի վերջին ձայնեղները գնում են դեպի խլա-
ցում:

31. Դ Ր Ա Փ Ո Խ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Բանավոր խոսքի մեջ շատ է տարածված հնչյունների
հտեառաջությունը. այսինքն՝ բառի առաջին հնչյունները
գնում են դեպի ետ, իսկ ետևի հնչյունները գալիս բռնում
են առաջինների տեղը, կամ ուղղակի ընկնում են դրան-
ցից առաջ: Սա բացատրվում է հոգեբանական այն երևույ-
թով, որ բառի ամբողջական մտապատկերացման մեջ եր-
բեմն վերջին հնչյունները ավելի շուտ են պատկերացվում,
քան հարկավոր է և հենց այդ պատճառով ընկնում են
մտապատկերացումից վրիպած հնչյուններից առաջ: Սա
պատահում է նաև գրելիս, բայց գրավոր խոսքի մեջ նման
անկանոնությունները ուղղվում են: Հաճախ լեզուներում
այդ դրափոխված ձևերը օրինականանում և դուրս են վա-
նում նախկին ուղիղ բառերը և կամ երբեմն էլ ստանում
են իմաստային տարբերակում: Այժմ գրավոր լեզուներում
գրա առաջը առնվում է, և անհնար է, որ այդպիսի վրի-
պումները օրինականացվեն. դրանք ենթակա են հասարակա-
կան ուժեղ կոնտրոլի և ընդհանրանալու ոչ մի հեռանկար
չունեն. մերժվում են նաև խոսվածքներում ձևավորված
գրափոխությունները:

Մեր գրական լեզվում դիտված գրափոխությունները
արդեն պատմական երևույթներ են. մի մասը գալիս է

հին գրավոր լեզվից, իսկ մի այլ մասը՝ բարբառներից։ Որոշ ձևեր արդեն գրական օրինականություն են ստացել, իսկ մնացածը գիտվում են իբրև բարբառային երևույթներ և գործածվում են արտահայտչական նկատառումներով։ Ընդունված դրափոխությունները կամ կիրառվում են իբրև բացառիկ իշխող ձևեր և կամ իրենց նախկին տարբերակի հետ ստացել են իմաստային առանձնակի արտահայտություններ։

Մեր գրական լեզվի կողմից ընդունված են հին և նոր հետևյալ դրափոխությունները. կրուկն-կրուկ, բերիւղ- (հուն. Βήρυλλος) > բիրեղ-բյուրեղ, կոպղեք-կոպպեք, կոպղել-կոպլել, խստոր-սխտոր, տարգալ-տրգալ-տգալ-դգալ-գգալ, արմուկն-արմուկն։

Դրափոխյամբ են կապվել մեր պատճառական բայերի եղակի հրամայական ձևերը. օրինակ՝ բարձրացրու <բարձրացոյր, մեծացոյր> մեծացրու և այլն։

Բարբառներում են առաջացել կապերտ-կարպետ, սպիտակ-սիպտակ, քիկն-քիմկ (Ոսկու գեղի վրա հանգիստ քիմկը տված. Թում., 3-րդ, 256), կնել (ընկճել)-նկել-նկվել, ձգել-զցել։

Մենք անտես ենք առնում այն երևույթները, որոնք մեր գրականության մեջ չեն ընդհանրացել. օրինակ՝ աղեղն-ալեղ, մարթ-մալթ, խամլ-մալուխ, անձրև-անձվեր և այլն, որոնցից շատերը բերված են լեզվաբանության գասագրեր-քերում։ Բացի այլուր գիտված բարբառային այդ ձևերից, կմատնանշելինք Ագուլիսի, Ղարաբաղի բարբառների մուկըն-մօկըն, ծուկըն-ծուկըն-ծուկըն և այլ նույնատիպ բառերի ձայնավորի ու բաղաձայնի դրափոխությունը։

Մեր հին լեզվում նկատելի է նաև անտիցիպացիայի երևույթը. օրինակ՝ մեքեմա (հուն. μετὰ) > մեքեմա, որտեղ վերջին ցնթուկ է առաջ և, սակայն, մնացել է նաև յուր տեղում սպառուր > սպրտուր (սպտոր), ոտիկ-տոտիկ, աղամանդ-անդամանդ։

32. ԱՌՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՄԻՄԻԼՅԱՅԻԱ)

Առնմանությունը հնչյունափոխական այն երևույթն է, որ միևնույն բառի մեջ իրար մոտ կամ հեռու տարբեր հնչյուններ մեկը մյուսի ազդեցությամբ բոլորովին նմանվում կամ որևէ առանձնահատկությամբ մոտենում են իրար: Հայերենում շատ հայտնի է և հնչյունի մ գառնալը շրթնային և պայթականից առաջ, օրինակ՝ անբարիշտ-ամբարիշտ, ամբիծ-ամբիծ (գրարարում), ցանպա-ցանբա-ցամբա-ցամբա, ընթռնել-ըմբռնել: Այս երևույթը առավել նկատելի է եսև հոլովման գործիականի մեջ, որտեղ բ-ից առաջ և-ն դառնում է մ. օրինակ՝ պետությամբ-պետությամբ, գիտությամբ-գիտությամբ, արյանբ-արյամբ: Առնմանությունը կարող է ընդգրկել բոլոր տեսակի հնչյունները, օրինակ՝ երախայ-երեխայ-երեխա, գոռելի-գոռոխ, էրգասիա-արգասիք: Առնմանության հետևանքով կարող է նոր հնչյուն առաջանալ, օրինակ՝ ոսկր-ոսկոր:

Առնմանության հետևանքով կարող են ձայնեղ հնչյունները խլանալ, սուղականները շշական դառնալ և հակառակը, արտաբերության տեղը փոխել և այլն: Ահա մի քանի օրինակներ ևս. աստիճան-աշտիճան (գրարարում և-ի ազդեցությամբ ս սուղականը դառնում է շ շշական), հրաժեստ > հրաժեշտ (յայտեղ էլ ժ շշականի ազդեցությամբ ս սուղականը դառնում է շ), փողովակ > խողովակ:

Առնմանությունը լինում է լրիվ և մասնակի. լրիվ է այն ժամանակ, երբ առնմանության ծիրում գտնված երկու տարբեր հնչյունները լրիվ նույնանում են, օրինակ՝ բոկիկ-բորիկ, իսկ մասնակի է, երբ հնչյունները որոշ հատկանիշներով մոտենում են իրար՝ չնույնանալով. օրինակ՝ ա-ն դառնում է շ՝ հրաժեշտ բառի մեջ մոտենալով Ժ-ին, բայց չնույնանալով: Մասնակիությունը կարող է լինել բոտ արտաբերման տեղի. օրինակ՝ շրթնային բ-ն առաջնայեղվային - առաջնային և-ի ազդեցությամբ փոխվում է շրթային մ-ի. անձամբ-անձամբ, ըստ հնչեղության. օրինակ՝ զբոզել-

սքողել, գփոփել-սփոփել և այլն: Ըստ արտաբերման եղանակի (շփականը դառնում է պայթական կամ հակառակը). օրինակ՝ փողովակ-խողովակ: Առնմանությունյան ժամանակ թե նախորդ հնչյունը կարող է ազդել հաջորդի վրա և թե հաջորդը՝ նախորդի. ըստ այսմ ստացվում է առաջընթաց և ետընթաց առնմանություն. օրինակ՝ ծանաշեմ-հանաշեմ ետընթաց է, իսկ երախտ-երեխա՝ առաջընթաց:

Առնմանությունը լեզվի հնչյունական սխառմի վերջնական ձևավորման մեջ մեծ դեր է կատարում: Հայերենը այս իմաստով դեռևս չի ուսումնասիրված, բայց դիտողությունները ցույց են տվել, որ, օրինակ՝ շ հնչյունին հաջորդում է խուլ տ բաղաձայն. աշտարակ, կոշտ, խոշտանգել, անշուշտ, կուշտ, փամփուշտ, դաշտ, հաշտ, պաշտպան, դաշտան, զավեշտ, պարկեշտ, ճիշտ, միշտ, նածիշտ, վիշտ, տաշտ և այլն. իսկ գ-ին հաջորդում է ձայնեղ. ազգ, ազղ, ազղր. ա-ին՝ խուլ. ասպարեզ, աստված, աստ, աստղ, աստիճան, աստառ և այլն: Գուցե այս նույն օրինաչափությունը, բայց անհասկանալի պատճառով կան ձայնավորներ, որոնց հաջորդում են միայն այս կամ այն բաղաձայնները. օրինակ՝ ի-ից հետո հայերենում գերազանցապես կամ խուլ կամ շնչեղ՝ խուլ պայթական է գալիս. օրինակ՝ առիթ, բլիթ՝ գավիթ, խրճիթ, մարգարիտ, կնճիթ, հավկիթ, վիթ, քիթ, փթիթ, անքթիթ, խիթ, զամբիկ, ծաղիկ, տիկ, զատիկ, մանկավիկ, տիպ, տտիպ, խրճիթ, սամիթ, շիթ, խիտ, ականակիտ, մանրակրկիտ, վճիտ, միա, ժպիտ, հտպիտ, ճշգրիտ և այլն, բայց ոչ մի անգամ իգ. իղ իբ, և այլն (պետք է նկատի առնել բառակազմական և հնչունափոխության երևույթները, որոնք կարող են ստեղծել տվյալ օրինաչափության հակադիր երևույթ): Սրան հակառակ հին է-ին հաջորդում է միշտ գ. օրինակ՝ ճեգ, եղեգ, տեգ, սեգ, վեգ, մեգ, իսկ ե-ին ք. օրինակ՝ մեքենա, թեք, երբեք, մեք (մեճք), երեք, ուրեք, ուստեք (լինում էր նաև է-ով) և այլն:

Առնմանության հետևանքով նկատվում են մի շարք այլ երևույթներ. օրինակ՝ տ-ից, ք-ից առաջ վ հնչվում է

ֆ. նաֆթ, աֆտո. դ-ն հնչվում է խ. պղտոր, ցաղամի, հաղթել. առհասարակ խուլ հնչյուններից առաջ դ>խ. օրինակ՝ քաղցր (հնչում ենք քախցր), քաղհան, շողք, շղթա, խիղն, խեղն արտասանում ենք քախան, շոխք, շխթա, խիխն, խեխն. այս երևույթը գրեթե ընդհանուր է, համեմատի՛ր կաղկանձ, պողպատ, գողտուկ, քաղց և այլն: Ուղտ, հակառակ սրանց երբեմն հնչվում է ուղղ՝ ուխտ բառի տարնամանությունով: Իսկ ն-ից և ր-ից հետո խուլերը ձայնեղանում են. օրինակ՝ ընկնել, ընկեր, բանա, խորամանկ, կոռնկ, մանն, երկինք, երկյուղ և ուրիշ շատ բառերի մեջ կ, ն, ա հնչում ենք իբրև ց, ջ, դ:

Եթե լեզվում չլինեն սրան հակադիր օրենքներ, ապա հիշյալ օրենքը կարող է սամոզջովին տարածվել բոլոր հնչյունների վրա՝ բոլոր դիրքերում, բայց սրան հակադիր է տարնամանության օրենքը, որին անցնում ենք հենց այժմ:

33. ՏԱՐՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ԴԻՍԻՄԻԼՅԱՑԻԱ)

Սա առնմանությանը միանգամայն հակադիր երևույթ է. նույն կամ որևէ հատկանիշով միմյանց մոտիկ հնչյունները ազդում են միմյանց և տարնամանվում. օրինակ՝ մեցամեց (ցեց) բառը գրաբարում դարձել է մեցամես, թոթոշ (մարմնեղ) բառը արաբատյան խոսվածքներում դարձել է թոփոշ-թրփոշ (նույն իմաստով), այսինքն՝ երկրորդ ք-ն առաջին ք-ի տարնամանությամբ դարձել է փ: Մղեղ հին բառը խոսվածքներում դարձել է մոեղ, շիճուկ>շիտուկ>շաուկ, աշտուն>աստուն, (Իս. 2-րդ, 88), այսինքն՝ շիճուկ բառի մեջ շ-ն դուրս է մղել ն-ի շ տարրը, որպեսզի տարնամանվի նրանից, իսկ աշտուն բառի մեջ ն-ն (իբրև ջ, ա հնչյունների ըզդագրություն) շ-ի տարնամանությամբ դարձել է ս: Տաշտակ (Մշո բարբառում տաշտագ) արաբատյան խոսվածքներում դառնում է տաշնակ. աղեղն բառի մեջ կատարվել է և՛ դրափոխություն, և՛ տարնամանություն. բարբառներում տվել է անեղ (հնարավոր է, որ պարզապես տար-

նմանում լինի, որովհետեւ բարբառներում սեռականը լինում է անեղան (անեղան լար): Սերեկ > սարեկ, ցերեկ > ցորեկ, շաղ-գամ > շողգամ: Ճարմամանություն օրենքով մեր գրական լեզ-վում ուլ, ուլկիտնոս, ուլսաննա բառերը չգարձան վով, վով-կիանոս, վովսաննա (որոշ բարբառներում այդ էլ կատարվել է):

Առնմանություն և տարնմանություն երևույթները չեն սահմանափակվում մի բառի շրջանակներում, այլև տեղի են ունենում հարեան բառերի մեջ, ավելի ճիշտ՝ իրար հետ հաճախակի գործածվող բառերի միջև, երբ բոլորովին տար-բեր ձևեր ունեցող բառերը որոշ հնչյունախմբերի նմանու-թյամբ մոտենում կամ նույնաձև բառերը հեռանում են իրարից: Սա կատարվում է ոչ միայն բառաձևերի, այլև քերականական ձևերի մեջ: Հարեան բառերի ու քերակա-նական ձևերի հետ կատարվող առնմանություն երևույթը կոչվում է համաբանություն (անալոգիա) և լեզվի ձևերի փոփոխության մեջ հսկայական դեր է կատարում: Գրաբա-րի ու խոնարհման լրիվ վերացումը մեր գրական լեզվից հետևանք է համաբանության: Ե խոնարհումը գերիշխող լինելով՝ բողնում, առնում, զբոսնում և սրանց նման բայերը դարձրել է բողնեմ (բողեմ), զբոսնեմ, առնեմ (սրանց համա-պատասխան նաև մյուս բայերը): Այստեղ համաբանու-թյունը հասել է իր լիակատար ավարտին: Թերեւս այս տե-սակի համաբանության տրվունք է գրաբարի ու խոնարհ-ման վերացումը, որ մնացել է միայն մի բայի մեջ: Համաբանության է ենթարկվել նաև հայերենի հոլովումը: Գրաբարի բաղմաձև հոլովման ենթարկվող բառերը համա-բանությամբ աշխարհաբարում հակվում են ենթարկվելու միասնական ի հոլովման, եթե եղակիում մնացել են գրա-բարի հոլովման տարրեր հետքերը, օրինակ՝ արյուն-արյան, գիտություն-գիտությամբ, ապա հոգնակիում այս էլ չկա: Այստեղ համաբանությունը նվաճել է բոլոր ձևերը, այսին-քն՝ ի հոլովումը միօրինակության է վերածել բոլոր հո-լովումները (բացառությունները այստեղ շատ սակավ են). դեռ չենք խոսում այն մասին, որ եզակիում տարրեր հո-

գրվում ունեցող բառերը այժմ արդեն սկսում են հոլովվել նաև ի-ով:

Գրաբարում սա, դա, նա ցուցականների բացառականն է սմանէ, դմանէ, նմանէ, որտեղ հնում ն-ն առաջացել է ա և է հնչյունների առաջացրած հորանջը գոցելու համար. մեր գրական լեզվում դրանց բացառականներն են՝ սքանից, դրանից, նրանից, որոնք առաջացել են նախորդ բացառականների համարանությամբ: Իհարկե այստեղ էլ հորանջը օգնել է գործին: Նույն համարանությամբ տարվա, օրվա, ժամանակվա ձևերից կազմված են տարվանից, օրվանից, ժամանակվանից բացառականները. սրանց վերադերձամբ կարող էին դեր խաղալ նաև աշնանից, գարնանից, ամռանից, ձմռանից կազմությունները: Նույն համարանությամբ կազմված են ինձանից, քեզանից, մեզանից, ձեզանից, որտեղ ա-ի սղումը այժմ օրինականացվում է:

Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք երկու ձև ունեն. ինչպես՝ մեքծիմ-մեքծեմամ, մօտիմ-մօտեմամ, յագիմ-յագեմամ և այլն: Հիշյալ բայերի համարանությամբ հետագայում կազմվեցին ուրիշ շատ բայեր՝ ի թիվս որոնց նաև՝ ուզեմ-ուզեմամ, արժեմ-արժեմամ, գիտեմ-գիտեմամ, ունեմ-ունեմամ, որոնց նորակազմ հավելյալը նոր ձևերը իմաստավորում են ստացել մեր ազգային լեզվում ճիշդ և պատմական, սովորության և կրկնության ներկա ու անցյալը:

Համարանության հետևանք են բարդ բառերի ոչ օրինաչափ ձևերը. օրինակ՝ դարևոր (փոխանակ դարավոր), հարկևոր¹, ծաղկեփունջ, հաշվետար, հաշվեալուքյուն և այլն, որոնք կազմված են հոգևոր, ուղևոր, այգեգործ և նույն օրինաչափության ենթակա այլ բառերի համարանությամբ. խոհ վերջին շարքից նախորդի օրինաչափական ձևերի ազդեցությամբ ունենք աղավաղվածառ, Աղավաղառուն, հայրենակցական (փոխանակ՝ հայրենեկցական, վայրենեքար և այլն): Իսկ դատավար բառը դատավոր է դարձել ավոր վերջավորվող մեծաքանակ բառերի ազդեցությամբ:

¹ Այժմ սխալ ստուգաբանությամբ գրվում է հարգևոր:

Համարանությանը հակադրվում է ձևաբանական տարնամանությանը, երբ զույգ բառերի նման ձևերը միմյանց ազդեցութեամբ տարնամանվում են: Այս երևույթը շատ լավ դրսևորվում է կրկնության մեջ, որտեղ կրկնության երկու եղբերը տարբեր ուղղութեամբ հնչյունափոխվում են. օրինակ՝ խար-խար>խարխուլ, խորդ ու խորդ>խորդուբորդ, բան-բան>բան-ման: Փոխվում է առաջին եզրը. օրինակ՝ թախ-թախ>թաթախ, բառ-բառ>բարբառ, թավալ-թավալ>ավալ-թավալ, փառոք-փառոք>առոք-փառոք և այլն: Նման փոփոխության ենթարկվում է նաև երկրորդ եզրը. օրինակ՝ փաթ-փաթ>փաթաթ, սա էլ տարնամանութեամբ՝ փաթոթ (Բաֆֆի, 3-րդ, 47): Այսպիսի տարնամանութեամբ երբեմն լեզվում առաջանում են նոր արմատներ. օրինակ՝ ուսար բառի առաջացումը պրոֆ. Գ. Հափանցյանը համարում է դուսար բառի կրկնության արդյունք: Այդ նույն ձևով առաջացել է բերձ արմատը բարձր բառից, իսկ բերձ արմատից նոր բառեր են կազմվում իմաստի ուժեղնությամբ. օրինակ՝ ամենաբերձ (Բս., 2-րդ, 85). նույն ձևով աղաչել-աղաչ-աղատ, արմատից առաջել է պաղատ ձևը (Աղատ-պաղատ մարիկը սև ծրկրորդ ձագն էլ ձգեց ներքև. Թում. 1-ին, 598), որից պաղատել: Հայերենում ունենք կոնգոմ, որ առաջացել է կոն բառի կրկնությամբ, համեմատիկ կոկոն:

Ձևաբանական առնմանության (համարանություն) և տարնամանության համար անհրաժեշտ են երկու հիմնական պայման. առաջին՝ դրանց ոլորտում ընկնող զույգ բառերը պետք է ձևական նմանություն ունենան որևէ մասով և երկրորդ՝ իրար հետ հաճախ պետք է գործածվեն. օրինակ՝ բարբառներում սեպտեմբերը զառնում է սեկտեմբեր, հոկտեմբեր բառի առնմանությամբ, հունվարը՝ հունրվար, փետրվար բառի առնմանությամբ, որովհետև դրանց մեջ տեմբեր և վար մասերը նույնն են, իսկ օգոստոս կամ մարտ բառերը ալգալիսի փոփոխություններ չեն կրում: Կամ՝ ցած դառնում է ցածր՝ բարձր բառի առնմանությամբ, որովհետև

նախ՝ իրար հետ հաճախ են գործածվում և հետո՝ ած, արձ մասերը որոշ հնչական նմանություն ունեն:

34. ԱՄՓՈՓՈՒՄ (ՀԱՊԼՈՂՈԳԻԱ)

Ամփոփումը տարնմանություն մի տեսակն է, որ բռնում է բուն տարնմանություն և ձևաբանական տարնմանություն միջին տեղը. մոտ է բուն տարնմանությունը նրանով, որ մի բառի մեջ է կատարվում երևույթը, բայց հետո է նրանից նրանով, որ նմանություն մի եղբւր բոլորովին վերանում է և տեղը տարնմանող ոչինչ չի բռնում. տարնմանությունը արտահայտվում է մի մասի ժխտումով. այս երևույթը նկատվում է նաև ձևաբանական տարնմանություն մեջ: Միևնույն բառի նույնանման երկու վանկերից (գուցե և ալել) մեկի վերացումը կոչվում է ամփոփում (հապլոլոգիա). օրինակ՝ կինամոմոն գառնում է կինամոն, մարաբաւան տալիս է մարաւան, աւաբաւակ՝ տաւրակ, լալական՝ լալան, օրորոցք՝ օրոցք, օրորան՝ օրրան, ապանաւանարան՝ ապաստարան, որկորամոլ՝ որկրամոլ: Հայտնի են աշխարհայացք (<աշխարհասայացք), տավարած (<տավարարած), հասարակարգ (<հասարակակարգ և այլն:

Ամփոփումը երբեմն առաջանում է հորանջից (ձայնավորների կուտակում, կակոֆոնիայից (բազաձայնների կուտակում). օրինակ՝ փեսայացու-փեսացու, կաթսայավար-կարսավար (Հ. Հակոբյան, 59), անձնանվեր-անձնվեր, ապակե-նկար-ապենկ ար (Բաֆֆի, 3, 157, 430), տապը-տար, հլուու-բլուու-հլութլու, շուկ այայիկ-շուկայիկ (Շիրվ., 4, 78), այցելելու-այցելու (եթե մի օր, անուշ ընկեր, գառ այցելու՞ իմ շիրմին (Թում., 1-ին, 118), արեղայություն-արեղություն: Ամփոփում կատարվում է նաև խիստ երկար բառերի մեջ. օրինակ՝ սպասաւարկել-սպասարկել, ծոր-ծորակ > ծոծորակ > ծոծրակ:

¹ Ձպեաք է կարծել՝ իբրև այցելու:

35. ԱՐՏԱԿԱՐԳ ՀՆՋՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ամփոփմանը իր բնույթով մոտենում է արտակարգ հնչյունափոխությունը. այստեղ արտասանական գյուղացման մոմենտի հետ գոյություն ունի և հոգեբանական մոմենտը. այսինքն՝ ձգտում բառը կամ նախադասությունը շուտ վերջացնելու, որովհետև երկարացումը ոչ մի նպատակ չունի, եթե բոլոր պայմանները կան նաև կրճատ արտաբերություն, ընկալման ու հասկացման համար: Այս հնչյունափոխությունը կատարվում է կոչական բառերի, հատուկ անունների, հաճախ կրկնվող բառերի ու նախադասությունների մեջ երբեմն այնպիսի չափերով, որ մի ամբողջ նախադասությունից կամ բաղմավանկ բառերից մնում է մի կամ երկու վանկ: Օրինակ՝ դրաբար աղաճացան մի՛ աւել: Նախադասությունը արտակարգ հնչյունափոխություն դարձել է աղցմի(p) նալբանդյանի գործածած հայտնի բառը. ես ինչ իմանամ՝ եսիմ, պետք է երբամ՝ աերբամ, այս երեկ՝ սերկ, ջրաղաց՝ ջաղաց, ջրհորդան՝ ջորդան: Շատ հաճախ խիստ փոփոխություն են ենթարկվում հատուկ անունները. օրինակ՝ Արիստակես-Արսատ, Շուշանիկ-Շուշիկ, Եղիսաբեթ-Եղիս-Եղսո և այլն: Սրանք մեծ մասամբ բարբառային են:

36. ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՖՈՒԿՍԷՏԻՄՈՂՈՒԹՅՈՒՆ)

Հաճախ լեզվում բառարմատները առանձին կամ բարդություն մեջ ենթարկվում են իմաստային խամրումի, այսինքն՝ բառը գործածվում է, բայց նրա իսկական նշանակությունը այլևս չի իմացվում, միայն է, կոնկրետությունից զուրկ. օրինակ՝ մեր խոսվածքում բուռ սպիտակ կապակցությունը գործածվում է միայն մազերի համար և բուռ սպիտակ տաշիվ հասկանում ենք մազերի մեջ այնքան է շատ սպիտակը, որ կարելի է բոով բռնել, մինչդեռ բուռ նշանակում է կիր: Բուռ նույնությունը պահվել է նրա համար, որ ձևական նույնություն կա իմաստը կորած բա-

ռի և այն բառի (բուռ(ն) միջև, որով ստուգարանվում է. եթե բուռ (ձեռքի) մի քիչ ձևական տարբերություն ունենար, բուռ սպիտակ կապակցության մեջ բուռ բառը անպայման կփոփոխվեր, ինչպես սր տեսնում ենք մի այլ օրինակում. գրաբարի լուցանել բայի լոյց արմատը ժողովուրդը այլևս չի հասկանում և նրազալոյց հին բառը դարձրել է նրազալոյս՝ լոյց (լոյց) արմատը ստուգարանելով լույս-ով: Մեր խոսվածքում երկաթի, պողպատի միացմանը ասում են եռ ալ, որ անշուշտ գրաբարի յեռ արմատն է (միացում). պիտի լիներ հեռ ալ, բայց կապելով եռալ բայի եռ արմատի հետ՝ փոխել են ձևը: Կասում (կասել) նշանակում է «կասնել, օրանք ծեծել»: Այդ արմատը չհասկանալով՝ ժողովուրդը կապել է կալ բառի հետ և բայը դարձրել է կալել. հափանական է, որ այս փոփոխությունը կատարված լինի գրականության մեջ, որ կարելի է կոչել կեղծ ստուգարանություն: Այդպիսի կեղծ ստուգարանություն արդյունք են արձագանգ բառի արձագանք, ցառք բառի ցատկ (մոռացկոտ, ամաչկոտ և նման բառերի պես այստեղ էլ՝ ցատկոտել-ցատկ), խաղալիկ բառի՝ խաղալիք գրությունները: Գրականության մեջ կատարված կեղծ ստուգարանության արդյունք կարելի է համարել զանցառություն բառի առաջացումը, որ սպասելի էր զանցարարություն՝ ամփոփումով՝ զանցարություն: Ուրեմն ժողովրդական ստուգարանություն միայն ժողովրդի մեջ չի լինում. գրականության միջոցով նույնպես տարածվում և օրինականացվում են այդ ստուգարանությունները, և դրա հետևանքով նաև՝ հընչյունափոխությունները:

37. ՁԱՅՆԴԱՐՁ ԵՎ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձայնդարձը ձայնավոր հնչյունի այնպիսի փոփոխությունն է, որով ստեղծվում են երկու տարբեր արմատներ, որոնք ժամանակին կարող են այնքան հեռանալ իրարից, որ այլևս չզգացվի նրանց միևնույն արմատից ձայնդար-

ձի միջոցով ստացված լինելը: Հնում ձայնդարձը կարևոր ձևաբանական միջոց էր հայերենում նոր բառեր ու քերականական ձևեր կազմելու համար, սակայն այժմ միայն այդ հին օրենքի առաջ բերած որոշ հետքերն են մնացել մեր լեզվում, որ այստեղ արձանագրվում են իբրև պատմական երևույթ: Ձայնդարձի արդյունք են համարվում քոր-քեր, չոր-չիր, գու-գաղջ, դեղ-դալար-դալձ, զիրկ-զուրկ, գելուկ-գալել (ոլորել)-գիլ, բահ-բինր-բիր, կնիք-կնունք, կշեռք-կշիռ, որոշ-ուրիշ, նշող-նշույլ, գաղ-գող, ռոռգել-առու, սար (օթեան)-ագանել, ժահ-ժեխ, փայլ-փաղ և այլն: Ինչպես տեսնում ենք, այստեղ ձայնդարձի միջոցով գոյացել են նոր բառեր ու արմատներ. բայց ձայնդարձով հնում ստեղծվում էին և հոլովաձևեր. օրինակ՝ շուն-շան, աուն-տան, գիւղ-գեղջ, քոյր-քեռ և այլն:

Այս նույն երևույթը տեղի է ունենում նաև բաղաձայնների մեջ, որ կոչվում է հերթագայություն. հայերենում հերթագայության օրինակներ են՝ փշուր-փստր, աուգանք-տուծել, առույգ-ում, սեպ-շեպ, աղծ-աղտ, պիղծ-պղտոր, արծել-հարգել, արև-արեգ, կով-կոզի, օր(եվան)-ագանել (հագնել), լեւ-թեկ (համեմատիւր գրաբար թեկն, ի թեկուէ (թեից), թիկ-նաթեկին): Հոլովական նշանակություն ունեն՝ հայր-հայր, մայր-մայր և այլն:

Եթե վերևում նկարագրված հերթագայության մեջ իմաստի առանձնացում չի գոյանում, այլ առանց որևէ հնչյունական օրինաչափության կամ իմաստի պահանջման մի բաղաձայնը պարզապես փոխարինվում է մի այլ պատահական բաղաձայնով, կոչվում է հնչյունների տարանցում. օրինակ՝ գրաբարում ունենք ժպիտ-ժմիտ (մեր խոսվածքում ժմտալ), թարախ-թարավ, կողոփ (կողով), մեր խոսվածքում՝ կոռոփ, բայց և կոլոփ. սպիտակ-սփվտակ, հրաման-հրամայել, ժայռ-ժաւո-ժոռատ, սայթ-սաւթ-սօթ (վերջին օրինակներում $y > u$), հավերժ-հավետ, ծունգ-ծուրք, տատանկ-տատաշ և այլն:

Գրեթե սույն հնչյունափոխությունը համասեռ են հընչյունների պարզացումն ու բարդացումը, որոնց շնորհիվ ստեղծվում են համագոյակից բառեր ու նոր արմատներ: Ինչպիսիք բոլոր հնչյունները չեն կարող միանալ իրար և գտնուել բարդ հնչյուններ. հայերենում, ինչպես տեսանք վերևում, առաջնալեզվային պայթականները միանում են առաջնալեզվային շփականների հետ և կազմում են բարդ հնչյուններ: Մեր լեզվում նկատվում են գեպքեր, երբ հիշյալ պայթականները և շփականները միեկնույն արմատի մեջ իրար մոտենալով միանում և կազմում են մի հնչյուն: Երբ այդ բառը առանձնանում է իր նախկին ձևից, կամ հակադիր սրան միեկնույն արմատի մեջ բարդ հնչյունը բաժանվում է իր բաղադրիչներին և գրանցից մեկը կորցնելով՝ առաջ է քերում մի նոր ձև: Կարող է պատահել նաև, որ պարզ հնչյունը թաղանթա ինքնուրույնաբար, այսինքն՝ առանց մյուս բաղադրիչի մոտեցման, Այս հարցի պարզաբանումը գծվարանում է նրանով, որ հաճախ հեշտ չի լինում որոշել՝ հինը պարզ ձևն է, թե բարդը. օրինակ՝ կարծում են, թե առաջնել արմատի մեջ ա պարզ պայթականը բարդացել ա-ով և ավել ծածանել բառը, իսկ տեսնք էլ սրան հակադիր ասում են, որ ծածանել բայի ծ բարդ հնչյունները պարզացել և ավել են մի կողմից առաջնել և մյուս կողմից առաջնել, ու այդպիսով լեզվի մեջ առաջ են եկել երեք համագոյակից ձևեր:

Ահա մի քանի օրինակներ հայերենից, որոնք պարզ ցույց են տալիս, որ հնում այդ օրենքը նույնպես գործել է: Փոխինդ-փոխինդ-խանդ-խանդ, պիղծ-պղտոք, խնդ-խեղձ-նեղձ, բուս-բուծել, մուս-մուծել, արա-արօս-արած, մերկածած-մերկատիտ, այտուստ-այտուց (ուռուցք<ուռեստ): Մեր խոսվածքում սարված բառից առաջացել է սարվաս և ապա տարնմանությունը՝ սարվազ (սարք ու սարվազ): Հայտնի են բարդացման և պարզացման հետևյալ օրինակները. թշվառ-շվառ, աղաշ-աղոքք, արտասուք-արքսուք-արցունք, *ծանաշ-ժանոթ, վաթսուկ-վացուկ: Խոսվածքներում ունենք պոյտ-

պունուր, կույտ-կունուրվել (հավաքվել իրար վրա): Վերե-
վում բերված աղաչ արմատը ոչ միայն տվել է աղոթք, այլև
աղատ-պաղատ: Ունենք հնուց-հնուր (Իս., 2-րդ, 141), մո-
րուց-մորուք և այլն:

Հայերենում դ, խ, չ, ց, ա, ջ, շ բաղաձայններից հետո
նկատում ենք նաև շնչեղ ք, ք հնչյունների պարզացում.
օրինակ՝ քաղիք բառի ք-ն մոտենալով դ-ին դառնում է կ.
թաղկել-թաղկում-թախել, աղքատ հնչում ենք իբրև ախ-
կատ, մեղք-մեխկ, սանդուղք-սանդուխկ, խաղք-խախկ, ուշք-
ուշկ, փեղք-փեխկ, նեղք-նեխկ, ծախք-ծախկ, հաղթել-հախտել,
գաղթել-գախտել, կմախք-կմախկ, ոտք-ոտկ, ճիտք-ճիտկ, աչք-
աչկ-աշկ, քաջք-քաշկ, գնացք-գնացկ, լվացք-լվացկ, ընթացք-
ընթացկ, անեծք-անեծկ, մեջք-մեջկ, վայրեջք-վայրեջկ և այլն:
Պետք է նշել, որ ք-ից առաջ դ, ջ, ձայնեղները խլանում
դառնում են խ, չ:

Շնչեղության կորուստի երևույթը նկատվում է նաև
արարատյան խոսվածքներում. օրինակ՝ զուգս հնչվում է
իբրև զուքս, իսկ գրափոխությամբ՝ զուսկ, զսկեղեն:

38. ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԸ

Հին լեզուներում միավանկ բառերը մի աճական վանկ
էին ստանում. Այս օրենքը պահպանվել է գրաբարի ան-
ցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի միավանկ ձևերի
մեջ. օրինակ՝ հատի, հատեր, բայց երրորդ դեմքը՝ եհաւ,
գաի, գտեր, եգիտ: Հազվագյուտ դեպքերում է խոնարհման
մյուս ձևերի մեջ բայը միավանկ մնում, իսկ եթե կա այդ-
պիսի դեպք, անպայման մի վանկ ավելանում է. օրինակ՝
եաու, եաուր, եա. և չի ստանում տուաք հոգնակի առաջին
դեմքը, իսկ երկրորդ և երրորդ դեմքերը դարձյալ ստանում
են. այսպես՝ եաուք, եաուն: Անաղան ավելանում է նաև
ապառնու դեպքում. օրինակ՝ եղից (կղնեմ, դնելու եմ): Սրա-
նից ելնելով մենք կարծում ենք, որ գուռն, եզն, կաքն,
ձեռն, ուռն և այլ միավանկ բառերի ըն առ, ին) աճա-

կանը հենց այդ միավանկության հետևանք է: Երկվանկների մեջ գրանց առաջացումը համարանության արդյունք է: Այս նույն բանը գիտվում է նաև բարբառներում: Հայագիտության մեծ երախտավոր պրոֆ. Հ. Աճառյանի տվյալներով Ղարաբաղի, Ագուլիսի բարբառներում ն-ն բառավերջում ավելացել է հետևյալ բառերին. բոռ, բորբոս, գորտ, գլեռ, թուզ, խեծ, ծուռ, կանկառ, հաղ, սինձ, աալ և այլն: Ոչ միայն միավանկ բառերը մի ամբողջ վանկ են ստանում, այլև որոշ հնչյուններ են ավելանում՝ վանկը դիմացիուն դարձնելու համար. օրինակ՝ մամ դառնում է մամն, նիգ՝ նինգ > լինգ, երի՝ ների, ոսա՝ ոսաղ (սա կոճղ բառի առնմանությամբ), փոթ՝ փոնթ և այլն:

Սրան հակադիր մենք վերևում նկարագրեցինք, որ գրաբարի այդ աճականները մեր գրական լեզվում գերազանցապես ընկել են: Աճականների անկումը սկսվել է բազմավանկ բառերից, ապա համարանությամբ ընդգրկել է նաև միավանկները: Բայց հենց այսօր էլ կան բառեր, որոնց այդ աճականներից չենք կարողանում աղատվել: Վերևում դրանցից բերեցինք, իսկ նրանցից մի քանիսը, որ ն-ն գցել են, այսօր էլ գեռևս ը-ն պահպանում են բանավոր խոսքի մեջ և նույնիսկ գրականում. օրինակ՝ դառը, խառը, սառը (նույնիսկ խորը). մեծ մասամբ այդպես են հնչվում յոթը (գրվում է յոթ), աառը, իննը, իսկ արարատյան շատ խոսվածքներում նաև վեցը, հինգը, ութը, բայց ոչ քսանը հոգի, հարյուրը հոգի և այլն:

Այս էլ սահնք, որ միավանկների աճումը բոլոր ժամանակների համար պարտադիր օրենք չէ: Ընդհակառակն, կան լեզուներ, որտեղ բազմավանկ բառերը մաշվում և վերածվում են միավանկների: Հնարավոր է, որ թե՛ մաշումը և թե՛ աճումը պայմանավորված լինեն այլ հնչյունական օրենքներով, որտեղ մի հնչյունի առաջացումը կամ մաշումը նման պայմաններում կարող է հիմք դառնալ այլ բառերի աճման կամ մաշումին: Հայտնի է, որ ն-ով և մի նախորդ բաղաձայնով վերջացող բառերից մի փոքրիկ մասի ն-ն

արմատական է. օրինակ՝ եօթն, ինն, տասն, եղն և այլն, լայց շատերը այն ն-ն հետագայում են ստացել և հետո էլ սկսվել է դրանց անկման պրոցեսը: Մենք վերևում նկատեցինք, որ ժ, ս, զ, և բաղաձայններից առաջ ընկնում է. բարբառներում այդ պրոցեսը ավելի է առաջ գնացել. օրինակ՝ շարժել-շածել-ժածել, մարգել-մազել-մածել, իսկ հենց այս օրենքին հակադիր թե՛ գրաբարում և թե՛ բարբառներում որոշ ժամանակ հենց այդ պայմաններում ր է գոյացել. օրինակ՝ դասել-դարսել, բաժին-բարժին, թռչակ-թորչակ, պատուհան-պատուրհան, նապատակ-լապատակ, հոսելի-հորսելի և այլն: Այնպես որ լեզվի մեջ ստանդարտ օրենք քարացած վիճակում գոյություն չունի. լեզվին հնչյունական օրենքը չէ, որ պարտադրում է իր այս կամ այն ուղղությունը ընթացող բացառություն չճանաչող կանոնը, այլ ընդհանրապես՝ այդ օրենքները բխում են լեզվի զարգացումից՝ ենթարկվում են ուրիշ հնչյունական օրենքների՝ կախված են ժամանակից և այլն:

39. ԲԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՏԱՄԻՆԱՅԻՆ)

Երկու տարբեր, լայց իմաստային մոտիկություն ունեցող բառերի բաղադրության հետևանքով (կոնտամինացիա) բառերն իրենց հնչյունական կերպարանքը փոխում են. օրինակ՝ լար և պարան բառերի բաղադրությունից ստացվել է լարան բառը. հետևն և լես (մանրել, հզկել) արմատները խառնվելով առաջ են բերել լեսան: Երևանի խոսվածքում ունենք կլենպ, որ առաջացել է կլեպ, կնեպ ձևերից:

40. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Հնչյունական մասնավոր փոփոխությունները հաճախ լեզվի մեջ ընդհանրանում և դառնում են ընդհանուր օրենք՝ տվյալ լեզվի որևէ ժամանակաշրջանի համար: Մասնավոր դեպքերի ընդհանրացած օրենք դառնալու համար պրոֆ. Էդ. Աղայանը նշում է հետևյալ պայմանները: Առաջին նախա-

պայմանն այն է, որ տվյալ մասնակի հնչյունափոխությունը լեզվում ունենա իր նման լեզվական հնչյունաբանական կապակցություններ, այսինքն՝ եթե հնչյունական մի որոշակի խմբի մեջ տեղի է ունենում փոփոխություն, կարող է տարածվել բոլոր բառերի այդ հնչյունախմբերին նմանվող հնչյունախմբերում: Երկրորդ պայմանն այն է, որ տրվյալ հնչյունափոխությունը անհատական բնույթ չկրի, այլ ունենա հասարակական բնույթ, այսինքն՝ տվյալ լեզվով խոսող բոլոր կամ գոնե գերակշռող մասի մոտ արտահայտվի այդ մասնակի փոփոխությունը: Երրորդ պայմանը պահանջում է, որ գրան հակադիր զարգացող որևէ հնչյունափոխական նոր երևույթ կամ գիտակցական միջամտություն տեղի չունենա: Այստեղ կարող է խանգարիչ գեր կատարել նաև բառիմաստը, բավական է, որ բառը փոփոխվելով նույնանա մի այլ բառի հետ, այդ փոփոխությունը տեղի չի ունենա, օրինակ՝ ա-ից առաջ այժմ մենք գրեթե դ-ն արտաբերում ենք իս, բայց ուղտ բառի մեջ հակառակն ենք տեսնում. դ-ն մնում է և ա-ն էլ արդեն սկսում է վերածվել դ-ի, որովհետև դ-ն իս դառնալով՝ կնույնանար ուխտ բառի հետ:

Ուրեմն՝ ի՞նչ բան է հնչյունական օրենքը. դա այնպիսի մի օրինաչափություն է, որ սկսում է մի մասնավոր հնչյունախմբի մեջ և վերահիշյալ հակադիր պայմանների բացակայությամբ տարածվում է այդ մասնավոր հնչյունախմբին նմանվող լեզվի բոլոր մյուս հնչյունախմբերում: Այս էլ անհրաժեշտ է նշել, որ հաճախ նման խմբերում փոփոխությունը կարող է սկսվել միաժամանակ, ույնպես որ դժվար է ցույց տալ, թե որ կոնկրետ խմբում սկսվեց, օրինակ՝ հայտնի է, որ գրաբարի առ հնչյունակապակցությունը բաղաձայնից առաջ փոխվեց օ-ի, բայց թե կոնկրետ որ բառի մեջ սկսվեց հիշյալ փոփոխությունը, դժվար է ասել. հնչյունական օրենքի ձևավորման համար դա երկրորդական է. հիմնականը այն է, որ այդ փոփոխությունը կատարվեց հայերենի բոլոր բառերի մեջ, բացառությամբ աղավնի և

նալք բառերի: Հնչյունական օրենքի այդ նվաճման ծիրից այս բառերի դուրս մնալը բացատրում են նրանով, որ իբրև թե աւ կապակցությունից հետո մի քէ եղել: Բայց սրա համար այլ պատճառ կնշենք: Աղավնի բառը չի դարձել աղօնի, որովհետև հնչյունական այդ օրենքի գործողության ժամանակաշրջանից առաջ հայերենի կենդանի խոսվածքներում տվյալ բառն արդեն բազմաթիվ փոփոխություններ էր կրել. ունենք աղունակ, աղունիկ, եղունիկ, եղունէկ, աղվընիգ, ըղօնի և այլն, ուստի այլևս տվյալ չկար աւ> անցման (որտեղ որ կար՝ անցումը եղել է): Արարատյան խոսվածքներում ոչ մի տեղ աղաւնի անվթար ձևը չի մնացել, եթե մնար՝ աւ> անցման շրջանում դառնալու էր աղօնի, իսկ աւ> փոխանցումը հիմնված է արարատյան բարբառի վրա և հին գրականության մեջ օրինականացվել է արարատյան կենդանի խոսվածքների տվյալներով: Ղարաբաղի և Ագուլիսի բարբառներում այդ փոխանցումը եղել է, բայց չի ընդհանրացել:

Եթե ը-ի պատճառով չկատարվեր փոփոխությունը, այն ժամանակ գոնե խոսվածքներում աւ ձևը պետք է պահպանվեր, բայց չկա: Աղավնի բառը մենք վերցրել ենք գրականության միջոցով: Ինչ վերաբերում է նալք բառին, դա արարատյան խոսվածքներում նոր փոխառություն է նալք ձևով, մինչդեռ կարծվում է, թե դա հին նալք ձևն է:

Ուրեմն՝ հնչյունական օրենքը համապարփակ մի երեվույթ չէ. բացի վերոհիշյալ պայմաններից, հնչյունական օրենքը ենթակա է ժամանակի և տեղի գործոններին: Պատահում է, որ հնչյունական տվյալ օրենքը որոշ ժամանակում և որոշ տեղում կանգ է առնում, և սկսում է զարգանալ դրան հակադիր մի այլ հնչյունական օրենք:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անթ.—Սովետական գրականություն անթոլոգիա, Երևան, 1951 թ.
2. Դ. Դ. Վ.—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1951 թ.
3. Թում.—Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հինգ հատորով, Երևան, 1940—1951 թ.թ.
4. Իս.—Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, չորս հատորով, Երևան, 1950—1951 թ.թ.
5. Մ. Ն.—Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1938—1950 թ.թ.
6. Մուր.—Մուրացյան, Երկերի ժողովածու, Երևան, 1951—1954 թ.թ.
7. Նար.—Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1938—1930 թ.թ.
8. Ն. Ձ.—Ն. Ձարյան, Երկեր, Երևան, 1945—1949 թ.թ.
9. Ն. Ձ. Հ.—Ն. Ձարյան, Հացավան, Երևան, 1947 թ.
10. Ն. Ձ. Ա.—Ն. Ձարյան, Արա Գեղեցիկ, Երևան, 1946 թ.
11. Շեքս.—Վ. Շեքսպիր, Ընտիր երկեր, Երևան, 1951 թ. (Երեք հատորով):
12. Շիրվ.—Շիրվանդադե, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950—1952 թ.թ.
13. Վ. Ան. Ս. Ա.—Վ. Անանյան, Սևանի ափին, Երևան, 1951 թ.
14. Բ.—Բաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1949—1950 թ.թ.
15. Հ. Հակոբյան,—Հակոբ Հակոբյան, Երկեր, Երևան, 1951 թ.

Յ Ա Ն Կ

Երկու խոսք

էջ

7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հնչյունների նկարագրությունը

1. Հնչյուն և հնչյունք	9
2. Արտասանական ապարատ	13
3. Հայերենի ձայնավորները և նրանց արտաբերությունը	17
4. Հայոց լեզվի բաղաձայնները	21
Ետնալեզվային պայթական բաղաձայններ	23
Ետնալեզվային շփական բաղաձայններ	24
Առաջնալեզվային պայթական բաղաձայններ	24
Առաջնալեզվային շփականներ	25
Շրթնային պայթական բաղաձայններ	25
Շրթնատամային շփականներ	29
5. Հայերենի ձայնորդները	26
6. Բարդ բաղաձայններ	29
7. Համադրական տախտակ հայերենի բաղաձայնների	31
8. Երկարբառներ	32
9. Հնչյունի ամանակը	34
10. Վանկ	39
11. Հայերենի շեշտը	57

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Շեշտի հետ կապված հնչյունափոխություն

12. Շեշտի ազդեցությունը հայերենի ձայնավորների վրա	64
13. Շեշտի ազդեցությամբ է, ի, ու ձայնավորների և եա, եայ, ոյ հին երկարբառների հնչյունափոխությունը	67
14. Ի ձայնավորի հնչյունափոխությունը	70

15.	Ի-ով շեշտակիլը վանկ ունեցող բազմավանկ բառերի հնչյունափոխութիւնը	76
16.	Ի-ով վերջացող բազմավանկ բառերի հնչյունափոխութիւնը	82
17.	Ու ձայնավորի հնչյունափոխութիւնը	85
18.	Ու ձայնավորի հնչյունափոխութիւնը երկու կողմից փակ միավանկ բառերի մեջ	87
19.	Ու ձայնավորի հնչյունափոխութիւնը հարաշեշտ և մի քանի ուրիշ բառերում	92
20.	Յա (եա, եայ), ույ, (ոյ), յու (իւ) հիւն երկբարբառների հնչյունափոխութիւնը	94
21.	Հայերենի մյուս ձայնավորների ու հիւն երկբարբառների հնչյունափոխութիւնը շեշտի ազդեցութիւնով	99
22.	Ա ձայնավորի սղումը	101
23.	Ե և Օ (օ) ձայնավորների սղումը շեշտից առաջ	110
24.	Ա հոդակապի սղումը	111

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Շեշտից առկալի հնչյունափոխութիւն

25.	Ընդհանուր կամ պատմական և փոխազդեցական հնչյունափոխութիւն	117
26.	Ձայնավորների հնչյունափոխութիւնը	119
27.	Բաղաձայնների հնչյունափոխութիւնը	127
28.	Հնչյունափոխութիւնը բառասկզբում	134
29.	Հնչյունափոխութիւնը բառամիջում	135
30.	Հնչյունափոխութիւնը բառավերջում	137
31.	Դրափոխութիւն	141
32.	Առնմանութիւն (ասիմիլյացիա)	143
33.	Տարնմանութիւն (դիսիմիլյացիա)	145
34.	Ամփոփում (հապլոլոգիա)	149
35.	Արտակարգ հնչյունափոխութիւն	150
36.	Ժողովրդական ստուգաբանութիւն (ֆոլկլէտիմոլոգիա)	150
37.	Ձայնդարձ և հերթագայութիւն	151
38.	Միավանկ բառերի հնչյունափոխութիւնը	154
39.	Բաղարկութիւն (կոնտամիւնացիա)	156
40.	Հնչյունական օրէնք	157
41.	Համառոտագրութիւններ	159

ՎԱՐԱԳ ԴԱՎԹԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵԶՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ»

Պատ. խմբագիր Ա. Ա. Աբրահամյան
 Հրատ. խմբագիր Էմ. Ա. Պիվադյան
 Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
 Վերստուգող սրբագրիչ Ա. Լ. Գորոյան

ԽՀԽ 311	Հրատ. 1227	Պատվեր 326	Տիրած 1500	ՎՖ 13730
---------	------------	------------	------------	----------

Հանձնված է արտադրության 19/IX 1955 թ., ստորագրված է տպագրության 17/XI 1955 թ., հրատ. 6,7 մամուլ, տպագրական 10¹/₈ մամուլ, Գինը 4 ռ., կազմը 2 ռ.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան, 124: